










ՀՐԱՀԱՆԳԻՔ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՂԶԿԱՆՑ







ՓԵՆԵԼՈՆԻ ԳԱՂՂԻԱՅԻՈՅ

ՀՐԱՀԱՆԳԻ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՂԶԿԱՆՑ



A  
857

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1850





Յ Ի Շ Ա Տ Ա Վ Է Ո Ւ Ի Ո Ց

Տ Ե Ա Ռ Ն Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Ի

Ե Ի Ե Ղ Բ Օ Ր Ն Ո Ր Ա

Պ Ա Ր Ո Ն Բ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր Ա Յ

Ն Ե Փ Ի Մ Ե Ա Ն Ց



## ՅԱՌԱՉԱԲԱՆ

Ազգի մը յառաջադիմութեանն ոչ եր-  
ջանկութեանը առաջին պատճառ՝ դաս-  
տիարակութիւնն ըլլալը քիչ շատ հաս-  
կըցած կ'երևնայ եսև մեր ազգը .  
փասն զի յայտնի է աճեցնելն որ ասկէջ  
հարիւր տարի առաջ ինչ որ էր ազգեր-  
նիս՝ հիմնայ նոյնը չէ : Սակայն կրնանք  
ըսել համարձակ թէ ան դաստիարա-  
կութեան սերն որ կ'երևցընեն մերունք ,  
հարկաւոր եղած շոտոյն նայելով՝ կայծ  
մըն է , որ բաշակասն չէ ազգին վրայէն  
խեղձութեանն ոչ ազիտութեանն քանձրա-  
մած խաւարը փարատելոն : Թէ որ  
կ'ոչգենք ազգին մէջ աս կայծը շատցը-  
նելն և յոյսը ընդ հանունը ծառայելն , պէտք



է որ աղջիկ տղոց դաստիարակութիւնը  
ժողովի մեջերնիս : Եւրոպայի մէջ ա-  
մենեւն թարեկիրք ազգերը սնունք են ,  
որ աղջիկ տղոց դաստիարակութեան  
սահրածեշտ հարկը ձանձցեր են ոչ ս-  
նոր վրայ մեծ փոշք ոչ խնամք ոչնիս :  
Եւ յիրաւի . վասն զի շատ սնգամ հօր  
մը տրոշած դաստիարակութիւնն ոչ  
կրթութիւնը իր քովը կը մնայ . իսկ  
մօր մը դաստիարակութիւնն ոչ կրթու-  
թիւնը իր տղոցը վրայ իբրև հայրի  
մէջ կը փայլի : Աղջիկ տղաքը պզտի-  
կոց կրթելը , սակեւ մէկ ազգատոհմի  
մէջ մէյմէկ դպրոց թանայ է : Չկայ  
մայր մը որ գրեւ կարդայ գիտնայ , և  
իր զաւկրները գրեւ կարդայ չգիտնան .  
մայր մը չկայ որ ինքը թարեկիրք ըլ-  
լայ , ոչ զաւակը սնկիրք : Մեր տաս-  
նըհինգ տասնըվեց տարեկան տղոց  
իր փարժասկետներէն սորված թաները ,  
Եւրոպայի մէջ հինգ վեց տարեկան  
տղաք տան մէջ առանց նկողութեան ոչ  
ժախքի իրենց մօրմէն կը սորվին : Ե-  
րասնի սնոր որ թարեկիրք մօր մը զա-



շակ գտնուելը ոչ ակնոր կարիքն հետ քա-  
րեկիրք դաստիարակութեան սկզբունք-  
ները ծծել է :

Մեր ազգը աղջիկ տղոց դաստիա-  
րակութեան օգուտները որչափ ալ քիչ  
ձանչցած կարծուի, սա յայտնի է որ  
աղջկանց համար քանի մը տեղ դպրոց-  
ներ բացուած է, անկեց 'ի զատ շատ  
մայրեր ալ կը փափաքին իրենց զաւ-  
կրներուն քարի դաստիարակութիւն  
տալու: Թէ որ քան մը կայ որ կը  
պակսի սա ոչրախական նշանները ա-  
ռելի կերպով մը պտղաբեր ընելու,  
հմուտ առաջնորդ մըն է. և. սիս ան  
առաջնորդը որ Եզրոպայի մարց ձեռքը  
կը պտրտի ամեն ատեն ոչ ակունց կը  
ցոցընէ դաստիարակութեան ձամբան,  
մեկը ալ մեր ազգին մարց ձեռքը կու-  
տանը: Աս առաջնորդն է Ֆեմեյունի  
Յաղապոս Դաստիարակութեան աղջ-  
կանց ըստած հռչակաւոր գրուածքը,  
որ հրաշայի ոճով մը կը տրվեցընէ  
մարց թէ ինչպէս պիտի կրթեն իրենց  
աղջիկ զաւկրները ակունց մատուտ հա-



ասկե ինչո՞ւսն չարահաստքեան ժա-  
մանակը, և թէ ինչ բաներէ զանկը  
սխառի գգոշացընեն: Յոչասկը որ սա-  
րևոտի գրոշածքը Գաղղիայ մէջ ոչ Եւ-  
րոպայի մեկայ կողմերը ինչ օգոշունկը  
որ ըրեր է, ևոյնը մեր սգգիւն մէջ սշ  
կ'ընէ, որ է մի միայն մեր փարսաքը:



Ի սաւեթ սիցո քաւ

աւճաւայ սիցո

կարո՞ւսք քաւ

քաւ՝ ճարտ-ճից,

ճեճարտ իճ

ն' իցրի.

ճարտաւայ սիցո ճարտի

ճարտաւայ — ճ

կարճից սիցո քաւ

Իւստի ճարտաւայ սիցո քաւ ճարտի





ԴՍՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա Ղ Զ Կ Ա Ն Ց

Գ Լ Ո Ւ Խ Ա

Թե որչափ հարկաւոր է աղջիկ տղոց  
դաստիարակութիւնը :

ԱՂԶԻԿ տղոց դաստիարակու  
թեան պէս երեսի վրայ ձգուած  
բան չկայ . ասոր մի միայն ու  
գլխաւոր պատճառն է սովորու  
թիւնն ու մարց նախապաշար  
մունքն որ մտքերնին դրած են



թէ աղջկանց գիտութիւն կամ  
 ուսում սորվեցընելը հարկաւոր  
 բան չէ: Ինդ հակառակն մանչ  
 տղոց դաստիարակութիւնը հա-  
 սարակաց բարւոյն համար՝ երևե-  
 լի գործողութեանց կարգը ան-  
 ցած է. և թէպէտ անոնց դաս-  
 տիարակութեան մէջ ալ շատ  
 սխալներ կ'ընեն մարդիկ, սա-  
 կայն գէթ մտքերնին դրած են  
 թէ զանոնք կրթելու համար  
 շատ գիտութիւն հարկաւոր է.  
 և շատ իմաստուն մարդիկ ջանա-  
 ցեր են աս բանիս մասնաւոր կա-  
 նոններ տալու: Արջափ վար-  
 ժապետներ ու դպրոցներ կան.  
 օրջափ ծախքեր կ'ըլլան գրքեր  
 տպելու, գիտութիւնները ծաղ-  
 կեցընելու, ուզած լեզուներն դիւ-  
 րին կերպով սորվեցընելու նոր  
 նոր ոճեր գտնելու և ընտիր վար-  
 ժապետներ բռնելու: Ալ թէ  
 պէտ շատ անգամ աս մեծամեծ



պատրաստութիւնները փուճ  
 կ'երթան և արդիւնք մըն ալ  
 չտեսնուիր, սակայն գէթ ասով  
 կ'իմացուի թէ մանչ տղոց դաս-  
 տիարակութեանը վրայ որչափ  
 հոգ կայ: Ասկ աղջիկ տղոց հա-  
 մար կ'ըսեն թէ ինչ պէտք է որ  
 անոնք գիտուն ըլլան. գիտու-  
 թիւնը զիրենք հետաքրքիր,  
 ընդունայնամիտ ու զարդասէր  
 կ'ընէ. բաւական է որ աղջիկնե-  
 ըր կարենան որ մը իրենց տունը  
 կառավարել, ու առանց խելք բա-  
 նեցընելու՝ իրենց էրկանը հնա-  
 զանդիլ: Աւ հաստատութեան  
 համար օրինակներ ալ կը բերեն  
 թէ որչափ կանայք իրենց գիտու-  
 թեամբը ուրիշներուն ծաղրելի  
 եղեր են. ասանկով իրաւունք կը  
 համարին կոյր զկուրայն թողուլ  
 աղջիկ տղաքը իրենց տգէտ ու  
 անխոհեմ մարց առաջնորդու-  
 թեանը:



Իրաւցրնէ վախնալու է որ չըւ  
 լայ թէ իրենց գիտութիւնը  
 գիրենք ծաղրելի ընէ : Այս որով  
 հետեւ սովորաբար կնիկ մարդիկ  
 էրիկ մարդկանցմէ աւելի տկա  
 րամիտ ու հետաքրքիր կ'ըլլան ,  
 ուստի պէտք չէ իրենց սորվեցը  
 նել այնպիսի գիտութիւններ ու  
 րով սկսին գոռոզանալ : Անայք  
 ոչ տէրութիւն պիտի կառավա  
 րեն , ոչ պատերազմ պիտի ընեն  
 և ոչ եկեղեցական սրբազան  
 պաշտօններու մէջ պիտի մտնեն .  
 ուստի հարկաւոր չըլլար իրենց  
 ընդարձակ տեղեկութիւն ունե  
 նալ քաղաքական կառավարու  
 թէ , պատերազմական արուես  
 տի , իրաւագիտութեան , փիլի  
 սոփայութեան և աստուածաբա  
 նութեան վրայ : Մեքենական  
 արուեստներուն ալ ամէն մասե  
 ըր հարկաւոր չեն ըլլար իրենց ,  
 որովհետեւ իրենք այնպիսի աշ



խառու թեանց համար եղած են՝  
 որոնց չափաւոր ոյժ պէտք է :  
 Աննանց մարմինը, ինչպէս նաև  
 իրենց միտքը, էրիկ մարդկանց  
 չափ զօրաւոր ու դիմացկուն չե-  
 անոր տեղը բնութիւնը իրենց  
 սուած է ձեռքի ճարտարու-  
 թիւն, մաքրասիրութիւն ու  
 տնական բաները հողալու յար-  
 մարութիւն, որպէս զի հան-  
 դարտութեամբ իրենց տանը  
 մէջ նստած՝ ան բաներնուն հետ  
 ըլլան :

Նայց ի՞նչ կ'ելլէ կանանց բնա-  
 կան տկարութենէն : Արչափ որ  
 տկար են իրենք, այնչափ ալ ա-  
 լելի զօրանալու կարօտ են : Մի  
 թէ իրենք ալ կատարելու պարտ-  
 քեր չունին, նաև այնպիսի  
 պարտքեր՝ որոնց վրայ հաստա-  
 տուած է բոլոր մարդկային կեան-  
 քը : Միթէ տները կործանող  
 կամ հաստատուն պահողը կա-



նայք չեն : Իրենք չեն որ տնա-  
 կան ամէն պղտիկ բաներն ալ կը  
 հոգան ու կը կարգաւորեն, որով  
 բոլոր մարդկու թեան պատշաճ  
 եղած բաները անմիջապէս որո-  
 շողներն իրենք են : Ասկէց է որ  
 գրեթէ բոլոր մարդկանց բարի-  
 կամ չար սովորութեանց պատ-  
 ճառ կանայք կ'ըլլան : Անկ խե-  
 լացի, ժրագլուխ, բարեպաշտ կին  
 մը բոլոր մեծ տան մը հոգին է .  
 ան տանը մէջ ինքն է թէ ժա-  
 մանակաւոր և թէ հոգւոր բա-  
 րեաց համար հարկաւոր եղած  
 բաները կարգաւորողն ու հոգա-  
 ցողը : Ան էրիկ մարդիկն ալ որ  
 ամէն իշխանութիւն ունին հա-  
 սարակաց առջւեր, չեն կրնար ի-  
 րենք իրենց խորհրդովը իրական  
 մէկ բարիք մը 'ի գործ դնել ա-  
 ռանց կանանց օգնականութիւր :  
 Աշխարհս շուք կամ երազ  
 մը չէ . հասլա բոլոր ազգատոհմ



ներու, տներու ժողով է. և  
 կանանցմէ զատ ո՛վ կրնայ ա-  
 ւելի ջանքով մը զասոնք բա-  
 րեկարգել. վասն զի կանայք ի-  
 րենց բնական երկայնամտու-  
 թենէն ու իրենց տանը մէջ ունե-  
 ցած իշխանու թենէն զատ ուրիշ  
 առաւելու թիւն մըն ալ ունին, որ  
 բնու թեամբ փու թաջան ու մանր  
 բաներու ալ ուշադիր են, ձեռ-  
 քերնէն ամէն ճարտարու թիւն  
 կուգայ ու ամենուն ալ աչքը կը  
 մտնեն: Անկէց ՚ի զատ, էրիկ  
 մարդիկ բոլոր իրենց կենացը  
 մէջ ի՞նչ քաղցրու թիւն գտնելու  
 յոյս կ'ունենան՝ երբոր մէյմը ի-  
 րենց ամուսնու թեան քաղցր ըն-  
 կերու թիւնը դառնանայ: Ասկ  
 տղաք որ մեծնալով բոլոր մարդ-  
 կու թիւնը պիտի ձեացրնեն,  
 ի՞նչ կ'ըլլան արդեօք թէ որ  
 մայրերը զանոնք պզտիկուց փճա-  
 ցրնեն:



Միայն ուրեմն ասոնք են կա-  
 նանց ընելու բաներն, որ հար-  
 կաւորութեան կողմանէ էրիկ  
 մարդկանց ըրածներէն վար չեն  
 մնար, որովհետեւ իրենց գործն է  
 տներնին կառավարել, էրիկնին  
 երջանիկ ընել ու տղաքնին աղէկ  
 կրթելով մեծցրնել: Մուաքիմու-  
 թիւնն ալ ըսես նէ՛ կանանց քով  
 նոյնպէս պիտի գտնուի, ինչպէս  
 էրիկ մարդկանց քով. թողունք  
 անիկայ թէ ասոնք ինչ բարիք  
 կամ ինչ վնաս կրնան ընել հասա-  
 ըրակաց, սակայն իրենք ալ մարդ-  
 կութի կէսն են, Վսի արեամբ  
 բը գնուած և յաւիտենական  
 կենաց համար սահմանուած:

Ս երջապէս աս ալ մտածելու  
 է որ կանայք այնչափ բարիքներէ  
 զատ որ կրնան ընել երբոր աղէկ  
 կրթուին, նաև որչափ չարեաց  
 պատճառ կ'ըլլան աշխարհիս մէջ,  
 երբոր առաքիմութեան ու աղէկ




դաստիարակութեան սկզբունքները չունենան: Ասոր տարակույս չկայ որ կնիկ մարդկանց գէշ դաստիարակութիւնը էրիկ մարդկանց անկրթութեանէն աւելի մնասակար է. վասն զի շատ անգամ էրիկ մարդկանց անկարգութեանցը պատճառ իրենց մօրը տուած գէշ դաստիարակութիւնն է, մէյժմըն ալ անկիրքերը՝ որ ուրիշ կանայք անոնց պատանեկութեան ատենը մշտքերնին տպաւորեր են:

158

Պատմութիւն կարդալու ատեննիս որչափ դաւաճանութիւններ, քանի՛ քանի օրէնքներու և բարուց խանգարմունք, որչափ արիւնասէղ պատերազմներ, քանի՛ նորաձեւութիւններ հաւատոյ մէջ, որչափ տէրութեան դէմ ապստամբութիւններ կանանց անկարգութեամբը եղած կը տեսնենք: (Նուր աս

2\*





բաներէս յայտնի կը տեսնուի  
 թէ որչափ հարկաւոր է որ աղ-  
 ջիկ տղաք աղէկ կը թուին . տես-  
 նենք ուրեմն թէ ասոր միջոցնե-  
 րը որոնք են :

ԳԼՈՒԽ Բ .

Սոսորական դատարարականց  
 մասնակերը :

Աղջիկ տղու մը ճանաչու-  
 թեան գլխաւոր պատճառը տղի-  
 սու թիւնն է , որով չգիտեր թէ  
 անմեղու թեամբ ինչ բանի հետ  
 դբաղի : Արբոր բաւական տա-  
 ըիքը առաջ կ'երթայ ու ինքը  
 գեռ մէկ մասնաւոր հաստատուն  
 բանի մը ետեւէ չըլլար , ալ անկէց  
 վերջը ուղենայ նէ ալ չկրնար ըլ-  
 լալ . վասն զի ախորժակն ալ կ'եր-  
 թայ , համարմունքն ալ կը կոր-  
 արնցընէ այնպիսի բաներու վրայ .



էն : Անկէց ետքը ամէն տեսակ  
 ծանրակացութիւն իրեն տխուր  
 բաներ կ'երևնան , ամէն բան ու  
 ղուն վրայ միակերպ ուշադրու  
 թիւն մը պէտք ըլլայ ընել զինքը  
 կրնեղեն . հեշտութեանց յօ  
 ժարութիւնը սրտին մէջ զօրա  
 նալով , որ սաստիկ կ'ըլլայ երի  
 տասարդութեան ատեն , ու  
 իրենք զիրենք զուարճութեանց  
 տուած հասակակիցներուն օրի  
 նակն ալ տեսնելով կը սկսի վախ  
 նալ , ու բարեկարգ և աշխատա  
 սէր կենաց և ոչ անունը կ'ուզէ  
 լսել : Այնպիսին իրեն տղայու  
 թեան ատենը անփորձ ըլլալով ու  
 ձեռքէն ալ բան մը չգալով , չկը  
 նար գործք մը տեսնել իր ծնո  
 ղացը տունը . սորվելու ալ ետեւէ  
 ջրլար՝ ինչուան որ մայրը հոգ  
 չտանի ու ձեռքէն բռնած իրեն  
 ամէն բան մէկիկ մէկիկ չցուցը  
 նէ : Թէ որ հարուստի զաւակ



է՛ ձեռագործէ ազատ կ'ըլլայ, ու  
 օրուան մէջ հազիւ մէկ քանի  
 ժամ կ'աշխատի, ան ալ անօր  
 համար կ'ընէ որովհետեւ ուրիշ  
 ները կ'ըսեն, առանց պատճառը  
 գիտնալու թէ կնիկ մարդկանց  
 շատ վայելուչ բան է քիչ մը աշ-  
 խատիլ. բայց ասիկայ բռնական  
 աշխատանք մը ըլլալով, ան աղ-  
 ջիկը ոչ երբէք կրնալ վարժիլ  
 միակերպ աշխատու թեան մը:

Նսանկով ինչ կրնայ ընել այն  
 պիսին: Սուգեր ամենեւին մօրը  
 քով կենալ, վասն զի գիտէ թէ  
 անիկայ զինքը ուղղել ուզելով  
 բանի մը չի խնայեր, կը յանդի-  
 մանէ զինքը, ուզածը ընել կու-  
 տայ իրեն, ու տնական բաներու  
 մէջ կ'աշխատցընէ. ուստի շո-  
 ղումարար կանանց քովը կ'ուզէ  
 նստիլ, որոնք իրեն հաճոյ ըլլալ  
 ուզելով՝ ցած ու վնասակար մար-  
 դահաճութիւններով իր ամէն



կամքը կը կատարեն ու միշտ իր  
 ուզած բաներուն վրայ կը խօսին.  
 աստուած պաշտու թիւնը իրեն  
 երկրորդական գործք մը կը դառ  
 նայ, ու մէկ կանոն մը որ իր ամէն  
 հաճոյիցը թշնամի է: Ասանկով  
 ի՞նչ բանի ետեւէ կ'ըլլայ. բոլոր  
 րովին անօգուտ բաներու: Աւ  
 աս անհոգութիւնը երթալով կը  
 տիրէ վրան ու անուղղելի սովո  
 րութիւն մը կը դառնայ իրեն:

Ասիկայ այնպիսի դատարկու  
 թիւն մըն է որ ասոր գոյացա  
 կան բաներով լեցուիլը մարդուս  
 անկարելի կ'երևնայ. հասար  
 պէտք է որ շնչին բաներով լե  
 ցուի: Այնպիսի անգործու  
 թեան մէջ ի՞նչ պիտի ընէ աղջիկ  
 տղայ մը. ինքզինքը բոլորովին  
 ծուլութե կուտայ, և ծուլութիւ  
 նը որ հոգւոյ տկարութիւն մըն է  
 իրեն անսպառ աղբիւր մը կ'ըլ  
 լայ ձանձրութեան: Առողջու



Թեանը համար հարկաւոր եղած  
 քունէն շատ աւելի կը սկսի  
 քնանալ. ան չափազանց քնով  
 կը թուլնայ, կը փափկանայ ու  
 մարմնոյ ամէն հաճոյիցը դիւրան-  
 սաց կ'ըլլայ. ուր ընդ հակա-  
 ոակն չափաւոր քունը բարե-  
 կարգ շարժման հետ մէկտեղ  
 մարդս զուարթ, ուժով ու ա-  
 ոողջ կը պահէ. ասոնք մարմնոյ  
 վրայ միայն տեսնուած կատա-  
 ընելութիւններն են, հասպա ո՞ւր  
 թողունք մտքին վրայ ալ եղած  
 օգուտները: Այս մեղկութիւնը  
 և աս անգործութիւնը տգի-  
 տութեան հետ միանալով, աղ-  
 ջիկ տղուն սրտին մէջ սաստիկ  
 սէր մը կը ձգեն զբօսանքի ու  
 տեսարաններու. նոյնը պատճառ  
 կ'ըլլայ նաև անխոհեմ և ան-  
 կուշտ հետաքրքրութեան:

Սովորաբար կը թուած ու բանի  
 գործի տէր անձանց հետաքրքր-



քրու թիւ չափաւոր կ'ըլլայ . շատ  
 բան գիտնալով՝ շատ բան ալ ար-  
 համարհելով չեն ուզեր սոր-  
 վիլ . անօգուտ ու ծաղրական բա-  
 ներ սորվելու ետեւէ չեն ըլլար՝  
 որ պզտիկ խելքի տէր ու ազէտ  
 անձինքներէն ոմանք մեծ ջան-  
 քով կը սորվին : Կնդ հակառակն  
 անկիրթ ու անփորձ աղջկանց  
 միտքը միշտ թափառական աս-  
 դիս անդին կը պտըտի : Հետա-  
 քըքրուինին հաստատուն սնունդ  
 մը չունենալով՝ ընդունայն ու  
 վտանգաւոր բաներու ետեւէ կ'ըլ-  
 լայ : Անջերնէն քիչ մը խելք  
 ունեցողները իրենք զիրենք մեծ  
 մարդու տեղ կը դնեն, ու կը սկսին  
 իրենց թեթեամտութիւն սնու-  
 ցանող գրքեր կարդալ . սաստիկ  
 սէր կը ձգեն վիպասանութեանց,  
 կատակերգութիւններու ու շին-  
 ծու առասպելներու, որ ըստ մե-  
 ծի մասին անմաքուր սիրոյ վրայ



կ'ըլլան : Մնկեց վերջը այն  
 շինծու պատմութեանց մէջի  
 դիւցազանց փառաւոր լեզուին  
 ու խօսակցութիւններուն հե-  
 տեւելով՝ կը սկսին իրենք ալ ա-  
 նոնց պէս երազներ տեսնել ու  
 խօսիլ, որով աշխարհիս համար  
 ալ անօգուտ անձինք կ'ըլլան .  
 վասն զի այն անհիմն գեղեցիկ  
 զգացմունքները , այն ազնուա-  
 կան կրքերն՝ ու վիպասանին  
 կարդացողները զուարճացրնելու  
 համար հնարած դիպուածները ,  
 աշխարհիս վրայ իրօք հանդի-  
 պած բաներուն հետ ամենեւին  
 վերաբերութիւն մը չունենա-  
 լով՝ իրենք ալ ոչ երբեք բան կը  
 սորվին ու մարդ կ'ըլլան :

Եւեղձ ազջկան միտքը այն  
 գողտր ու զարմանալի բաներով  
 լեցուած՝ որոնց վրայ կարդալու  
 ատեն զմայլեր է , կը զարմանայ ,  
 կ'ապշի չգտնելով աշխարհիս



Մէջ այնպիսի մարդիկ որ բու-  
 լորովին նման ըլլան իր կարգա-  
 ցած դիւցազանցը . կը սկսի փա-  
 փաքիլ որ ինքն ալ ան երեւա-  
 կայեալ իշխանութիւններուն պէս  
 ապրի որ վիպասանութեանց  
 Մէջ միշտ սիրելի , յարգելի ու  
 ամէն բանի անկարօտ կ'ըլլան :  
 Ի՞նչ սրտով կրնայ ինքը թողուլ  
 իր գտած դիւցազնութիւնը , ու  
 դառնալ տնական բաներու ձեռք  
 զարնել :

Ոմանք ալ իրենց հետաքրք-  
 րութիւնը աւելի առաջ տանել-  
 ով կը խառնուին նաև կրօն-  
 քի վերաբերեալ բաներուն , և  
 անոնց վրայ կը սկսին վճիռներ  
 տալ՝ թէպէտ և ամենեւին կա-  
 րողութիւն չունենան : Ոմանք  
 ալ որ այնչափ խելք չունին աս  
 տեսակ բաներու հետաքրքրու-  
 թիւն ընելու , ուրիշ բանի հե-  
 տաքրքիր կ'ըլլան . ի՞նչ որ կ'ը-



սուի, ինչ կ'ըլլուի՝ սաստիկ կը  
 փափաքին իմանալ, երգ մը ըլլայ,  
 լուր մը, դաւաճանութիւն մը,  
 ինչ և իցէ բան ըլլայ. կ'ուզեն  
 նաև որ մէկը մէկալը իրենց  
 թղթեր գրեն, ուրիշներուն  
 գրուածները կարդան. կը բաղ-  
 ձան որ ամէն բան իրենց ըսուի,  
 ու իրենք ալ ամէն բան ըսեն.  
 սնափառ են, և աս սնափառու-  
 թիւնը շատ բան ըսել կուտայ  
 իրենց. թեթևամիտ ալ են այս-  
 պիսիները, որ եթէ առաջագրե-  
 լու ալ ըլլան լուութիւն պահե-  
 լու՝ թեթևամտութիւնը թող  
 չտար իրենց:



ԳԼՈՒԽ Գ.

Դաստիարակութեան առաջին հի-  
մունքը որոնք են :

Այ ամէն չարեաց դարման  
ընելու համար պէտք է որ աղ-  
ջիկ տղոց դաստիարակութիւնը  
ըստ կարի պղտիկուց սկսի :  
Այլ թէ որ պղտիկուց անխոհեմ  
երբեմն ալ անկարգ կանանց ձեռ-  
քը թողուին , ամէն բան անոնց  
վրայ խորունկ տպաւորութիւն  
կ'ընէ ու գրեթէ բոլոր կեանքեր  
նուն մէջ մտքերնէն չելեն :

Տղաքը դեռ աղէկ մը լեզու  
չելած՝ սկսելու է զանոնք կրը-  
թել : (Թերեւս չափազանց երե-  
նայ ոմանց ըսածս . բայց աղէկ  
կ'ըլլայ որ մէյմը լեզու չելած  
տղուն ըրած գործողութիւնները



մտածեն, որ ինչպէս շուտով կը  
սորվի լեզու մը ու այնպէս աղէկ  
ալ կը սկսի խօսիլ, որ խելացի  
մարդիկ իրենց հասուն խելքովն  
ու շատ աշխատութեամբ սոր-  
ված հին լեզուները այնպէս չեն  
կրնար խօսիլ: Բայց լեզու սոր-  
վելը ինչ բան է: Սուրբն ( )  
գոստինոս՝ կ'ըսէ թէ լեզու սոր-  
վելը բառեր սորվելով յիշողու-  
թեամբ միայն չըլլար. հապա  
պէտք է, կ'ըսէ, նաև իւրաքանչիւր  
բառերուն առանձին նշանակու-  
թիւնը դիտել: Տղան, կ'ըսէ, իր  
պոռալուն ու խաղերուն մէջը կը  
դիտէ թէ իւրաքանչիւր բառ ո՞ր  
բանին նշանն է, և աս դիտողու-  
թիւնը երբեմն մարմնոց բնական  
շարժմունքը մտածելով կ'ընէ որ  
իրեն կը դաչին, կամ թէ ո՞ր բա-  
նին վրայ որ կը խօսին՝ զանոնք

1 Խոստով. Գեղք Ա. ԳԼ. Է:



կը ցուցընեն . երբեմն ալ նոյն բա-  
 նը նշանակող բառը շատ անգամ  
 լսելով : Արաւցընէ տղոց ըղէղին  
 կազմութիւնը շատ կը դիւրա-  
 ցընէ աս ամէն գաղափարները  
 մտքերնուն մէջ տպաւորելու ,  
 բայց սակայն որչափ ուշադրու-  
 թիւն ու մտաց արթնութիւն  
 պէտք է զանոնք որոշելու ու իւ-  
 րաքանչիւրը իր առարկային հետ  
 յարմարցընելու :

Այս ալ մտածէ թէ ինչպէս  
 տղաք իրենց պզտիկութեան ա-  
 տենէն , երբոր մէկը հետերնին  
 քաղցրութեամբ վարուի՝ զանի-  
 կայ կ'ուզեն , իսկ ով որ վրանին  
 բռնութիւն մը կ'ընէ՝ անկէց  
 կը խորշին կը փախչին . ինչպէս  
 գիտեն թէ ուզած բաներնին  
 առնելու համար երբ պէտք է  
 պոռալ կանչել և երբ ձայն հա-  
 նել , և ուրիշ ինչ վարպետութիւն  
 ու նախանձներ ունին : Տեսայ ,



կ'ըսէ՝ սուրբն ( ) գոսատինոս ,  
 մէկ նախանձոտ տղայ մը որ դեռ  
 լեզու ալ չէր ելած , ինչպէս ե-  
 րեսին գոյնը նետած ու աչքերը  
 կրակ դարձած կը նայէր հետը  
 մէկտեղ կաթ ծծող տղուն վրայ :  
 Արեմն ասանկ պզտիկու-  
 թեան մէջ ալ տղաք մարդուս  
 կարծածէն աւելի բան գիտէն .  
 անանկ է նէ կրնաս զանազան  
 խօսքերով ու շարժուածքներով  
 իրենց վրայ անանկ յօժարութի  
 մը ձգել՝ որ տեսած համեստ  
 ու առաքինի մարդկանց հետ  
 աւելի ուզենան կենալ , բան թէ  
 անխելք մարդկանց հետ՝ որոնց  
 վրայ աւելի դիւրաւ ալ կրնան  
 սէր ձգել . ուստի կրնաս դէմքդ  
 այլայլելով ու ձայնիդ եղանակը  
 փոխելով ձեացընել իրենց թէ  
 բարկացած և կամ ուրիշ ո՞ր և



իցէ անկարգութեան մէջ եղած  
մարդիկը ինչպէս կ'ընեն, ու ա-  
նոնցմէ զգուեցրնել զիրենք. ետ-  
քը ձայնիդ եղանակը անուշցրնե-  
լով, երեսդ զուարթացրնելով ու  
զարմանալով սկսիս ձեացրնել ի-  
րենց տեսած խելացի ու համեստ  
մարդկանց գործքերը :

Եւ մըսեր որ աս մանր բանե-  
րը մեծերուն ալ ըլլուին, սա-  
կայն ասոնք անանկ նախակրթա-  
կան սկզբունքներ են, որ ամե-  
նեւին պէտք չէ զանց ընել. և  
տղաքը պզտիկուց ասանկ հեռա-  
ւոր բաներով զգուշացրնելը ան-  
կարծելի հետեւանքներ կ'ունե-  
նան, որ շատ կը դիւրացրնեն  
դաստիարակութիւնը :

Թէ որ մէկը տարակուսի թէ  
արդեօք տղայական նախապա-  
շարմունքները տղոց մեծնալէն  
վերջն ալ իրենց վրայ կ'երևնան  
թէ չէ, թող մէյմը իր վրայ նայի



թէ արչափ տղայու թեան ատեն  
 սիրած բաներուն յիշատակը  
 դեռ կենդանի են՝ նաև տարիքը  
 առած ժամանակը : (Թ) Ե որ տղա  
 քը փոխանակ սուտ խալը լինե  
 րով, ուրուականներով վախցընե  
 լու, որով փափուկ ուղեղնին ալ  
 սաստիկ ցնցմամբ այլայլելով  
 կը տկարանայ, թէ որ փոխանակ  
 թողլու զանոնք որ իրենց դայե  
 կացը խելքին փչած ամէն բա  
 ներուն հետևին, անոնց սիրածը  
 սիրեն և ատածը ատեն, ջանա  
 լու ըլլային միշտ անոնց սիրե  
 լի ընել բարին՝ ու չարը ատե  
 լի, վերջն ալ զանոնք առաքինու  
 թեան կը թելու համար շատ  
 դժուարութիւն չէին քաշեր :  
 Ինդ հակառակն զանոնք վախ  
 ցընելու համար սևեր հագած  
 քահանայ մը կը հանեն դիմաց  
 նին, մահուան անունը կը յիշեն՝  
 միայն վրանին ստակում բերելու



համար . կը պատմեն անոնց թէ  
 մեռելները գիշեր ատեն կ'ելլեն  
 կը քալեն ահռելի կերպարանք-  
 ներով . ասանկով տղաքը կ'ըլլան  
 մէյմէկ տկար , վախկոտ , ողոր-  
 մելի մարդիկ . և մէյմը որ բոլոր  
 աս բաներով մտքերնին պաշա-  
 րուի , ալ անկէց ետքը շէն կրնար  
 աղէկ բաներու ետեւէ ըլլալ :

Ըստ հարկաւոր է հոգ ու-  
 նենալ պզտիկուց տղուն առող-  
 ջութեանը վրայ . անոր արիւնը  
 բարեխառն ու հանդարտ պա-  
 հելու համար պէտք է կերակուր-  
 ներու մէջ ընտրութիւն ընել .  
 ու ջանալու է որ որչափ կարելի  
 է պարզ ու կանոնաւոր կեանք  
 մը ունենայ . այսինքն ամէն օր ու  
 րոշեալ ժամանակ մը ուտէ կերա-  
 կուրը , և ան ժամանակէն դուրս  
 ամենեին բան չուտէ . որպէս զի  
 դեռ առջինները չմարսած՝ ստա-  
 մոքսը կրկին չճանրանայ . շատ



Համեղ բաներ չուտէ, որպէս  
 զի սաստիկ ախորժեւուն՝ չափա  
 զանց չուտէ ու անով զգուելի  
 չդառնան իրեն մէկալ առողջա  
 րար կերակուրները. ամենեին  
 պէտք չէ առջևը տեսակ տեսակ  
 բաներ հանել. վասն զի ետեւէ  
 ետեւ եկած զանազան կերակուր  
 ները մարդուս ախորժակը կը  
 գոցեն՝ առանց աղէկ մը փորը  
 կշտացրնելու:

Մէկ հարկաւոր բանն ալ աս  
 է որ տղուն գործարանները հաս  
 տատուին, առանց կրթութեանը  
 արգելք մը բերելու. զգուշանա  
 լու է ան ամէն բաներէն որ կեր  
 պով մը կրնան սաստկացրնել  
 տղուն կրքերը. և որպէս զի  
 չտրվի ամէն խելքը եկածը ու  
 զելու, կամաց կամաց կամքը  
 կոտրելու է ու ամէն ուզածը  
 պէտք չէ ընել:

Արջափ ալ տղու մը բնաւորու



Թիւնը աղէկ չըլլայ, ասանկով  
 կրնայ մէկը դիւրաւ զանիկայ  
 հլու, համբերող, դիմացկուն,  
 ուրախ և հանդարտ ընել. և  
 թէ որ պզտիկութեան ատեն  
 մէյմը վրան հոգ չտարուի, բո-  
 լոր կենացը մէջ համարձակ, կրա-  
 կոտ ու անհանդարտ կ'ըլլայ. ա-  
 ըիւնը կ'եփի, նոր նոր սովորու-  
 թիւններ կը ստանայ, ու քանի  
 որ մարմինը փափուկ է ու հոգին  
 մասնաւոր քանի մը վրայ սէր չէ  
 ձգած՝ դէպ 'ի չարը կ'երթայ:  
 Աւ ասիկայ իրեն նոր տեսակ  
 սկզբնական մեղք մը կը դառնայ՝  
 և հազարաւոր անկարգութեանց  
 աղբիւր:

Արբոր քիչ մը սկսի տարիքը ա-  
 ոաջ երթալ ու խելքը բացուիլ,  
 պէտք է իրեն ան տեսակ խօսքեր  
 զրուցել, որ ինքիրմէ սկսի ճշ-  
 մարտութիւնը սիրել ու ամէն  
 տեսակ կեղծաւորութիւն ատել:



Աւստի ամենեւին պէտք է զինքը  
 հանդարտեցնելու կամ բանի մը  
 համոզելու համար սուտ բաներ  
 խոստանալ կամ ըսել. վասն զի  
 անով խորամանկութիւն կը սոր-  
 վի ու յաւիտեան չմոռնար. հա-  
 պա պէտք է որչափ կարելի է  
 իրաւունքով վարուիլ հետը :

Եւ այց քիչ մըն ալ մօտէն քըն-  
 նենք տղոց վիճակը, որպէս զի  
 անոնց հարկաւոր եղած մանր  
 բաներն ալ կարենանք տեսնել :  
 Տղոց ուղեղը կակուղ է, որ օրէ  
 օր կը պնդանայ. իսկ մտքերնին  
 բան մը չգիտեր ու ամէն բան  
 իրեն նոր կուզայ : Այս ուղեղին  
 կակղութեամբը ամէն բան մըտ  
 քերնուն մէջ դիւրաւ կը տպա-  
 ւորուի, մանաւանդ նոր ու զար-  
 մանալի բաներ՝ որոնց աւելի հե-  
 տաքըքիւր կ'ըլլան տղաք : Աւղե-  
 ղին աս խոնաւութիւնն ու կակ-  
 ղութիւնը սաստիկ տաքութեան



հետ միանալով՝ շարունակ զինքը  
 շարժման մէջ կը պահէ . և աս է  
 ասհա տղոց անհանդարտութեան  
 պատճառը՝ որ ամենեւին չեն կրը-  
 նար մտքերնին բանի մը վրայ  
 կեցրնել, և ոչ մէկ տեղ մը ան-  
 շարժ կենալ մարմնով :

Արիշ կողմանէ տղաք իրենք  
 իրենցմէ բան մը մտածելու կամ  
 ընելու կարողութիւն չունենա-  
 լով, ամէն բան կը դիտեն ու  
 քիչ կը խօսին՝ թէ որ զիրենք ու-  
 թիշները չվարժեցրնեն շատ խօ-  
 սելու . և աս բանիս վրայ մաս-  
 նաւոր ուշադրութիւն ընելու է :

Շատ անգամ մարդիկ տեսքով  
 տղաքը իրենց զուարթութեան  
 նիւթ ընելով՝ կը վարժեցրնեն  
 զանոնք մտքերնին եկածը ամեն  
 ցրտիւղ դուրս տալու, աղէկ չգիտ-  
 ցած բաներնուն վրայ խօսելու .  
 և աս ինչ և իցէ գիտցած չգիտ-  
 ցած բանի դատաստան ընելու և



որոշ չգիտցած բանին վրայ խօսելու սովորութիւնը կը մնայ վրանին բոլոր իրենց կենացը մէջ, որ խելքի պակասութեան նշան է :

Մ. յսպէս տղոցմով զուարթանալը ուրիշ մնաս մըն ալ ունի. տղաք երբոր կը տեսնեն որ մարդիկ իրենց վրայ սէր կը ցուցնեն, ամէն ըրածնին կը դիտեն ու ըսածներնուն սիրով մտիկ կը դնեն, կը սկսին կարծել թէ ալ բոլոր աշխարհս իրենց վրայ պիտի թափի ու իրենց վրայ պիտի խօսի :

Վանի որ մէկէն մէկալէն դովասանք կը լսեն ու ամէն ուղածնին կ'ըլլայ, մտքերնին մեծ մեծ բաներ կը դնեն, որով և ունեցած պակասութիւննին շտկելու տեղ, անթիւ նոր նոր պակասութիւններ անոնց վրայ կ'աւելցնեն : Տղաք տեսեր եմ որ եր-



կու հոգւոյ ծածուկ խօսիլը տես-  
 նելնուն պէս կը կարծէին թէ  
 անոնք իրենց վրայ կը խօսին . ո-  
 րովհետեւ շատ անգամ իրենց  
 վրայ ալ ծածուկ խօսակցութիւն  
 եղած էր, մտքերնին ալ դրած էին  
 թէ իրենց վրայ ամէն ըսածնին  
 խելքէ մտքէ դուրս զարմանալի  
 բաներ են : Աստի շատ զգոյշ  
 կենալու է որ չըլլայ թէ տղաք  
 մտքերնին դնեն թէ ուրիշները  
 բաներնին գործերնին թողած՝  
 միշտ իրենց վրայ կը մտածեն .  
 հապա իրենց ըսելու է թէ վրա-  
 նիդ հոգ ընտղները չէ թէ անոր  
 համար կ'ընեն որ դուք խելացի  
 ու զարմանալի տղաք էք , հա-  
 պա պարզ 'ի սիրոյ ու իրենց  
 պարտքը կատարելու համար .  
 որովհետեւ իրենց յանձնուած  
 է ձեր կրթութիւնը : Նաւա-  
 կան է որ բնական կերպով պա-  
 տահած առիթներով քիչ քիչ



կրթես տղան . ու թէ որ ուզե-  
 նաս տղուն միտքը զարգացրնել  
 առանց անոր չափ պնելու , վախ-  
 ցիր որ չըլլայ թէ կրթուելու  
 տեղը փառամուլ ու ինքնահաւան  
 ըլլայ :

Այտք է գոհ ըլլանք բնու-  
 թեան ետեւէն երթալով՝ անոր  
 ձեռքերնէս եկած օգնութիւնը  
 ընելու : Տղաք քիչ բան գիտեն ,  
 անոր համար պէտք է շատ  
 յորդորել զիրենք որ խօսին . ի-  
 րենք որչափ որ բան չեն գիտեր՝  
 այնչափ աւելի տարակոյսներ կը  
 հանեն . բայց մի՛թէ ամենուն ալ  
 պէտք է պատասխան տալ : Ա-  
 մենուն ալ պէտք է համառօտ  
 կերպով պատասխանը տալ . եր-  
 բեմն ալ տարակոյսնին լուծելու  
 ատեն մէկ քանի պզտիկ նմանու-  
 թիւններ բերելու է՝ որպէս զի  
 ըսուած բանը գիւրաւ ու պայ-  
 ծառ ըմբռնեն : (Թէ որ բանի մը



վրայ առանց աղէկ գիտնալու  
 դատաստան ուզեն ընել, առանց  
 զիրենք կուպտութեամբ ամբօջր  
 նելու պէտք է քիչ մը նեղը խո-  
 թել՝ նոր խնդիր մը հանելով,  
 որպէս զի իրենց սխալմունքը ի-  
 մանան. վերջը անուշութեամբ  
 իմացընելու է իրենց թէ մարդիկ  
 ան ատենը աւելի համարմունք  
 կ'առնեն ու կը գովեն զիրենք՝  
 երբոր իրենք փոխանակ գիտցած  
 չգիտցած բանի մը վրայ վճիռ  
 տալու տարակուսին, ու չգիտ-  
 ցածնին ուրիշի հարցընեն: Ահա  
 աս կերպով միայն կրնայ մարդ  
 քաղաքավարութեամբ իրենց  
 սիրելի ընել համեստութիւնը  
 ու արհամարհելի ամէն տեսակ  
 վիճաբանութիւնները, որ քիչ  
 բան գիտցող տղոց շատ սովորա-  
 կան է:

Արբոր կը սկսի քիչ մը մտքեր  
 նին բացուիլ, զիրենք ինքնահա-



ւանութենէ ազատ պահելու  
 համար՝ աս փորձերս ընելու է :  
 Ար տեսնէք, ըսելու է իրենց,  
 որ հիմայ անցած տարուրնէ ա-  
 լելի բան գիտէք. ասկէց մէկ  
 տարի վերջն ալ բաներ պիտի  
 գիտնաք որ հիմայ չէք կրնար  
 գիտնալ : Սէ որ անցած տարի  
 ուզէիք դատաստան ընել հիմա-  
 կուան գիտցած բաներնուդ վրայ,  
 ծուռ դատաստան ըրած կ'ըլ-  
 լայիք : Ալ ինչպէս որ ան ատենը  
 ձեզի չէր վայլեր որ ձեր կարո-  
 դութենէն վեր եղած բաները  
 ուզէիք գիտնալ, նոյնպէս ալ  
 հիմայ թէ որ ետքի սորվելու  
 բաներնիդ հիմակուրնէ ուզէք  
 իմանալ, որ կուգայ որ պիտի  
 տեսնէք թէ ըրած դատաստան-  
 նիդ որչափ անկատար է եղեր :  
 Արեմն նայեցէք որ տարիքնին  
 առած մարդկանց ըսածին այն-  
 պէս մտիկ ընէք՝ ինչպէս թէ



դուք իրենց հասակը ու փորձերը  
 ունենալով՝ նոյն բաներուն վրայ  
 դատաստան ընէիք : Տղոց հե-  
 տաքրքրութիւնը այնպիսի բնա-  
 կան յօժարութիւն մըն է , որ  
 կարծես թէ միշտ կըթուծեան  
 առջևէն կ'երթայ . ուստի նայէ  
 որ որչափ կարելի է անկէց օգուտ  
 քաղես : Օ որ օրինակ , դաշտի  
 մը մէջ ջաղացք մը կը տեսնեն ,  
 ու ինչ ըլլալը կ'ուզեն իմանալ .  
 պէտք է որ ըսես իրենց թէ  
 մարդուս ապրուստին համար  
 կերակուր կը պատրաստէ : Վե՛ջ  
 մը աւաջ երթալով հնձողներ կը  
 տեսնեն . պէտք է անոնց ըսես  
 թէ ինչ բան է անոնց ըրածը .  
 ինչպէս ցորենը կը ցանեն , ու  
 ինչպէս անիկայ հողին տակը կը  
 բազմանայ : Վաղքին մէջ կը  
 տեսնեն խանութներ , որոնց մէջ  
 մարդիկ զանազան արուեստներ  
 կը բանին , կամ այլևայլ բաներ



կրծախեն: Մն՝ համբերութեամբ  
 ամենեւին պէտք չէ նեղանալ ա-  
 նոնց ըրած հարցմունքներուն  
 վրայ. ասոնք այնպիսի բնական  
 առիթներ են որ տղոց տալու  
 կրթութիւնդ քեզի կը դիւրա-  
 ցընեն. հապա այնպէս ցուցուր  
 թէ իրենց ըրած հարցմունքնե-  
 րէն շատ կ'ախորժիս. նաև սկսէ  
 իրենց կամաց կամաց սորվեցը-  
 նել թէ ինչպէս կը ճարեն մար-  
 դիկ իրենց հարկաւոր եղած բա-  
 ները, ու առուտուրը ինչպէս  
 կ'ըլլայ: Մտանկով կամաց կա-  
 մաց, առանց մասնաւոր ուսմունք  
 քի կ'իմանան թէ իրենց հար-  
 կաւոր եղած բաները ինչ կեր-  
 պով կ'ըլլուին, ու անոնց իւրա-  
 քանջիւրը որչափ ստակ կ'արժէ,  
 որ տնտեսութեան համար շատ  
 հարկաւոր բան է: Մտ գիտու-  
 թիւնը թէպէտև ամենուն հար-  
 կաւոր է առուտուրի մէջ ջիւա-



բուելու համար, բայց մասնաւոր  
կերպով աղջիկ տղոց:

ԳԼՈՒԽ Դ.

Զգոշանալո՞ւ է որ տղաք իրենց ամեն  
տեսածին չնտուխն:

Տղաք, տգէտ ու մտքերնին  
պարապ ըլլալով, ու ամենեւին  
մասնաւոր սովորութիւն մը չու  
նենալով, ամէն տեսած բաներ  
նուն մէկէն հետեւիլ կ'ուզեն:  
Ասոր համար իրենց միշտ բարի  
օրինակներ տալը շատ հարկաւոր  
է: Աւստի պէտք է որ ան մարդ  
կանց հետ միայն տեսնուին՝ ու  
րոնց հետեւելու ըլլան նէ ալ  
փաստի տեղ օգուտ տեսնեն. բայց  
որովհետեւ որչափ ալ մէկը զգու  
շութիւն ընէ, անկարելի է որ  
անոնք շատ անկարգ բաներ ալ  
չտեսնեն, ուրեմն որչափ կարելի



է առաջուց պէտք է իրենց խմա-  
 ցընել մոլի ու անխելք մարդկանց  
 գործքերը՝ որոնցմով անոնք ա-  
 մենուն առջևը համարմունքնին  
 կորսընցուցած՝ մէկ ստրկի եղեր  
 է անուննին . ցուցընելու է թէ  
 որչափ այսպիսիները արհամար-  
 հուած են, ու արժանի ալ են  
 արհամարհուելու . և թէ որչափ  
 ողորմելի է ան մարդը որ ինք-  
 ղինքը իր կրիցը ձեռքը կը մատնէ  
 ու իր մարդկութիւնն ալ բոլո-  
 րովին կը մոռնայ . և ահա այս-  
 պէս կրնայ մարդ առանց տղոցը  
 զուրիշները ծաղր ընել սորվեցը-  
 նելու՝ անոնց ախորժակը կը թել  
 ու հասկըցընել իրենց թէ իրաւ-  
 ցընէ որոնք են բուն վայելուչ ու  
 հետեւելու բաները : Այտք ալ  
 չէ այնչափ բարակ մտածել որ  
 ջրլայ թէ աս բաներով տղոց  
 միտքը բացուի, ու սկսին անկէց  
 վերջը իրենց մեծերուն պակա-



սութիւնն ալ բռնել. վասն զի  
 մարդս առանկ բան և ոչ մտքէն  
 պիտի անցրնէ. ան թողունք,  
 նաև ամենևին արդարացի չէ որ  
 տղաք այսպիսի թեթև պատճա  
 ռի համար միշտ իրենց անգի  
 տութեան մէջ մնան. իսկ եթէ  
 կ'ուզես որ իրենց պարտքէն դուրս  
 չելլեն՝ ապահով ճամբան աս է,  
 այսինքն զիրենք համոզելու ես  
 թէ մարդս պէտք է որ ուրիշին  
 պակասութեանցը համբերէ, ու  
 թեթևամտու թեամբ անոնց ը  
 րածը չդատէ, որ միշտ եղածէն  
 աւելի մեծ կ'երևնան, և թէ  
 կրնան բարի մտքով եղած ըլլալ.  
 և թէ աշխարհիս վրայ ամենևին  
 կատարեալ բան մը չըլլալուն հա  
 մար՝ պէտք է որ մարդս քիչ ան  
 կարգու թիւն և ախտ ունեցողնե  
 րուն վրայ նայի ու անոնց հետևի:  
 Ալ թէպէտ միշտ հարկ չըլլար  
 տղոց աս կրթու թիւնները տալ,



սակայն հիմակուան սկզբունք-  
ները պէտք է իրենց միտքը  
տպաւորել. և զգուշացընել որ  
ամէն տեսած բաներնուն հե-  
տեին :

Սաստիկ արգիլելու է տղոց որ  
ուրիշի ձևը չընեն. վասն զի  
այսպիսի ծաղրական ու կատակ-  
երգական կերպերը խիստ ան-  
վայել բաներ են համեստ մար-  
դու. շատ վախնալու ալ է որ  
չըլլայ թէ տղաք ան կերպերը  
սորվին. վասն զի իրենց երևա-  
կայութիւնը տաք ու մարմինը  
դիւրադարձ ըլլալով, ու աս տե-  
սակ բաներէն բնական զուար-  
ճութիւն մըն ալ զգալով, դիւ-  
րաւ ամէն տեսակ ձև կը սորվին  
որ իրենց ուզած ծաղրածու-  
թիւնները ձևացընեն :

Տղոց աս ուրիշի նմանելու յօ-  
ժարութիւնը իրենց անթիւ չա-  
րեաց պատճառ կ'ըլլայ, թէ որ



այնպիսի ախտաւոր ու անկարգ  
 մարդկանց ձեռքը իյնան՝ որ չու  
 զեն գէթ անոնց առջև քիչ մը  
 իրենք զիրենք ժողվրտել: Աս  
 տուած աս յօժարութիւնը անոր  
 համար դրած է տղոց սիրտը որ  
 անով դիւրաւ կարենան իրենց  
 տեսած բարի օրինակներուն հե  
 տելի: Աւստի երբոր կ'ուզենք  
 որ տղաք մէկ բան մը ընեն,  
 պէտք է որ նախ նոյն բանը ուրի  
 շի վրայ ցուցնենք իրենց:

ԳԼՈՒԽ Ե.

Ոչրիշի ձեռքով ևղած կրքոռքիշնկերոռ  
 վրայ, և քե շատ պետք չէ նկող ձգել  
 տղաքը:

Աս ալ ան կարծիքին վրայ էմ  
 թէ շատ անգամ հարկ է ուրիշի  
 ձեռքովը կրթութիւն տալ տղոց,  
 որով այնչափ ճանճրալի ալ ջըւ



լար ծնողաց՝ զանոնք կրթելը ,  
 ինչպէս դաս տալը , ազդարարու  
 թիւն ընելը , երբոր ըլլան միայն  
 իրենց տրուած օրինակներուն  
 վրայ ուշադրութիւննին արթըն  
 ցընելու համար :

Արբեմն կրնայ մարդս տղոց  
 առջևը ուրիշի մը հարցընել . Ինչ  
 չո՞ւ համար աս բանս կ'ընես . ու  
 մէկալը պատասխանս կուտայ . Ա՞յ  
 պատճառիս համար կ'ընեմ . զոր  
 օրինակ , Ինչո՞ւ յանցանքդ խոստո  
 վանեցար . Արպէս զի ստախօսի  
 անուն չունենամ , ու վատութիւն  
 ուրանալովս ուրիշ անգամ աւելի  
 մեծ պակասութեան մէջ չիյնամ .  
 Եւ ասկէց աւելի գեղեցիկ բան  
 կրնայ ըլլալ որ մարդ իր յան  
 ցանքը ճանչնալով անկեղծու  
 թեամբ մեղայ ըսէ : Ա՞յ ըսե  
 լէն վերջը կրնայ հարցընողը  
 զանիկայ գովել՝ ըրած յանցանքը  
 չծածկելուն համար . բայց աս



բաներս պէտք է առանց արուեստակութեան ըլլան. վասն զի տղաք մարդուս կարծածէն ալ աւելի վարպետ ու թափանցող են, և թէ որ մէյմը իմանալու ըլլան թէ իրենց դաստիարակը վարպետութիւն կը բանեցընէ, անկէց ետև իրենք ալ իրենց պարզմտութիւնն ու անոր վրայ ունեցած վստահութիւնը կը կորսընցընեն:

Մնաջ ալ ըսինք թէ տղոց ուղեղը ջերմ և խոնավ ըլլալով մէկ տեղ մը հանդարտ չեն կըրնար կենալ: Աւղեղին այսչափ կակուղ ըլլալուն պատճառաւ զրան ամէն բան դիւրաւ կը տպաւորուի, ու առարկաներուն պատկերները շատ կենդանի կ'ըլլան. ուստի պէտք է ջանայ որ քանի որ գրերը հոն դիւրաւ կը ձևանան՝ գլխին մէջ ամէն բան գրուի: Մայց ան տպաւորելու



պատկերներուն շատ զգուշու-  
 թեամբ ընտրութիւն պէտք է  
 ընել. վասն զի պզտիկ ու գեղե-  
 ցիկ աւազանին մէջ ազնիւ բա-  
 ներ միայն կը ձգեն. նայելու է  
 որ ան հասակին մէջ ալ տղոց  
 միտքը այնպիսի բաներ լեցրնենք՝  
 որոնք կ'ուզենք որ բոլոր իրենց  
 կենացը մէջ մտքերնին մնան :  
 Աստի քանի որ ուղեղը թարմ  
 ու դատարկ է, հոն տպաւորուած  
 առջի պատկերները ամենէն ա-  
 լելի հաստատուն կ'ըլլան. և  
 քանի որ հասակնին մեծնալով  
 ուղեղնին ալ կը ցամքի, անոնք  
 ալ երթալով կը պնդանան ու ին-  
 չուան անջնջելի կ'ըլլան. ասկէց  
 է որ տղայութեան բաները ա-  
 լելի որոշ կերպով կը մնան մար-  
 դուս միտքը քան թէ տարիքը  
 աւանելէն ետեւ հանդիպածները,  
 և պատճառը ան է որ վերջիննե-  
 րը ուղեղին ցամքած ու շատ



պատկերներով շեցուած ատենը  
տպաւորուեր են :

Վարդ աս բաներս որ կը լսէ  
հաւտալը չգար, սակայն եթէ  
քիչ մը դիտելու ըլլայ՝ կը նայի  
որ իրաւցրնէ ինքն ալ նոյնպէս  
կ'ընէ եղեր առանց իմանալու :  
Վիթէ ամէն օր չքուիր թէ  
մարմինս սկսաւ խորշոմիլ, ծերու  
թիւնը վրաս կոխեց, շարժելու  
կարողութիւն չունիմ, և թէ ես  
ասանկ մեծցեր էի : Արիշ կող  
մանէ ալ միթէ մարդուն մէկ  
մասնաւոր ախորժ մը չի գար իր  
տղայութեան ատեն ըրած բա  
ները յիշելու . և միթէ մեր վը  
րայ զօրաւոր յօժարութիւններ  
ալ որ կը տեսնենք՝ տղայութեան  
ժամանակէն մնացած չեն : Ա  
տնցմով բաւական կ'իմացուի որ  
տղայութեան ատեն վրանիս ե  
ղած տպաւորութիւններն ու  
սովորութիւնները ամենէն զօ



րաւորներն են: Մայց աս ալ  
 պէտք է խոստովանիլ թէ տղաք  
 որչափ որ յարմարութիւն ունին  
 դիւրաւ ուղեղներնուն մէջ պատ-  
 կեր տպաւորելու՝ այնչափ ալ  
 խելք բանեցրնել չունին: Ասան  
 զի ուղեղին աս խոնաւութիւնը  
 որով վրան ամէն բան դիւրաւ  
 կը տպաւորուի՝ սաստիկ տաքու-  
 թեան մը հետ միանալով այն-  
 պիսի շարժմունք մը կը պատ-  
 ճառէ մարմնոյ մէջ, որով տղաք  
 չեն կրնար երկար ատեն միա-  
 կերպ մէկ բանի մը վրայ ուշա-  
 դրութիւն ընել:

Տղոց ուղեղը բացօթեայ տեղ  
 մը հովի դիմացը դրուած ճրագի  
 կը նմանի, որուն լոյսը միշտ կը  
 դողդրղայ: Տղան քեզի բան մը  
 կը հարցրնէ, ու դեռ քեզմէ  
 պատասխանը չառած՝ աչուրները  
 դէպ 'ի ձեղունը կը վերցրնէ, ու  
 կը սկսի հոն եղած նկարները



համրել, և կամ պատուհաններ  
 բուն ապակիները կը համրէ. ու  
 թէ որ ուզես դարձեալ զինքը  
 առջի հարցուցած բանին դար-  
 ճրնել, սաստիկ նեղութիւն կը  
 քաշէ, իբր թէ զինքը բանտ  
 դրած ըլլայիր: Աստի քանի որ  
 ուշադրութեան գործարաննե-  
 ըր տկար են՝ շատ զգուշութիւն  
 ներ բանեցրնելով անոնց զօրա-  
 նալուն սպասելու է:

Վայէ որ հարցուցած բանին  
 շուտով պատասխանը տաս, ու  
 թող տուր որ ուզածին չափ ու-  
 ըիշ բաներ ալ հարցրնէ: Միայն  
 ջանա որ մէկ կողմանէ հետաքրք-  
 րութիւնը գոհ ընելով մէկալ  
 կողմանէ ալ միտքը աղէկ բանե-  
 ըով լեցրնես: Վասն զի ատեն  
 կուգայ որ անոնք ամէնքն ալ ի-  
 րարու հետ կը միանան, ու տղուն  
 ուղեղը հաստատուած ըլլալով  
 կը սկսի կարգաւ անոնց վրայ



խորհրդածութիւններ ընելու :  
 Աւ դուն նայէ, արթուն կեցիր  
 որ եթէ յանկարծ բանի մը վրայ  
 աղէկ դատաստան չընէ՝ զինքը  
 շտկես, ու հանդարտութեամբ  
 ցուցուր իրեն թէ ինչպէս կրնայ  
 ուզած բանէն խելք սորվիլ :

Թող որ տղան խաղայ, ու  
 նայէ որ տուած կրթութիւնդ  
 ալ խաղի հետ խառնես. վասն զի  
 ինչուան որ ուրախ ջրլայ ու ա-  
 տենին չխաղայ՝ չկրնար բան  
 սորվիլ. և զգոյշ կեցիր որ ան-  
 խոհեմութեամբ չափազանց չաշ-  
 խատցընես զինքը :

Թէ որ տղուն համարումը ա-  
 ռաքինութեան վրայէն մէյմը  
 երթայ, ու սկսի ազատութեան  
 ու անկարգութեանց ետեւէ իյ-  
 նալ, ալ բանը լմնցած է, դուն  
 ալ անօգուտ տեղը կ'աշխատիս :  
 Անեւին մի թողուր որ դատարկ  
 ու անկարգ մարդիկ քովը մօ-



տենան ու հետը շողոքորթու  
թեամբ վարուին . վասն զի մար  
դուս բնական է իր սիրած ան  
ձանց վարքին ու զգացմանցը հե  
տևիլ , ու թէ որ մէկը մէյո՛ւր ան  
համեստ մարդկանց ընկերու  
թիւնը սկսի սիրել , կամաց կա  
մաց կը սկսի անոնց արհամարհե  
լի բաները պատուել :

Թէ որ կ' ուզէս որ տղաք բարի  
մարդկանց վրայ սէր ու համար  
մունք ունենան , պէտք է իրենց  
ցուցնես անոնց գովելի ու վայե  
լուչ գործքերը , անոնց անկեղ  
ծութիւնը , անոնց պարկեշտու  
թիւնն ու անշահասիրութիւ  
նը , անոնց հաւատարմութիւնը ,  
ու մանաւանդ անոնց բարեպաշ  
տութիւնը , որ մէկալ ամէն բա  
ներուն աղբիւրն է :

Աւ թէ որ այնպիսեաց մէկը  
պարսաւելի բան մըն ալ ունենայ ,  
ըսէ տղոց թէ ան պակասու



Թեանց պատճառը բարեպաշ-  
տու թիւնը չէ . և թէ որ անոր  
բարեպաշտու թիւնը կատարեալ  
ըլլայ, կամ կը շտկէ իր ան պա-  
կասու թիւնները և կամ գէթ կը  
քիչցընէ զանոնք : Իսկ շատ  
զգուշալի բան է ջանալ տղոց  
սիրելի ընել այնպիսի բարեպաշտ  
անձինքը՝ որոնց արտաքին տեսքը  
անախորժ է :

Թէպէտ և դուն ամէն ջանք  
ու արթնու թիւն բանեցընես  
անվայել բան մը չընելու, սակայն  
մի կարծեր թէ տղան ամենեւին  
վրադ պակասու թիւն մը չի գըտ-  
ներ, հապա գիտցիր որ քու ամե-  
նաթեթև պակասու թիւններդ  
ալ կը տեսնէ ու կ'իմանայ :

Սուրբն ( ) գոստինոս կը պատ-  
մէ թէ տղայու թեան ատենը ի  
մացեր է եղեր որ իր վարպետ-  
ները իրենց գիտու թեանը վրայ  
մեծ համարուներ ունէին : Աւս-



տի աղէկն ան է որ տղոց ճանչ  
 նալէն առաջ դուն նախ ճանչ  
 նաա քու պակասութիւններդ, ու  
 աղաչես մտերիմ բարեկամնե-  
 րուդ որ վրադ ինչ անպատշաճ  
 բան որ տեսնեն քեզի խմացրնեն:  
 Սովորաբար դաստիարակները  
 տղոց ամենևին բան մը չեն ուզեր  
 ներել, իսկ իրենց ամէն բան կը  
 ներեն. և ահա ասկէց կը մտնէ  
 տղոց մէջ անանկ մէկ հոգի մը որ  
 կը սկսին չարութեամբ դաստիա-  
 րակաց ամէն ըրած բանին վրայ  
 դատաստան ընել. և թէ որ ան-  
 կէց վերջը իրենց դաստիարակը  
 մէկ բանի մը մէջ սխալի՝ կը զար-  
 մանան վրան, կ'արհամարհեն  
 զինքը, ու մէյմըն ալ երեսը  
 նայիլ չեն ուզեր:

Այլ որ աս բանէս շատ զգու-  
 շանաս: Մի վախնար ամենևին  
 նաև քու պակասութիւններուդ  
 վրայ խօսելու, և նաև ան պակա-



սու թիւններուդ վրայ որոնք դի  
պուածով տղուն առջևը յայտնի  
ըրած ըլլաս : Արբոր կը տեսնես  
որ տղան ըսած բաներուդ խելք  
կը հասցընէ , իմացուր իրեն թէ  
դուն քու պակասու թիւններդ  
զուրցելով կ'ուզես զինքը կը թել  
որ ինքն ալ նոյն պակասու թիւն  
ները ցնէ . ասով թէ՛ զքեզ  
կ'ուզդես և թէ՛ տղան կը կը թես .  
որ վրագ ալ շինուելով կը քաջա  
լերուի իր պակասու թիւնները  
չբռնելու , և որ մեծն է , թէ  
որ աս պակասու թեանց համար  
անոր դիմացը արհամարհ ու  
զղուելի պիտի ըլլայիր՝ չես ըլ  
լար :

Տղէն պահանջած բաներդ  
միանգամայն անոր սիրելի ընես :  
Ալ թէ որ անոր ակամայ ու  
դժուար բան մը պիտի առաջար  
կես , նայէ որ առաջ զինքը հա  
մուզես ըսելով թէ քիչ մը աս նե



զուժեան համբերես նէ, ետքը  
 շատ կ'ուրախանաս: Միշտ ամէն  
 սորվեցուցած բաներուդ օգտա-  
 կարուժիւնը ցուցուր իրեն, և  
 ըսէ թէ ասոնք որչափ հարկաւոր  
 կ'ըլլան աշխարհիս վրայ առու-  
 տուրի մէջ, ու ամէն վիճակի  
 մարդկանց հետ վարուելու ա-  
 տեն: Մըանց ասոր՝ աս բաներս  
 սորվիլը իրեն անվախճան, ան-  
 պտուղ ու տաժանելի կ'երևնայ:  
 Ի՞նչ բանի կուգայ, կ'ըսեն տղաք  
 իրենք իրենց, սորվիլ ան բաները  
 որոնք ամենևին կենցաղավարու-  
 թեան չեն վերաբերիր, և ոչ ալ  
 մեր ընելու հարկաւոր բաներուն  
 հետ կապակցուժիւն մը ունին:  
 Արեմն որպէս զի տղաք մտքեր-  
 նէն այսպիսի բաներ չանցընեն,  
 պէտք է որ դաստիարակը սոր-  
 վեցուցած ամէն բանին պատ-  
 ճառները իրենց աղէկ մը հաս-  
 կըցընէ: Մը բանս անոր համար



կը սորվիք , ըսէ իրենց , որպէս զի  
 օր մը ան ընելու գործքերնիդ ա-  
 զէկ ընէք . ասիկայ՝ որպէս զի  
 դատմունքնիդ կըթուի . մէկալը՝  
 որպէս զի աշխարհիս ամէն բա-  
 ներուն վրայ աղէկ դատաստան  
 ընել սորվիք : Այլ որպէս զի աս  
 սորվելու աշխատութիւնը իրենց  
 քաղցրանայ , պէտք է միշտ յիշե-  
 ցընել թէ ըրածնին ինչ վախճա-  
 նի համար է . ամենեին պէտք  
 է ջանալ զիրենք մէկ ցամաք ու  
 բացարձակ իշխանութեամբ մը  
 նուաճելու :

Արչափ որ տղոց խելքը կը  
 բացուի , այնչափ աւելի հարկ  
 կ'ըլլայ իրենց հասկըցընել թէ  
 արչափ հարկաւոր է իրենց դատ-  
 տիարակութիւնը , և իրենց ալ  
 թողլու է որ վրան խոհրդածու-  
 թիւններ ընեն . աս կըթու-  
 թիւնը անօգուտ ջրլար , վասն  
 զի ասով ալ բաւական կ'իմա-



ցուի ինչ խելքի տէր ըլլանին ,  
 և ինչ տեսակ ընտրողութիւն  
 ունենանին կը փորձուի :

Նայէ որ առանց վերջին հար-  
 կաւորութեան խստութիւն ու  
 իշխանական կերպ չբանեցրնես՝  
 ուսկից տղաք կը դողան : Ն  
 պակասութիւնը դաստիարակնե-  
 ըն շատր ունին , և զանոնք վախ-  
 ցրնելը վարպետութիւն մը կը  
 սեպեն : Նրդէն տղաք սովորա-  
 բար վախկոտ ու ամբջկոտ կ'ըլ-  
 լան . անով սրտերնին քեզի բաց  
 չըլլար , ու վստահութիւննին  
 վրայէդ կը կորսրնցրնեն , որով  
 տուած դաստիարակութիդ բո-  
 լորովին անպտուղ կ'ըլլայ : Նայէ  
 որ տղոց սիրելի ըլլաս , հետդ  
 համարձակ ըլլան , ու պակա-  
 սութիւննին քեզի յայտնելու  
 ամենեին չվախնան : Նոր հա-  
 մար պէտք է որ առջևդ իրենք  
 զիրենք չպարտրկողներուն աւելի



ներողամիտ ըլլաս: Արեւոյ գէշ  
 յօժարութիւններուն վրայ ոչ  
 սուկում ցուցուր և ոչ բարկու-  
 թիւն. ընդ հակառակն անոնց  
 տկարութեանցը կարեկից եղիր:  
 Արբեմն աս գէշ բանը կը հան-  
 դիպի որ տղոցմէ ունանք վախով  
 միայն կը սանձուին. այսու ամե-  
 նայնիւ ընդհանրապէս վրանին  
 վստահութիւն ցուցնելը աւելի  
 օգտակար է՝ քան թէ խիստ իշ-  
 խանութիւն մը:

Աարձեալ, քու իշխանութիւնդ  
 քանի չիզար՝ թէ որ տղաք վրադ  
 աղէկ վստահութիւն չունենան.  
 ուստի հետերնին վարուելու ա-  
 տեն պէտք է միշտ մէկ համար-  
 ձակ, զուարթ և ընտանի կերպ  
 մը բռնել՝ առանց ամենեւին  
 ցածութեան նշան մը տալու, ո-  
 ըրով և իւրաքանչիւր տղուն բնա-  
 ւորութիւնը դուրս ելլելով ինչ-  
 պէս որ պէտք է զիրենք կրնաս



Ճանչնալ : Իսկ իշխանական կերպով՝ ամէն դրած կանոններդ պահել տաս նէ ալ՝ գիտցիր որ վախճանիդ չես հասնիր . վասն զի ամէն ըրածնին բռնի ու երեսանց կ'ընեն . ասով բարի բաները իրենց զգուելի կ'ընես , որ քու պարտքդ է զանոնք իրենց սիրելի ընել :

Իրաւ է որ Սողոմոն իմաստունը կը պատուիրէ ծնողաց որ տղոց վրայէն գաւազանը չվերցընեն , և իր տղուն հետ խաղցող հայրը վերջը կուլայ կ'ըսէ . բայց ասով քաղցրութեամբ ու երկայնամտութեամբ եղած դաստիարակութիւն վար չիզարներ . հասկա կը դատապարտէ միայն ան տկար ու անխոհեմ ծնողքը՝ որ իրենց տղոց կերքերը կը սնուցանեն ու տղայութեան ատեննին անոնցմով զուարճանալու միայն կը նային , ինչուան որ ա-



նոնք ամէն տեսակ անկարգու  
թեանց մէջ իյնան :

Սերժապէս խօսքերնիս հոս  
կուգայ թէ ծնողք իրենց զաւ  
կընէրը ուղղելու համար պէտք  
է որ անոնց վրայ ունեցած իշխա  
նական ազդեցութիւննին չկոր  
սընցընեն . վասն զի կը գտնուին  
նաև այնպիսի բնաւորութեամբ  
տղաք որ առանց վախի չեն  
զսպուիր . սակայն դարձեալ կ'ը  
սեմ, որ ասանկ իշխանական կեր  
պերը ան ատեն միայն գործածե  
լու է՝ երբոր ուրիշ ճար մը  
ըլլայ :

Տղայ մը որ դեռ ամէն ըրածը  
երևակայութեամբ միայն ա  
ռանց խելք բանեցընելու կ'ընէ,  
ու շատ բան մէկտեղ տեսնելու  
որ ըլլայ՝ չկրնար մտքին մէջ ամ  
փոփ պահել, թէ որ հակառա  
կութիւն մըն ալ ունենալու ըլ  
լայ իր դաստիարակին հետ, կ'ա



տէ բոլորովին ուսմունքն ալ, ա-  
ռաքինութիւնն ալ, ինչուան և  
ոչ անուանին կ'ուզէ լսել:

Տես ուրեմն թէ ինչ է պատ-  
ճառը որ շատերը բարեպաշտու-  
թիւն որ կ'ըսեն՝ կարծես թէ  
կը սոսկան, և աս սոսկումը ին-  
չուան 'ի մահ կը քշէ. ասա աս  
է խիստ դաստիարակութեան  
պտուղը: Հատ անգամ աչք  
գոցելով պէտք է չտեսնելու զար-  
նել նաև այնպիսի բաները՝ որ  
ըստ ինքեան ուղղութեան կա-  
րօտ են, սպասելով յարմար մի-  
ջոց մը գտնելու, որ տղան յօ-  
ժարութեամբ մտիկ ընէ տուած  
խրատներդ, ու ինքզինքը ջանայ  
չտկել: Ամենևին մի՛ յանդիմա-  
նել տղան՝ ինչուան որ քու կիրքդ  
ալ անոր կիրքն ալ աղէկ մը չանց-  
նի: Թէ որ քու կրքով այլայլած  
ատենդ յանդիմանես զինքը, մէ-  
կէն կ'իմանայ որ դուն բարկու-



Թե՛նէ շարժած կ'ընես, և ոչ թէ  
 իրաւամբ ու իր աղէկութիւնը  
 ուզելուդ համար, որով բոլորու-  
 վին ալ կը կորսընցընես անոր վրայ  
 ունեցած ազդեցութիւնդ: Իսկ  
 թէ որ տղուն կ'իրք ելած ատենը  
 զինքը յանդիմանես, իր միտքը  
 կապուած է, ազատ չէ որ քեզի  
 շիտակ յանցանքը խոստովանի,  
 կրիցը յաղթէ, ու տուած խրատ-  
 ներուդ օգտակարութիւնը ճանչ-  
 նայ. անով վրադ ունեցած հա-  
 մարմունքն ալ կ'երթայ: Միշտ  
 այնպէս զքեզ ցուցուր տղուն որ  
 իմանայ թէ դուն քու տէրդ ես  
 ու գիտես թէ երբ ինքզինքդ  
 պիտի բռնես, և աս բանը ամէն  
 բանէ աւելի քու համբերութե-  
 նէդ կ'իմանայ: Այլ որ զինքը  
 բանի մը համար պիտի խրատես,  
 զեն չտար, ինչուան օրերով ալ  
 հարկ ըլլայ սպասել՝ պիտի սպա-  
 սես. միայն թէ յարմար միջոց



մը գտնես որպէս չի կարող ըլլաս  
 զինքը ուղղել: Ամենեին մ'ըսեր  
 տղուն իր պակասութիւնը ա-  
 ուանց իրեն ցուցնելու նաև այն-  
 պիսի կերպ մը, որով սիրտ ընէ,  
 պակասութեանը յաղթելու,  
 վասն զի չոր ցամաք կերպով  
 տղուն պակասութիւնները առ-  
 ջևը շարելը՝ անոր տխրութիւն  
 ու վհատութիւն կը բերէ, ուս-  
 կից պէտք է շատ զգուշանալ:  
 Թէ որ տղայ մը քիչ մը խօսք  
 հասկըցող ըլլայ, պէտք է կա-  
 մաց կամաց յորդորել զինքը որ  
 սկսի ուզել որ ուրիշները իր պա-  
 կասութիւններն ըսեն իրեն. ա-  
 սանկով կրնան ըսուիլ իր պակա-  
 սութիւնները՝ առանց զինքը  
 վշտացնելու. բայց ասոր մէջ  
 ալ նայելու է որ շատ բան մէկէն  
 չըսուի:

Պէտք է գիտնալ որ տղոց  
 գլուխը տկար կ'ըլլայ ու զուար-



Ճուժիւն աւելի կը սիրեն , ուս-  
տի իրենցմէ պէտք չէ պահան-  
ջել շատ ճշտութիւն , ու չափէ  
դուրս ծանրակացութիւն : Տղաք  
կրնան նաև ինչուան մաղձոտիլ  
երբոր միշտ չուզած խօսքերնին  
լսեն , որտնեղ մեղադրութիւն ,  
խրատ ու սպառնալիքներ :

Հիները աւելի լաւ հասկըցեր  
էին աս բանս . անոր համար կը  
տեսնենք որ Աբրայեցիք , Ա-  
գիպտացիք և Յոյնք գլխաւոր  
գիտութիւնները , առաքինու-  
թեանց սկզբունքները ու քա-  
ղաքավարութիւնը ոտանաւոր-  
ներով ու նուագարաններով ի-  
րենց տղոցը կը սորվեցընէին :  
Մտիկայ մեր սովորական ոճէն  
չատ տարբեր ըլլալով , տգէտ  
մարդիկ ինչուան չեն ուզեր հա-  
ւատալ : Մայց քիչ մը պատմու-  
թիւն գիտցողը ամենևին չտա-  
րակուսիր , որ աս տեսակ ոճը ու



կրթութիւնը սովորական բան  
մը դարձեր էր հին ատենը : Աւ-  
րեմն մենք գէթ աս նայինք որ  
որչափ կարելի է բռնած կեր-  
պերնուս մէջ օգտակարին հետ  
զուարճութիւնն ալ խառնենք :

Թէպէտ և անկարելի երե-  
նայ բնութեամբ խեռ ու խօսք  
մտիկ չընող տղոց առանց վախի  
բան մը ընել տալը , 'ի վերայ  
այսր ամենայնի համբերու-  
թեամբ ուրիշ ամէն կարելի  
դարմաններն ընելէն վերջը մի-  
այն պէտք է անոր ձեռք զար-  
նել : Միշտ տղոց որոշ հասկը-  
ցընելու է թէ իրենցմէ պահան-  
ջուածը ինչ բան է , և թէ ինչ  
պէս դիւրին կերպով զանիկայ  
կատարելով գոհ կրնան ընել  
իրենց մեծերը . ասոնք ըսելու  
ատեն ամենեւին տխրութեան և  
իրենց կամ վրայ չվստահելու նը-  
շան պէտք չէ տալ , ապա թէ ոչ



մտքերնին կը խռովի, ու սրտերնին կը կոտորի. տաքարիւն էղողը աւելի կը տաքնայ, կը բարկանայ, իսկ տկարամիտը բոլորովին ապուշ կը դառնայ: Ատիւրան զօրաւոր դեղերուն կը նմանի որ ծանր հիւանդութիւններուն կուտան. անանկ որ այնպիսի դեղերը թէպէտ հիւանդին ներսը կը մաքրեն, բայց բնութիւնը սաստիկ այլայլելով գործարանները կը տկարացնեն, անոր համար ալ կը տեսնենք որ վախով մեծցած մարդը միշտ տկար կ'ըլլայ:

Ահտք չէ առանց պատժելու սպառնալ տղոց, որպէս զի սպառնալեաց յարգը չերթայ, բայց որչափ կարելի է նայելու է որ միշտ սպառնալիքէն քիչ ըլլայ տրուած պատիժը: Պատժելու ատեն ալ ջանալու է որ ըստ կարի տանջանքը թեթեւ ըլլայ,



միայն թէ այնպիսի պարագանե-  
 ըով տրուի՝ որ տղան անոնցմով  
 սաստիկ ամբշնայ, առնուի, ու  
 ըրածին վրայ զղջայ. զոր օրի-  
 նակ ըսէ իրեն թէ որչափ ջանա-  
 ցի որ աս բանիս կարօտ չլլաս՝  
 ու ճար չեղաւ. ձեւացուր թէ որ-  
 չափ վշտացած ես աս բանիս  
 վրայ. և իր առջևը ուրիշ մար-  
 դու մը ըսէ թէ որչափ խեղճ են  
 անոնք որ անխելքաբար իրենց  
 պատիւը մէկ ստրկի ընելէն վեր-  
 ջը՝ պատժոյ ալ արժանի կ'ըլլան.  
 սկսէ ծանրէն քաշել, ու հետը  
 առջինին պէս ընտանու թեամբ  
 մի վարուիր, ինչուան որ չտես-  
 նես որ սաստիկ տրտմեր ու միտի-  
 թարու թեան կարօտ է. և աս  
 պատիժը կրնաս թէ ամենուն  
 առջև և թէ ծածուկ տալ, ինչ  
 պէս որ քեզի տղուն համար օգ-  
 տակար կ'երևայ. թէ որ կ'ուզես  
 զինքը սաստիկ ամբշցընել, հար-



կաւ ամենուն առջևը կը պատ-  
 ժես . իսկ թէ որ կ'ուզես իրեն  
 խմացրնել թէ վրան կը խնայես  
 ու չես ուզեր որ ուրիշներուն դի-  
 մացն ալ խաղթ ու խայտառակ  
 ըլլայ՝ հարկաւ առանձին պատիժ  
 մը կուտաս : Տայց աս հասարա-  
 կաց առջև ամբողջները ան ա-  
 տենին աւելի պահելու է՝ երբոր  
 ուրիշ ճար մը չըլլայ : Աս ալ  
 շատ օգտակար է որ երբեմն խե-  
 լացի մարդ մը գտնես որ երթայ  
 տղան միտիթարէ , ու անոր ըսէ  
 ան բաները՝ որ նոյն ատեն քեզի  
 չիյնար ըսել , անոր չափազանց  
 ամօթը փարատէ ըսելով որ ե-  
 ղածը եղած է , բան չկայ , մէյ-  
 մրն ալ չես ըներ . ու յորդորէ  
 որ նորէն քու քովդ դայ . և տը-  
 ղան այլայլութեանը ատեն կա-  
 ընայ անոր համարձակ իրեն  
 սիրտը բանալ , որ քու դիմացդ  
 չէր համարձակեր ընելու : Ար-



պէս զի տղան միտքը չդնէ թէ  
 դուն զինքը քու ամէն ըսածիդ  
 բռնի հնազանդեցրնելու համար  
 միայն աս բաներս կ'ընես իրեն ,  
 ջանա այնպէս կերպ մը բռնել  
 որ տղան ինքզինքը արժանի սե-  
 պէ տուած պատժիդ ու սիրով  
 յանձն առնու , իսկ քեզի մնայ  
 միայն վերջը անոր սիրտը առ-  
 նել : Ամէն մարդ պէտք է աս ընդ-  
 հանուր կանոնները ըստ կարի  
 մասնաւոր պարագաներու յար-  
 մար գործածէ . վասն զի մար-  
 դիկ , մանաւանդ տղաք միշտ նոյն  
 պէս չեն մնար , այն բանը որ այս  
 օր անոնց օգտակար է՝ վաղը  
 մնասակար կրնայ ըլլալ . ուստի  
 միշտ միակերպ ոճ մը բռնելը չի  
 կրնար օգտակար ըլլալ :

Արչափ որ ըրած վարդապե-  
 տու թիւններդ առանց բան ծա-  
 խելու ընես՝ այնչափ աւելի ա-  
 ղէկ է : Ահկ ուրախ ու զուարթ



ընտանի խօսակցութեամբ մը աւելի կրնայ մէկը անթիւ օգտակար բաներու մէջ կըթել տղաքը, քան թէ երկայն բարակ վարդապետելով: Շատ տղաք տեսեր եմ որ խաղալով միայն կարգաւ սորվեր են. իրենց վրայ եղողները մէկ գիւրք մը կ'առնեն կը կարդան, ու մէջէն զուարճալի բաները իրենց կը պատմեն, անով միանգամայն կամաց կամաց գրերն ալ անոնց կը սորվեցընեն. ասանկ տղաք շատ կը զուարճանան ու կը փափաքին որ իրենք իրենցմէ ալ կարենան կարդալ, ու միշտ անոնց պատմելուն չսպասեն:

Շատ անգամ տղոց կարդալու սէր չունենալուն պատճառը ան է որ գրաբառի վրայէն իրենց կարդալ կը սորվեցընենք. ուստի գրերը հանելու համար քաշած նեղութիւննին կարդա-



ցած զուարճալի բաներնին հաս-  
 կրնալով մոռնալու տեղ՝ ան ալ  
 հասկրնալով՝ բոլորովին ալ կար-  
 դալէ կը պաղին . ընդհակառակն  
 թէ որ իրենց հասկըցած աշ-  
 խարհաբառ լեզուով գրուած  
 զուարճալի պատմութեան մը  
 վրայ կարդալու կըթուլթիւն ը-  
 նելու ըլլանք , լսած պատմութե-  
 նէն զուարճանալով՝ անոր սիրոյն  
 համար կը նստին յօժարու-  
 թեամբ ու անաշխատ կարդալ  
 կը սորվին : Նարձեալ որպէս  
 զի տղաք կարդալու սէր ձգեն ,  
 իրենց փառաւոր ոսկեկազմ գիրք  
 մը տալու է մէջը բարակ քա-  
 շուած պատկերներով , ու գե-  
 ղեցիկ գրերով զարդարած , որ-  
 պէս զի քանի որ անոր վրայ  
 նային՝ սրտերնին բացուի , և  
 ուսման ամէն դժուարութիւն-  
 ները մոռնան . բայց ջանալու է  
 այնպիսի գիրք մը ընտրել , որ



կարճ ու զուարճալի պատմու-  
թիւններով լեցուն ըլլայ : Ա-  
սանկ գիրք մը որ մէյմը տղուն  
ձեռքը տուիր՝ ալ անկէց ետե  
դուն հոգ մ'ըներ անոր կարգալ  
սորվելուն , և աղէկ կարգացը-  
նելու համար ալ զինքը մի նե-  
ղեր . թող որ բնական կերպով  
ինչպէս որ կը խօսի այնպէս  
հնչէ բառերը . աւելորդ զարդեր  
ու ձայնի ելեւէջներ իրմէ մի պա-  
հանջեր՝ որոնք շատ անգամ բը-  
նականի ալ դէմ կ'ըլլան : Ա՛յ  
մը որ լեզուն բացուի , կուրծքը  
աւելի ուժովնայ , կարգալու ալ  
աւելի վարժի , ինքիրմէ կը սկսի  
աւելի շնորհքով ու յստակ կար-  
գալ :

Գիր գրել սորվեցընելուն  
կերպն ալ գրեթէ ասոր նման  
պէտք է ըլլայ : Արբոր տղաք  
կը սկսին քիչ մը կարգալ , իրենց  
զուարճութիւն մը դարձընելու



է գրեցուն ձևերը գծելը, ու թէ  
որ շատ տղաք մէկտեղ ըլլան՝  
մէջերնին մէկմէկէ աղէկ ձևա-  
ցրնելու ջանք մտցրնելու է :  
Արդէն տղաք իրենք իրենցմէ  
թղթի վրայ ձևեր քաշել կը սի-  
րեն, թէ որ մարդ քիչ մը անոնց  
աս բնական յօժարու թեանը օգ-  
նելու ըլլայ՝ առանց զիրենք շատ  
հեղելու, կը սկսին զուարճանա-  
լով ձևացրնել գրերը, որով կա-  
մաց կամաց գրելու կը վարժին :  
Թէ որ մէկը ուզենայ որ աւելի  
ջանք ընեն, կրնայ նաև իրենց  
խոստանալ այնպիսի մէկ ընծայ  
մը՝ որ թէ անոնց ախորժելի ըլ-  
լայ, և թէ ամենեւին վնասակար  
հետեանք մը չունենայ :

Թէ որ տղուն ըսելու ըլլաս .  
Մէկ տոմսակ մը գրէ ինծի, աս  
բանս եղբօրդ կամ հօրեղբօրդ  
խրկէ՝ շատ կ'ուրախանայ . բաւա-  
կան է թէ նոյն օրուան առնելու



Համարը մտածելով չխուսի :  
 Սուրբն ( ) դաստինոս ինքիր վրայ  
 փորձած ըլլալով կ'ըսէ թէ  
 ազատ հետաքրքրութեամբ ա-  
 լելի կ'արթըննայ տղոց միտքը ,  
 քան թէ վախ ձգող կանոնով  
 կամ բռնադատութեամբ :

Սովորական դաստիարակու-  
 թեանց մէջ եղած մեծ սխալ-  
 մունքը ան է որ դաստիարակնե-  
 րը ամենայն զուարճութիւն մէկ  
 դի կը դնեն , ամենայն ճանճրու-  
 թիւն ալ մէկալ դին . ամենայն  
 ճանճրութիւն կարդալու մէջ ,  
 ամենայն զուարճութիւն զբօ-  
 սանքի մէջ : Անդձ տղան ինչ  
 կրնայ ընել . ակռայ ակռայի վրայ  
 դրած կը համբերէ կարգին , ու  
 խաղի ժամանակը գալուն պէս  
 մէկէն կը վազէ որ խաղայ :

Արեմն աս կարգը փոխենք ,  
 ու ուսմունքը նայինք որ սիրելի  
 ընենք տղոց . թողունք որ եր-



բեմն քիչ մը ատեն կարդալէն  
 ելլեն , հանգիստ ընեն զուար-  
 ճանան . և ասիկայ շատ հարկա-  
 ւոր է իրենց՝ որպէս զի քիչ մը  
 մտքերնին ալ հանգչի :

Թողունք որ քիչ մը աչքերնին  
 ասդին անդին պտրտցընեն . ա-  
 տեն ատեն միակերպուիլ կտորե-  
 լու համար դասէն դուրս բան մը  
 պատմենք որ քիչ մը հանգչին ,  
 սրտերնին բացուի , որպէս զի  
 ետքը աւելի եռանդով սորվին .  
 այսպէս քիչ մը հանգիստ ընե-  
 լէն վերջը՝ նորէն զիրենք կամա-  
 ցուկ մը իրենց բանին հետ ընե-  
 լու է : Նոյն հակառակն թէ որ  
 միակերպ երկայն ատեն ուսման  
 հետ ըլլան՝ շատ կը ճանճրանան :  
 Մայց շատ անգամ դաստիարակ  
 ները իրենց դիւրու թիւնը փրն-  
 տուելով , ու չուզելով միշտ տղոց  
 վրայ կենալ , իրենց ճիշդ ուսման  
 կարգ մը կը դնեն , ու ան կարգէն



ամենեին չեն ուզեր խոսորիլ :  
 Տղոց զուարճութեանցը մէջ  
 պէտք է ամենեին այնպիսի բա-  
 ներ գտնուին՝ որոնց վրայ կարե-  
 նան իրենք սաստիկ սէր ձգել .  
 իսկ ան բաները որոնցմով մշտ-  
 քերնին կը հանգչի , կը զուար-  
 ճանան , օգտակար բաներով  
 հետաքրքրութիւննին կը լեցուի ,  
 մարմնոց շարժուածքնին կը կըր-  
 թուի՝ պէտք է որ անպակաս ըլ-  
 լան տղոց զբօսանացը մէջ :  
 Շարժմունք ընելու խաղերը  
 տղոց շատ սիրելի են . կեցած  
 տեղերնէն ալ միայն ատեն ատեն  
 փոխուելու ըլլան՝ կ'ուրախա-  
 նան . իրենց խաղալու համար  
 ամուճ մը կամ գնդակ մը բա-  
 ւական է : Աստի զիրենք զուար-  
 ճացընելու բաներ գտնալու հա-  
 մար ալ շատ հոգ պէտք է ընել .  
 շատ բան իրենք իրենցմէ ալ կը  
 հնարեն՝ թէ որ իրենց թողուս ,



և ըրածներնուն հաւնիլ ցուցը-  
 նես . ու թէ որ յանկարծ մէկ  
 բանի մէջ գլուխնին շատ տաք-  
 նայ զիրենք չափաւորես : Միայն  
 որչափ կարելի է աս ալ իրենց  
 հասկըցընելու է թէ մարդուս  
 միտքը որչափ կը զուարճանայ ու-  
 ըիշի հետ խօսելով , նոր նոր լու-  
 ըեր , պատմութիւններ լսելով ,  
 ու շատ տեսակ խելք սորվելու  
 վարպետ խաղերով : Աս բաները  
 մէկէն նոյն ատեն չկարենան նէ  
 ալ ըմբռնել ու 'ի գործ դնել ,  
 ատեն կուգայ որ ինքիրեն կը  
 սկսին կատարել . բայց պէտք չէ  
 ասկէց աւելի տղոց ախորժակը  
 բռնադատել , այլ միայն առիթ-  
 ներ տալու է : ( )ը կուգայ որ  
 մարմիննին բնական աշխուժու-  
 թիւնը կը կորսընցընէ , ու մըտ-  
 քերնին կը սկսի աւելի բանիլ :

Ան ծանր զբաղմունքները թէ  
 որ զուարճութեամբ թէ թեւաւ



լու ըլլան՝ տղոց փնասակար դբօ-  
 սանքներու համար ունեցած է-  
 ոանդր շուտ կը մարի : Այն զի  
 տղաքը զուարճութեանց՝ ետեւէ  
 ընտղը աւելի միակերպութիւնն  
 ու ճանճրութիւնն է : Այն որ  
 մէկ աղջիկ մը չճանճրանայ մօրը  
 քով կենալէն, չերթար իրեն  
 չար ընկերներ չփնտուեր :

Ասակածելի մարդկանց հետ  
 ամենեին պէտք չէ թողուլ որ  
 տղաք ընկերութեամբ զուար-  
 ճանան : Այն մանչ տղաք աղջկանց  
 հետ, և ոչ աղջիկները մանչ  
 տղոց հետ : Օգուշանալու է  
 նաև ան խաղերէն որոնցմով  
 տղոց միտքը կը ցրուի ու կ'իրք  
 կ'ելլեն, և այնպիսի շարժմունք-  
 ներ ընելու կը ստիպուին որ աղ-  
 ջիկ տղու չվայլեր . նոյնպէս ըզ-  
 գուշանալու է որ ստէպ ստէպ  
 տնէն դուրս չելլեն, ու ան տե-  
 սակ ընկերութիւններ չընեն որ



շատ անգամ տնէն դուրս ելլելու  
 հարկադրին : Մարդս քանի որ  
 զուարճութեանց ետեւէ ըլլալով  
 ապականուած չէ, ու սրտին մէջ  
 դեռ չէ գոյացած սաստիկ մէկ  
 կիրք մը, դիւրաւ կ'ուրախանայ .  
 վասն զի բուն ուրախութեան  
 աղբիւրը առողջութիւնն ու ան-  
 մեղութիւնն է . բայց անոնք որ  
 մէյմը դժբաղդութեամբ հեշ-  
 տութիւններու կը վարժին, չա-  
 փաւոր զուարճութիւններու հա-  
 մը չեն առներ, ու ամէն օր հան-  
 դատութիւննին կորսընցուցած  
 ուրախութիւն գտնելու ետեւէ  
 կ'ըլլան, ու չեն գտներ :

Մարդուս ախորժակը ինչպէս  
 զուարճութեանց մէջ ասանկ ալ  
 կերակրեղինաց մէջ կրնայ ապա-  
 կանիլ : Մն աստիճան համով  
 քաներու կը վարժի, որ հասա-  
 րակ ու շատ համեմած կերա-  
 կուրները իրեն անախորժ ու



անհամ կուգան : ( ) Գուշանանք  
 ուրեմն , չթողունք որ հողւոյն  
 վրայ ասանկ մեծ այլայլութիւն  
 մը ըլլայ , որուն հետեանքը ձան-  
 ճրութիւնն ու տհաճութիւնն  
 է . մանաւանդ տղոց համար աւել-  
 լի վախնալու է որ ամէն մտքեր-  
 նին եկած բանը մէկէն կ'ուզեն ,  
 ու ինչուան որ չառնեն չեն դա-  
 դրիր . ուստի նայինք որ իրենց  
 ախորժակը պարզ բաներու վար-  
 ժեցրնենք , որպէս զի զիրենք  
 կերակրելու համար ազնիւ ու  
 փափուկ կերակուրներ , ու զուար-  
 ճացրնելու համար մեծ մեծ զբօ-  
 սանքներ ձարելու հարկ չըլլայ :  
 Եւ յուժկալ մարդը միշտ բաւա-  
 կան ախորժակ կ'ունենայ , ուս-  
 տի ախորժակը բանալու համար  
 զանազան համեմներու հարկ  
 չըլլար : Նինքնէն մէկը կ'ըսէր  
 թէ “ Նշտութեան ամենէն  
 աղէկ գործաւորը ժուժկալու-



Թիւնն է , Առ ժկալու թեամբ ,  
 որ թէ մարմնոյն և թէ հոգւոյն  
 առողջութիւն կուտայ , մարդս  
 միշտ քաղցր ու չափաւորեալ ու  
 րախութիւն մը կ'ունենայ , և  
 զուարճանալու համար ոչ գոր-  
 ծիքներու կարօտ կ'ըլլայ , ոչ  
 տեսարաններու և ոչ ծախքեր  
 ընելու . մէկ պզտիկ խաղ մը ,  
 կարգացմունք մը , մէկ կամաւոր  
 աշխատանք մը , ժուռ վալ մը ,  
 աշխատութենէ վերջը անմեղ  
 խօսակցութիւն մը աւելի կ'ու-  
 րախացրնեն զինքը ու կը զուար-  
 ճացրնեն , քան թէ քաղցրա-  
 ճայն նուագարանները :

Իրաւ է թէ հասարակ պարզ  
 զուարճութիւնները այնչափ վառ-  
 վրունն ու զգալի չեն ըլլար , իսկ  
 մէկալնոնք մարդուս սիրտը կը  
 շարժեն ու միտքը կը զմայլեցը-  
 նեն . բայց պարզ զուարճու-  
 թիւններուն օգուտը աւելի է .



վասն զի առանց վնասի կամ  
 գէշ հետեւանքի մը մարդս կ'ու-  
 րախացընեն ու կը զուարճացը-  
 նեն. իսկ մէկալ զուարճութիւն-  
 ները խարդախած գինիի կը  
 նմանին, որ առջի բերան չափէն  
 աւելի կը զուարճացընէ, բայց  
 յետոյ մարդուս վրայ այլայլու-  
 թիւն կը բերէ, ու առողջու-  
 թեանը վնաս կուտայ: Ասանկ  
 ալ վառվրուուն ու սաստիկ զուար-  
 ճութիւններով թէ՛ հողւոյն և  
 թէ՛ ախորժակին բարեխառնու-  
 թիւնը կը կորսուի: Տղոց վրայ  
 եղողներուն ընելու բանը ան պի-  
 տի ըլլայ որ զիրենք աս պարզ  
 կենաց վարժեցընեն, ու կըցած-  
 նուն չափ մէջերնին աս սովորու-  
 թիւնը հաստատեն. հասկըցը-  
 նեն անոնց թէ բոլոր մէկալ  
 զուարճութիւնները մարդուս  
 որչափ վնասակար են. ամենևին  
 զիրենք ինքնազուխ չթողուն,



ինչպէս որ ոմանք սովորաբար  
կ'ընեն ան հասակին մէջ որ կը  
սկսին կրքերը արթըննալ, ընդ-  
հակառակն տղաք ան ատենը  
աւելի խնամքի ու զգուշութեան  
կարօտ են :

Իրաւ է որ դաստիարակու-  
թեան մէջ անզգայ մը կրթե-  
լուն պէս դժուարին բան չկայ :  
Ս ասն զի աշխոյժ ու զգայուն  
բնութիւն ունեցող տղան թէ-  
պէտ մեծամեծ պակասութեանց  
մէջ կրնայ իյնալ, կրքերն ու  
ինքնահաւանութիւնը կը մոլո-  
րեցընեն զինքը, բայց անանկով  
ալ դարձեալ մեծամեծ օգնու-  
թիւններ ունի, որոնցմով վեր-  
ջապէս կրնայ զգաստանալ. կըր-  
թութիւնը իրեն սրտին մէջ  
ծածկուած բողբոջ մըն է որ կը  
ծլի, ու ատեն ալ կուգայ որ  
պտուղ ալ կուտայ, երբոր փորձ  
առութիւնը սկսի խելքին օգ-



նել, ու կրքերը երթալով մա-  
 ըին . գէթ մարդ կը գիտնայ թէ  
 ինչով կրնայ զինքը բանի մը բե-  
 ըել ու հետաքրքրուիլ շարժել .  
 այլ և այլ բաներով կրնայ զինքը  
 յորդորել և ուզած բաները սոր-  
 վեցընել, իրեն անճնական պա-  
 տիւր յիշեցընելով և այլն . բայց  
 անզգայ տղու մը ասոնցմէ մէկն  
 ալ չկրնար ընել : Մնանկին ա-  
 մէն մտածմունքները անհաս-  
 տատ, մէյմը կուգան մէյմը կ'եր-  
 թան, և ոչ երբէք պէտք եղած  
 տեղը կ'ըլլան . խրատով չես կըր-  
 նար ինչպէս որ պէտք է անոր  
 սիրտը շարժել . ամէն բան կը լսէ  
 ու բան մը հասկընար : Մ'ս ան-  
 զգայութեամբ կը սկսի տղան  
 անհող ըլլալ, ու ինչ բանի որ  
 ձեռք զարնէ՝ կը ձանձրանայ :  
 Թէ որ չփութայ մարդ տղայու-  
 թեան ատենէն աս պակասու-  
 թեան դիմացը առնել, անկէց



վերջը որչափ ալ աղէկ դաստիարակութիւն ջանայ տալ՝ չկրնար վրան փոփոխութիւն մը ընել : Ըստ մարդիկ կան որ առանց աս բաներու աղէկ մը խելք հասցընելու կ'ըսեն թէ բնութիւնն է որ մարդս գովելի կ'ընէ , դաստիարակութիւնը չէ . որ ընդ հակառակն պէտք էր ըսէին թէ բնութիւններ կան որ անպտուղ անբեր երկիրներու նման՝ իրենց վրայ եղած աշխատանքին համեմատ բերք չեն տար : Ալեւի ալ կը գէշնան բաները՝ երբ որ դժուարին դաստիարակութիւնները խափանուին կամ զանց ըլլուին , և կամ 'ի սկզբան անկարգ կերպով տրուին :

Վիտնալու է որ այնպիսի բնութեամբ տղաք ալ կը գտնուին որ մարդս շատ կը խաբուի անոնցմէ : Առջի բերան սիրուն ու շնորհալի կ'երևնան . որովհետև



մանկական հասակը շնորհք ու  
 պայծառութի մը ունի՝ որ ամէն  
 բան կը գոցէ . այնպիսի սիրելի  
 կերպեր ունին տղաք՝ որ չեն թո-  
 դուր որ դիմացինը մօտէն անոնց  
 դէմքին գծագրութիւնը բարակ  
 դիտէ : Ալ որովհետեւ ան հա-  
 սակին մէջ մարդս մեծամեծ  
 կատարելութիւններու չապասեր ,  
 քիչ մը խելացի բան մըն ալ տե-  
 սածին պէս կը զարմանայ վրա-  
 նին . որչափ ալ ծուռ դատաս-  
 տաններ ընեն աչքի չերեար ,  
 անկեղծութեամբ ըրած են կ'ը-  
 սուի . ու իրենց մարմնոյն ան-  
 հանդարտութիւն մտքերնուն ար-  
 թնութեանը նշան կը սեպուի :  
 Ասկէց ալ կ'իմացուի թէ ման-  
 կութեան հասակին խոստմունքը  
 շատ ու անոր համեմատ երե-  
 ցած արդիւնքը քիչ բան է . ա-  
 սոր համար կը տեսնենք ան տը-  
 ղան որ ինչուան հինգ տարուան



եղած ատենը խելացի երևնա-  
 լուն համար ամէնքը զինքը ձեռ-  
 քի վրայ կը բռնէին, քանի որ  
 տարիքը կ'առնէ կը սկսի երեսէ  
 իյնալ ու արհամարհուիլ: Ա-  
 րեմն տղոց վրայ տեսնուած ա-  
 մէն տեսակ կատարելութեանց  
 մէջ մէկ բան մը միայն կայ՝ ո-  
 ղուն վրայ կրնայ մարդ համա-  
 ղունն ունենալ, այսինքն խելք  
 բանեցընելով ուղիղ դատաս-  
 տան ընելը. աս կատարելու-  
 թիւնը իրենց հետ երթալով  
 կ'աճի՝ թէ որ աղէկ մշակուելու  
 ըլլայ. վասն զի տղաք մեծնալով  
 երբոր բանի գործի մէջ կը մըտ-  
 նեն, մէկ կողմանէ կ'իրքերով ու  
 մէկալ կողմանէ գէշ մարդկանց  
 հետ վարուելով այնպէս կ'ըլ-  
 լան՝ որ մանկութեան շնորհքնե-  
 ըր իրենց վրայէն կ'երթան,  
 եռանդնին կը մարի, ու սրտեր-  
 նին կը խստանայ: Արեմն նայէ



որ խմանաս թէ կրթելու տղադ  
 հետաքրքրու թիւն ունի՞ թէ չէ,  
 աղէկ մարդկանց նմանելու ջանք  
 ու փափաք ունի՞ թէ չէ: Մայց  
 աս բաները վրան չտեսնես նէ ալ՝  
 պէտք չէ որ շուտով յուսահա-  
 տիս, ու ամէն աշխատանքս փուճ  
 է ըսելով ձանձրացած ետ քա-  
 շուիս. հապա շուտ մը ամէն  
 ջանք ըրէ որ տղուն մտաց կարող  
 ղու թիւներն արթնցնես, զինքը  
 ան թմրու թենէն ազատես: Սէ  
 որ առաջուց աս դժուարու թիւներ  
 խմանաս, առջի բերան մի՛ փու-  
 թար ուրիշ պէտք եղած կրթու-  
 թիւները տալու. որպէս զի  
 չըլլայ թէ անով տղուն յիշողու-  
 թիւներ բեռնաւորուի և ուղեղին  
 ծանրու թիւն տայ. խիստ կա-  
 նաններով ալ տղան մի՛ նեղեր.  
 ուրախացուր զինքը, և որպէս  
 զի ինքիրմէ ինքնահաւանութե-  
 մէջ չիյնայ, մի՛ վախնար ամե-



նւելին, խոհեմութեամբ իմացուր  
 իրեն թէ ինքը աւելի ի՞նչ բանի  
 յարմարութիւն ունի, քիչ բա-  
 նով ալ գոհ եղիր. իր ըրած  
 պզտի յառաջագիմութիւններն  
 ալ ցուցուր իրեն. հասկըցուր  
 թէ զուր տեղը կը վախնայ որ  
 ընելու սկսած աղէկ բաները չը-  
 կարենայ գլուխ հանել. ուրիշ  
 տղոց աղէկութիւններն ալ պատ-  
 մելով յորդորէ զինքը որ անոնց  
 ջանայ նմանիլ: Ախաանձը այն-  
 չափ սաստիկ է տղոց մէջ որ  
 մարդ չկարծեր. երբեմն կը տես-  
 նենք որ ծածուկ տկարութեամբ  
 մը կը հալի կը մաշի տղան, վասն  
 զի կը տեսնէ որ ուրիշները իրմէ  
 աւելի կը սիրուին ու կը շոյուին:  
 Ալ աս անգթութիւնը սովորա-  
 կան բան մըն է մայրերու որ տը-  
 դոցը մէկը աւելի կը սիրեն ու  
 վրան կը գուրգուրան, անով մէ-  
 կալնոնք չարաչար կը տանջեն.



ընդ հակառակն աս բանս իբրև  
 դարմանն ան ատենը պէտք է ը-  
 նել՝ երբոր տղայ մը վերջի աս-  
 տիճանի անզգայութեան մէջ  
 ընկած ըլլայ, և զինքը առաջ  
 բերելու ուրիշ ճար չգտնուի:  
 Արբոր կը տեսնես որ կըթելու  
 տղադ կը լքանի, վրան յուսա-  
 հատութիւն կուզայ, անոր առ-  
 ջևը դիր իրմէ ալ աւելի պակ-  
 սութիւններ ունեցող տղաքը.  
 որ անոնք մտածելով սիրտ կ'առ-  
 նու, կը մխիթարուի, ու մէյմըն  
 ալ չվհատիր:

Արբեմն երբեմն կամաւ թող  
 որ որոնց վրայ որ կը նախանձի,  
 կամ որ բանը որ կը ջանայ շտկել՝  
 անոնց վրայ պզտիկ յաղթու-  
 թիւններ ընէ. թէ որ կրնաս  
 զինքն ալ յորդորէ որ քեզի հետ  
 իր վախկոտութեանը վրայ ծի-  
 ծաղի. ցուցուր իրեն թէ ինչ  
 պէս շատ վախկոտ մարդիկ վեր-



ջապէս իրենց բնաւորութեան  
 յաղթեր են . և թէ վախկոտութիւնն  
 ու ծուլութիւնը որչափ մարդկանց  
 միտքը բթացուցեր են . ուստի անփոյթ ու անզգայ  
 մարդիկ ինչ զարմանալի հանձար  
 ալ ունենան՝ միշտ ապուշ կը մնան ,  
 ու մէկու մը դիմացը պատիւ չեն  
 ունենար : Վայցնայէ որ չըլլայ  
 թէ աս կըթուլութիւնները ընելու  
 ատենդ խստութիւն ու նեղսրտութի  
 ցուցրնես . վասն զի անզգայ ու  
 վախկոտ տղան մէկ բանէ այնպէս  
 չտոսկար ինչպէս խստութենէ :  
 Վսկ այն աշխատանքն որ ստիպուած  
 ես անոր տալու , և գիտես որ իրեն  
 ախորժելի չէ , ամէն ջանք ըրէ որ  
 այն բանը տղուն բնաւորութեանը  
 յարմարցրնես , դիւրացրնես ու  
 զուարճալի ընես . երբեմն ալ  
 հարկ կ'ըլլայ զինքը քիչ մը  
 արհամարհութեամբ . ու



յանդիմանու թիւններով դրդել  
արթնցրնել : Մայց աս բանս  
պէտք չէ որ դուն ընես , հասկա  
ուրիշ ստորին մարդու կամ տը  
ղու մը ձեռքով , ու դուն ամե  
նակին գիտցող մ'երևար :

Սուրբն ( ) գոստինոս կը պատ  
մէ թէ իր մայրը սրբուհին Սու  
նիկա պզտիկուց գէշ սովորու  
թիւն ըրեր է եղեր՝ զուտ գինի  
խմելու . դաստիարակը ինչ բըռ  
նու թիւն , ինչ խստու թիւն որ  
կ'ընէ՝ չկրնար զինքը ան սովո  
րու թեւէն ետ կեցրնել . անգամ  
մը տանը ծառաներուն մէկէն  
յանդիմանու թիւն մը լսելով  
այնչափ կը զգաստանայ՝ որ մէյ  
մըն ալ բերանը զուտ գինի չը  
ղներ : Ս երջապէս , ինչպէս որ  
մարդիկ հիւանդներուն ախոր  
ժակը բանալու կը ջանան , նոյն  
պէս ալ մենք աս տեսակ տղոց  
մտաց ախորժակը բանալու պի



տի ջանանք : Աւրեմն պէտք է  
 թողուլ որ իրենց ախորժակը  
 բացող բաները իրենք փնտռեն  
 գտնեն . ու թէ որ քիչ մը կար-  
 գէ դուրս բան ալ ընեն՝ համ-  
 բերելու է , միայն թէ ծայրը ան-  
 կարգութեան չտանին : Աւելի  
 դժուար է ախորժակ չունեցող  
 ներուն ախորժակ տալ՝ քան թէ  
 անկիրթ ախորժակ ունեցողնե-  
 րունը կրթել :

Վարեկամութիւնն ալ շատ  
 մեծ ու հարկաւոր բան է , և ա-  
 նոր սկզբունքները պէտք է սոր-  
 վեցընել տղոց : Արբոր տղայ մը  
 բաւական յարմարութիւն կը  
 ցուցընէ մէկու մը հետ բարե-  
 կամութիւն ընելու , առանց ի-  
 մացընելու պէտք է դարձընել  
 անոր սիրտը այնպիսի անձանց  
 վրայ որ օգտակար ըլլան իրեն :  
 Ամէն ուզած բանդ բարեկամու-  
 թեան ձեռքովը կրնաս տղուն



գիւրաւ ընել տալ . և ասիկայ  
 ապահով կապ մը կ'ըլլայ ձեռքդ  
 որ անով զինքը 'ի բարին կը քա-  
 շես , բաւական է որ գործածե-  
 լուն կերպը գիտնաս . միայն վախ-  
 նալու է որ չըլլայ թէ բարեկա-  
 մութեան ծայրը անկարգութե-  
 կամ գէշ սիրոյ երթայ : Ան-  
 այնպիսի տղաք ալ որ բնութք  
 խորամանկ , ծածկագործ , ան-  
 տարբեր ըլլալով , գաղտուկ կեր-  
 պով մը ամէն բան իրենց կը քա-  
 շեն . կը խաբեն իրենց ծնողքը ,  
 անոնք ալ վրանին գութ ունե-  
 նալով՝ ամէն ըսածներնուն մտիկ  
 կ'ընեն . դրսուանց իրենց ծնո-  
 ղացը վրայ մեծ սէր կը ցուցը-  
 նեն , կը ջանան անոնց հաճոյա-  
 կան բաներ ընել , իրենց հասա-  
 կակից տղոցմէ աւելի հլու երե-  
 նալ՝ որոնք առանց կեղծաւորու-  
 թեան ամէն բան իրենց բնաւո-  
 րութեանը համեմատ կ'ընեն .



աս իրենց հլութիւնը , որուն տակը անընկճելի կամակորու-  
թիւն մը պառկած է , ուրիշնե-  
րուն ճշմարիտ հլութիւն կ'երե-  
նայ . և իրենց կեղծաւորեալ  
բնաւորութիւնը ինչպէս որ պէտք  
է յայտնի չըլլար՝ ինչուան որ  
շտկուելու ատեննին անցնի :

Սէ որ տղաք մէկ բնաւորու-  
թիւն մը ունին որուն վրայ դաս-  
տիարակութիւնը շահ չկարե-  
նայ ընել , կրնանք ըսել թէ ասի-  
կայ է . աս ալ շիտակ է թէ որ-  
չափ որ չենք կարծեր՝ այնչափ ալ  
շատ է աս տեսակ բնաւորու-  
թիւնը : Նոյնք չեն կրնար հա-  
ւատալ որ իրենց տղաքը չարա-  
սիրտ ըլլան . և երբոր իրենք ի-  
րենցմէ չարասրտութիւն չեն ու-  
զեր տեսներ անոնց վրայ , ուրիշ-  
ներն ալ իրենց յայտնի ցուցը-  
նելու չեն համարձակիր , ասով  
չարը որ ըստ օրէ կ'աճի : Մ



քանիս մեծ դարմանս ան է որ  
 պղտիկուց տղոց ընդարձակ ազա-  
 տութիւն մը տրուի, այնպէս որ  
 մէյմը ամէն յօժարութիւննին  
 դուրս ելլեն. վասն զի ինչուան  
 որ տղաքը լաւ մը չճանչնանք,  
 չենք կրնար զիրենք ուղղել:  
 Տղաք բնութեամբ պարզ ու ան-  
 կեղծ կ'ըլլան. բայց թէ որ քիչ  
 մը զիրենք նեղես կամ առջևնին  
 բան մը կեղծելով ձեացրնես,  
 իրենց առջի պարզութիւնը մէ-  
 կէն կը կորսընցրնեն: Արաւ է որ  
 բարեսրտութիւնը Աստուծոյ մէկ  
 տուրքն է, բայց կրնայ մէկը գէթ  
 բարեսրտութեւ յորդորել տղա-  
 քը վեհանձնական օրինակնե-  
 րով, պատուոյ և անշահասիրու-  
 թեան սկզբունքներով, և հաս-  
 կըցընելով իրենց թէ անձնա-  
 սէր մարդիկ որչափ արհամար-  
 հելի կ'ըլլան: Աստի պղտիկուց  
 քանի որ տղաք իրենց բնական



պարզութիւնն ու անկեղծու-  
 թիւնը չեն կորսընցուցած՝ ջա-  
 նալու է մէյմը իրենց մտերիմ  
 իրենց բնական պարզութեանն  
 ու փոխադարձ բարեկամութե-  
 համը առնել տալ: Աւ ասոր  
 համար ամենահարկաւոր է մա-  
 նաւանդ առաջները տղոց քով  
 այնպիսի մարդիկ դնել որ ամե-  
 նեւին խստութիւն, կեղծաւորու-  
 թիւն, ցածութիւն և շահասի-  
 րութիւն չցուցնեն, և ալ աղէկ  
 է այնպիսի մարդիկ քովերնին  
 դնել որ ուրիշ պակասութիւն-  
 ներ ունենան ու ասոնցմէ ազատ  
 ըլլան: Տղաք բարեկամութեան  
 համար ինչ բան ալ ընեն՝ պէտք  
 է զիրենք գովել, միայն թէ ը-  
 րաճնին անվայել կամ չափա-  
 զանց բան չըլլայ: Այտք է որ  
 ծնողք ալ անոնց վրայ մտերիմ  
 բարեկամութիւն մը ցուցնեն,  
 վասն զի տղաք շատ անգամ չսի



րենն ալ իրենց ծնողացմէ կը սոր-  
վին : Ասոր համար շատ փափա-  
քելի բան է որ ծնողք գէթ զաւ-  
կրներնուն դիմացը իրենց բա-  
րեկամներուն ջրնեն ան աւելորդ  
քաղաքավարութիւնները , կեղ-  
ծաւորեալ բարեկամութիւննե-  
րը , և ամէն տեսակ սիրոյ սուտ  
նշանները . որպէս զի ջրլայ թէ  
նոյն բաները անոնք ալ սոր-  
վելով անկէց վերջը այնպիսի  
սուտ երևոյթներով իրենց սիրոյ  
պարտքը կատարեն ան անձե-  
րուն՝ որոնք սրտանց սիրելու սլար-  
տրկան էին :

Արիշ գէշ բան մըն ալ կայ  
որ սովորաբար աղջիկ տղոց մէջ  
աւելի կը գտնուի , այսինքն ան-  
տարբեր ու ճնչին բաներու վրայ  
ալ սէր ձգել : Ասոնք երկու հո-  
գի իրարու հետ աւրուած չտես-  
նեն , շուտ մը՝ գէթ սրտերնէն՝  
մէկուն կողմը կը սկըսին բռնել ,



առանց պատճառի մէկ բան մը  
 կամ սաստիկ կը սիրեն և կամ  
 սաստիկ կ'ատեն . որուն վրայ որ  
 համարուենք ունին ամենեին ա-  
 նոր պակասութիւնը չեն տես-  
 ներ , իսկ որուն որ չեն հաւնիր՝  
 անոր վրայ ալ ամենեին կատա-  
 ըելութիւն մը չեն տեսներ :  
 Առջի բերանը պէտք չէ աս բանս  
 մտքերնէն հանելու համար հե-  
 տերնին երկայն բարակ վիճել .  
 վասն զի անով աս այլանդակ  
 կարծիքը մտքերնուն մէջ աւելի  
 կը հաստատուի . հապա կամաց  
 կամաց հասկըցընելու է այնպի-  
 սի աղջկան թէ իր սիրած ու  
 չսիրած բաներուն աղէկութիւն  
 ուրիշները աւելի աղէկ կը ճանչ-  
 նան . ուստի առիթը գալուն  
 պէս՝ գործքով ալ ցըցուր թէ իր  
 սիրած բաները որչափ պակասու-  
 թիւններ ու նեղութիւններ ու-  
 նին , և ընդ հակառակն իր ար-



Համարհաճները որչափ դիւրու  
 թիւններ ու օգուտներ ունին .  
 ասոր համար շատ զինքը նեղել  
 ալ հարկաւոր չէ . կը տեսնես որ  
 շուտով ինքիրմէ կը հասկընայ :  
 Անկէց ետքը մէկիկ մէկիկ յի  
 շեցուր իրեն իր անիրաւ տեղը  
 բաժ յամառութիւնները , ու  
 ետքը քաղցրութեամբ ըսէ թէ  
 ասոնց նման պիտի տեսնես նաև  
 հիմակուան ունեցած յամառու  
 թիւններդ՝ երբոր ասոնցմէ ետ  
 կենաս : Աստմէ նաև իրեն թէ  
 իր տարիքը եղած ատենդ դուն  
 ալ ի՞նչ ծուռ կարծիքներ ու  
 նէիր : Վանաւանդ որչափ որ  
 կրնաս յայտնի կերպով հաս  
 կըցուր իրեն թէ մարդ պիտ  
 նալով որ իր սիրած ու չսիրած  
 բաներուն մէջ որչափ բարիք ու  
 գէշութիւններ խառնուած են ,  
 պէտք որ թէ՛ իր բարեկամու  
 թիւնները թէ՛ իր թշնամու



թիւնները մեղմացրնէ , այնչափ  
 սաստիկ ոչ սիրէ և ոչ ատէ :  
 Ամենեին տղոց վարձքի համար  
 զարդեր ու շաքարեղէն կամ խը  
 մորեղէն մի խոստանար . վասն  
 զի ասով երկու գէշ բան կ'ը  
 նես . մէյմը որ կերպով մը ի  
 րենց իրաւունք կուտաս՝ որ ան  
 բաներուն որ ըստ ինքեան պիտի  
 արհամարհէին՝ անոնց վրայ սէր  
 ձգեն . երկրորդ , անկէց վերջը  
 ալ չես կրնար դիւրին կերպով  
 զիրենք ունեցած բանովդ վար  
 ձատրել ու գոհ ընել : Այնկ  
 նայէ որ չըլլայ թէ ուսման ե  
 տեւէ ընելու համար իրենց սպառ  
 նալիքներ ընես , կամ վրանին  
 նոր նոր կանոններ դնես : Արչափ  
 կարելի է քիչ կանոններ դնելու  
 է . բայց թէ որ դնել ալ հարկ  
 ըլլայ , առանց կանոնի անունը  
 վրան դնելու կամացուկ մը մըտ  
 ցրնելու է սովորու թիւնը , միշտ



պատճառը հասկըցընելով թէ  
 աս բանս աւելի աս ատեն կամ  
 ան տեղ ընելը որչափ դիւրու  
 թիւն ու վայելչութիւն ունի :

Տղաք աղէկ բան մը ընելու  
 ըլլանք նէ՛ պէտք է զիրենք գո  
 վել. ապա թէ ոչ ամենեւին սիրտ  
 չեն առներ : Այլ թէպէտ գո  
 վասանքը տղոց փառասիրութիւ  
 կը շարժէ, ուստի պէտք է զգու  
 շանալ չափազանց գովելէն, սա  
 կայն երբեմն զիրենք պզտիկ գո  
 վեստով մը քաջալերելը շատ  
 հարկաւոր է : Ար տեսնենք որ  
 Պօղոս առաքեալն ալ շատ ան  
 գամ տկարները քաջալերելու  
 համար զիրենք կը գովէ. որոնք  
 ալ որ պակասութեան մը հա  
 մար պիտի յանդիմանէ՛ նախ  
 գովեստով կը սկսի, որպէս զի  
 տուած խրատը աւելի ազդէ :  
 Աոյնպէս կ'ընեն նաև սուրբ  
 Հարք : Արաւ է որ գովեստը օգ



տակար ըլլալու համար այն կերպ  
 պով պիտի ըլլայ, որ մէջը ամե-  
 նեին չափազանցութիւն ու շո-  
 դոքորութիւն չմտնէ, ու ծայ-  
 րը հոն երթայ թէ ամէն բարիք  
 Մատուծմէ է, որ է աղբիւր ա-  
 մենայն բարութեանց: Արնայ  
 մէկը վարձատրել տղաքը նաև  
 անամեղ խաղերով՝ ուսկից խելք  
 մը կրնան սորվիլ, դուրս պտը-  
 տելու տանելով՝ ուր որ եղած  
 խօսակցութիւնը անպտուղ ջրը  
 լայ, ուրիշ պզտիկ ընծաներով  
 ինչպէս նկարներ, պատկերներ,  
 միտալներ, աշխարհացոյցներ,  
 կամ թէ ոսկեզօծ գրքեր:



## ԳԼՈՒԽ Զ.

Թե ինչ պատմութիւններ պատմւորս է  
տղոց , և ինչ կերպով :

Տղաք ծիծաղելու պատմու-  
թիւններ շատ կը սիրեն . կը  
նայիս որ իրենց դիպուած մը  
պատմած ատեննիս , կամ սաս-  
տիկ կ'ուրախանան , և կամ կը  
սկսին արցունք թափել . ուրեմն  
նայէ որ ասկէց օգուտ հանես :  
Երբոր կը տեսնես որ ամենայն  
յօժարութեամբ քեզի մտիկ ը-  
նելու կեցեր են , իրենց պատմէ  
կարճ ու գեղեցիկ առակ մը .  
բայց նայէ որ առակը անմեղ ու  
հնարագէտ կենդանեաց վրայ  
ըլլայ . լմրննալէն վերջը ան ալ  
խմացուր իրենց թէ այսպիսի ա-  
ռակները ինչ վախճանի համար  
շինուած են : Իսկ հեթանոսաց



ամէն առասպելները աղտեղի ,  
անկարգ ու ամպարիշտ բաներով  
լեցուն ըլլալով՝ երջանիկ կ'ըլլայ  
աղջիկ տղան թէ որ բոլոր կե-  
նացր մէջ անոնց ամենեւին տե-  
ղեկութիւն չունենայ : (Թ) որ  
չկարենաս այնպէս ընել որ ամե-  
նեւին չգիտնայ , գէթ նայէ որ  
անոնցմէ զինքը խորշեցրնես :  
Մտակ մը կամ առասպել մը  
պատմելէդ վերջը , սպասէ որ  
տղան քեզմէ խնդրէ որ ուրիշ  
պատմութիւն ալ պատմես . ա-  
սանկով միշտ կերպով մը անս-  
թի կ'ըլլայ բան սորվելու : Քա-  
նի որ տղուն հետաքրքրութիւնը  
շարժեր է , նայէ որ քիչ բա-  
ռով մէկ քանի ընտիր պատմու-  
թիւններ պատմես իրեն . իմաստ-  
ները իրարու հետ կապէ , ու  
մնացած կտորը պատմելդ օրէ օր  
ձգէ , որպէս զի տղաք տարակու-  
սած՝ ետքը ինչ ըլլալիքը չգիտ-



նալով, ժամ մը առաջ վախճանը  
 տեսնելու փափաքին : Անդանի  
 ու բնական ձայնով մը հոգի  
 տուր ըսածներուդ . այնպէս խօս  
 սէ որ բոլոր անձդ ալ լեզու ելա  
 ծի պէս ըլլայ , տղաք իրենց  
 կենդանի երևակայութեամբը ը  
 սածներդ իրօք տեսածի ու լսա  
 ծի պէս կ'ըլլան : Օ որ օրինակ  
 ըսենք թէ Յովսէփ Աեղեցիկին  
 պատմութիւնը կը պատմես . իր  
 եղբայրներուն բերանը վայրե  
 նամիտ մարդկանց խօսքեր դիր ,  
 Յակոբայ բերանն ալ գորովա  
 գութ ու վշտասիրտ հօր մը կեր  
 պեր , Յովսէփ ինքնիրեն ինչէր  
 կը խօսի , և Ագիտատու իշխան  
 ըլլալով իր եղբարցմէ ինքզինքը  
 ինչպէս կ'ուզէ ծածկել , զանոնք  
 վախցընել , ու ետքը անոնց ինք  
 զինքը յայտնել : Տղան ան բնա  
 կան ու գեղեցիկ տեսարանը , ու  
 պատմութեան սքանչելի դի



պուլաճները տեսնելով կը զմայլի  
 կը մնայ . միայն թէ պէտք չէ որ  
 նոյն տեսակ բաներ շատ պատ-  
 մես որ չձանձրանայ , թող որ  
 ինքիրմէ աս բաներուս փափաքի .  
 կրնաս խոստանալ որ եթէ խե-  
 լօք կենայ նորէն պատմես , բայց  
 մէջը ամենեին ուսմունքի կերպ  
 պիտի չմտնէ , ու պատմողը տը-  
 ղաքը պիտի չստիպէ որ լսաճնին  
 կրկնեն . վասն զի աս կրկնու-  
 թիւնը՝ որչափ որ իրենց հոգը  
 ջրլլայ , սողոց համար մեծ նեղու-  
 թիւն է , և այսպիսի պատմու-  
 թեանց համը կը փախցընէ :

Նս ալ գիտնալու է թէ տղայ  
 մը որ խօսելու դժուարութիւն  
 չի քաշեր՝ ինքիրմէ կը սկսի իրեն  
 աւելի ախորժելի եղած պատ-  
 մութիւնները իր սիրած մարդ-  
 կանց պատմել . աս բանիս ալ  
 ամենեւին պէտք չէ զինքը բռնա-  
 դատել . բայց կրնաս տղուն հետ



աւելի ընտանու թի ունեցող ան-  
 ձանց ապսպրել, խնդրել որ գիտ-  
 ցած պատմութիւնները պատմէ  
 իրենց . աս խնդիրքը տղան շատ  
 սիրով կը կատարէ : Առն ալ  
 չսող եղիր, թող որ գիտցածին  
 պէս պատմէ, ամենեին սխալ-  
 ները մի բռներ : Արքոր կը տես-  
 նես թէ ալ բաւական վարժեցաւ  
 պատմելու, կրնաս իրեն քաղցրու-  
 թեամբ սորվեցընել թէ մէկ բան  
 մը աղէկ կերպով պատմելը ինչ  
 պէս կ'ըլլայ . որչափ ջանալու է  
 պատմութիւնը համառօտ ընե-  
 լու, և թէ այնպիսի պարագա-  
 ներ ընտրելու է որ պատմուած  
 բանը աւելի դուրս ցատքեցընեն :  
 Թէ որ աչկերտներդ շատուր են,  
 նայէ որ իրենց սորված պատմու-  
 թիւններուն մէջի այլ և այլ ան-  
 ձիւքը ձեացընելու վարժին . զոր-  
 օրինակ մէկը կրնայ Աբրահամ  
 ձեանալ, ու մէկալը Նասակ .



աս ձեւացմունքներն աւելի ախոր  
 ժելի կուգան իրենց քան թէ  
 ուրիշ խաղերը . ասով մտքերնին  
 կը բացուի , ու կը սկսին խելքով  
 բաներ մտածել , ու լաւ կերպով  
 զանոնք բացատրել . թող որ սոր  
 ված պատմութիւննին ալ ան  
 ջնջելի կը տպաւորուի անով  
 մտքերնուն մէջ :

Չանալաւ է որ արտաքին  
 պատմութիւններէն աւելի սրբա  
 զան պատմութիւնները ախորժելի  
 ըլլան տղոց . ասոր համար հարկ  
 չէ ըսել թէ ասոնք աւելի գե  
 ղեցիկ են . կարելի է հաւատան  
 ալ անոր . հապա այնպէս ընելու  
 է որ առանց ըսելու իրենք ի  
 իրենցմէ իմանան անոնց աղէկու  
 թիւնը : Հասկըցուր իրենց թէ  
 ասոնք որչափ խելքէ մտքէ վեր ,  
 հրաշալի բաներ են , ու ինչպէս  
 մէջերնին բնական նկարներ , ու  
 ազնուական եռանդ մը կը փայ



լի . Ինչպէս են աշխարհիս ստեղծումը , Մղամայ Էյնալը , Ջրհեղեղը , Մբրահամու կոչումը , Սասակայ զոհը , Յովսեփայ դիպուածները՝ որ քիչ մը առաջ յիշեցինք , Մովսիսի ծնունդն ու փախչիլը , որ ոչ միայն տղոց հետաքրքրութիւնը կ'արթնցընեն , հապա նաև կրօնքի սկըզբունքը կը սորվեցընեն անոնց , ու սրտերնուն մէջ հաւատքի հիմը կը ձգեն . վասն զի գիտենք որ մեր կրօնքին ու բոլոր մեր հաւատացած բաներուն վաւերականութիւնն ու մշտնջենաւորութիւնը՝ ասանկ հրաշալի պատմութիւններով , ու անթիւ գործքերով կը հաստատուին : Արբոր մէյմը մարդ աս տեսակ պատմութիւնները տղոց առջևը դնէ , ալ պէտք է զիրենք յորդորել որ հաւատոյ բաները սորվելու ետևէ ըլլան . վասն զի ա



սոնք այնպիսի կարճ, զուարճալի  
 ու գեղեցիկ բաներ են, որ նաև  
 ամենաբիրտ մարդկանց կրնան  
 հաճոյ անցնիլ: Նստուած, որ  
 ինքը ստեղծած ըլլալով մար-  
 դուս միտքը՝ ամենէն աղէկ կը  
 ճանչնայ անոր կարողութիւնը, ընդ-  
 հանրապէս ժողովրդեան մէջ  
 շատ հանդիպած բաներու վրայ  
 հաստատեր է կրօնքը, որպէս զի  
 պարզամիտ մարդիկ առանց դը-  
 ժուարութիւն քաշելու կարենան  
 դիւրաւ հասկընալ, ու խորհուրդ-  
 ները միտք պահել: () որ օրինակ  
 տղու մը ըսէ թէ Նստուած իրեք  
 անձ է ու մէկ բնութիւն. թերևս  
 շատ անգամ լսելուն համար  
 միտքը պահէ, բայց չեմ կար-  
 ծեր որ իմաստը կարենայ հաս-  
 կընալ: Իսկ թէ որ իրեն պատ-  
 մութեամբ մը պատմելու ըլլաս  
 թէ Վրիստոս տէրն մեր Յոր-  
 դանան գետը մկրտուելէն ետև



դուրս ելլելու ատենը, Հայր Աստուած երկնքէն այսպէս ըսաւ .  
 «Պա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք», . և թէ հոգին սուրբ աղաւնիի կերպարանքով Քրիստոսի վրայ իջաւ, կը նայիս որ աս պատմութեամբս այնպէս պայծառ կ'ըմբռնէ Արրորդութեան խորհուրդը՝ որ ոչ երբէք կը մոռնայ . և անկէց ետքը կը սկսի ինքիրմէ իրեք անձինքը իրարմէ իրենց գործքովը զանազանել . քեզի կը մնայ միայն իրեն սորվեցընել թէ իրեք անձնալ մէկ Աստուած են : Պատմութեանց օգտակարութիւնը ցուցընելու համար աս օրինակը միայն բաւական է . և թէպէտ ումանք կը կարծեն թէ ասանկով կըթու թիւնը կ'երկրննայ, բայց գիտնան որ մանաւանդ թէ շատ կը կարճընայ, ու շատ կ'օգնէ սորվելու նաև չոր



ցամաք քրիստոնէականը , ուր  
 խորհուրդները գործքերէն զա-  
 տուած կը պատմուին . բաց ա-  
 կէց , կը տեսնենք ալ որ հին ա-  
 տենն ալ մարդիկ պատմութիւն-  
 ներով կը կրթուէին : Սուրբն  
 ( ) գոստինոս զարմանալի կերպ  
 մը որ կը յիշէ տգէտները կրթե-  
 լու , ամենեին նոր բան չէր , հա-  
 պա ընդհանուր Ակեղեցւոյ կըր-  
 թութե՛ն ոճ՛ն էր , այսինքն պատ-  
 մութեան շարունակութիւնը ցու-  
 ցընել թէ կրօնքը աշխարհէս  
 ալ հին է . Քրիստոսի Տեառն  
 մերոյ գալստեանը հին կտակա-  
 րանի մէջ կը սպասէին , և ինքը  
 նոր կտակարանին մէջ կը թագա-  
 ւորէ . և ահա ասոնք են քրիստո-  
 նէական կրթութեան հիմը :

Իրաւ է որ ասոր աւելի ժա-  
 մանակ ու հոգ հարկաւոր է քան  
 թէ շատ մարդկանց տուած կըր-  
 թութեանը . սակայն ան մարդը



աղէկ կը գիտնայ թէ կրօնքն ինչ  
բան է, ով որ անոր վրայ ման-  
րամասն տեղեկու թիւն մը կ'ու-  
նենայ. ընդ հակառակն թէ որ  
մէկը տեղեակ չըլլայ, խառնա-  
փնդոր գաղափար մը կ'ունենայ  
Վրիստոսի, Վլետարանի, Ա-  
կեղեցւոյ վրայ, չգիտնար թէ  
որչափ հարկաւոր է անոր տուած  
վճիռներուն հնազանդիլ, և ա-  
ռաքինու թեանց հիմը որն է, որն  
որ աս բանս գէթ քրիստոնէու-  
թեան անուընդ պէտք էր մտուը-  
նիս ձգէր: Սասնահան քրիստոնէա-  
հանին \* մէջ, որ պարզ գիրք մըն  
է, կարճ ու սովորական քրիս-  
տոնէականներէն աւելի դիւրի-  
մաց, վերոյիշեալ ամէն հարկա-  
ւոր գիտելիքները կան. ուստի  
չկրնար մէկը ըսել թէ ասոնք

\* Ֆլէօրիինը, որ հայերէն ալ թարգ-  
մանուած ու տպուած է:



սորվեցրնելու համար շատ գի-  
տութիւն պէտք է : Այս բանս  
նաև Տրիդենտեան ժողովը մը-  
տածած ու քրիստոնէական մըն-  
ալ շինած է . բայց անոր մէջ աս-  
տուածաբանական բառեր շատ  
ըլլալուն պատճառաւ՝ չգիտցող-  
ները այնչափ դիւրաւ չեն հաս-  
կրնար :

Արդ յիշած պատմութիւն-  
ներնուս վրայ կրնանք աւելցը-  
նել նաև Սորայելացոց Աարմիր  
ծովէն անցնելը , ու անոնց անա-  
պատին մէջ բնակելը , ուր կե-  
րած հացերնին երկնքէն կ'իջ-  
նար , ու խմած ջրերնին Վովսէս  
գաւազանով ժայռի մը զարնելով  
բղխեցուց : Վատմելով ձեւացուր  
թէ ինչ հրաշալի կերպով Սա-  
րայելացիք Մետեաց երկրին  
տիրեցին , ու Յորդանան գետին  
ջրերը իրենց ընթացքէն խոտո-  
րելով՝ ետ ետ գնացին դիզուե-



ցան . և քաղաքի մը պարիսպնե-  
 ները իրենք իրենցմէ կործա-  
 նեցան պաշարողներուն առջև :  
 Րնական կերպով նկարագրէ  
 Սաւուղայ ու Ղաւթի ըրած  
 պատերազմները . պատմէ թէ  
 ինչպէս Ղաւթ տղայութեան  
 ատենը առանց զէնքի , իր հո-  
 վուական հազուստովը յաղթեց  
 ամբարտաւան հսկայ Ղողիա-  
 թին : Մի մոռնար պատմելու  
 նաև Ղողումնի փառքն ու իմաս-  
 տութիւնը , և թէ ինչպէս երբ-  
 որ երկու կանայք իրարու հետ  
 կը վիճէին տղու մը համար ,  
 խելքով անոնց դատաստանը կը  
 տրեց , և թէ ինչպէս վերջերը  
 այսպիսի գերազանց իմաստու-  
 թենէ իյնալով իր պատիւը կոր-  
 սրնցուց , ու ինքզինքը բոլորովին  
 մեղկութեան տուաւ , որ գրեթէ  
 միշտ չափազանց յաջողութեան  
 անխորշէլի հետեւանքն է :



Պատմէ թէ ինչպէս կը խօսէին մարգարէները թաղաւորներուն Նստուծոյ կողմանէ, և ապագայ բաները այնպէս կը գուշակէին՝ ինչպէս թէ գրքի մը մէջէն տպածի պէս կարդային. և ըսէ թէ ան մարգարէները ինչպէս խոնարհ, ժուժկալ ու համբերող էին, ու ճշմարտութիւնը քարոզելնուն համար անդադար կը հալածուէին: Տեղը գալուն պէս պատմէ նաև Արուսաղէմի առջի առումը, տաճարին այրիւր, ժողովրդեան մեղացը համար սուրբ քաղաքին կործանիւր, և Նաբելոնի գերութիւնը, ուր որ Նրեայք կուլային կ'ողբային իրենց սիրելի Միոնին վրայ: Արենց գերեզարձէն առաջ համառօտ կերպով մըն ալ իմացուր Տովբիթայ, Յուդիթայ, Ասթերայ, Նանիելի զուարճալի դիպուածները: Նոսոգուտ ջրլար



թէ որ աս սուրբ մարդկանց բնա-  
 ւորութիւնները տղոց հասկըցը-  
 նելու ըլլաս, որպէս զի տեսնես  
 թէ ասոնցմէ որը աւելի կ'ախոր-  
 ժին: Արնայիս որ մէկը աւելի  
 կ'ընտրէ Աստուծոյ, մէկալը Յու-  
 դիթը, ասով մէջերնին պզտիկ  
 վէճ մը կը ծագի, որով աս  
 պատմութիւնները մտքերնուն  
 մէջ աւելի զօրաւոր կերպով կը  
 տպաւորուին, ու դատմունքնին  
 կը կրթուի ու կը սրուի: Աերջը  
 նորէն Ասրայելացոց Արուսա-  
 ղէմ դառնալը պատմէ, ուր կը  
 սկսին իրենց աւերակները նորո-  
 գել. ու գեղեցիկ կերպով մը նը-  
 կարագրէ Արուսաղէմի վերջի  
 խաղաղութիւնն ու երջանկու-  
 թիւնը: Ատքը մէկ քանի խօս-  
 քով յիշէ անգութ ու ամպա-  
 ընտ Անտիոքոսը որ ինչպէս ան-  
 զեղջ մեռաւ. հասկըցուր թէ ան  
 հալածիչ թագաւորին ժամա-



նակը ինչ յաղթութիւններ ը-  
րին Մակաբայեցիք, նմանապէս  
պատմէ եօթն եղբարց նահա-  
տակութիւնը: Մնկէց վերջը ան-  
ցիր Յովհաննու Մկրտչի հրա-  
շալի ծնունդը:

Այլ որ Քրիստոսի Տեառն  
մերոյ ծնունդը աւելի տեղն 'ի  
տեղը պատմես. իր կենացը ե-  
րևելի կտորները Մետարանին  
մէջէն հանէ, զոր օրինակ տա-  
սուերկու տարեկան եղած ատե-  
նը տաճարին մէջ տուած քարո-  
ղը, մկրտութիւնը, անսպաս-  
քաշուին ու փորձուիլը, առա-  
քեալները կանչելը, հացերը  
շատցրնելը, մեղաւոր կնկան  
դարձը, որ անուշ իւղով փրկչին  
ոտքը օծեց, արցունքով լուաց,  
ու մազերովը սրբեց. նոյնպէս  
նաև Սամարացի կնոջ դարձը,  
'ի ծնէ կուրին բժշկուիլը, Մա-  
ղարու յարութիւն առնելը, ու



Վրիստոսի տեառն մերոյ յաղ-  
 թական փառքով Արուսաղէմ  
 մտնելը : Յուցուր իր քաշած  
 չարչարանքները . նկարագրէ թէ  
 ինչպէս յարուժի առաւ : Ատ-  
 քը պէտք է նաև հասկըցընես  
 թէ ինչպէս ընտանուժեամբ  
 քառասուն օր իր աշկերտներուն  
 հետ կեցաւ՝ ինչուան որ անոնք  
 իր երկինք ելլելը տեսան . Հո-  
 գւոյն սրբոյ դալուստը , սրբոյն  
 Ստեփանոսի քարկոծուիլը , Պօ-  
 ղոս առաքելոյն դարձը , Աուռնե-  
 լիոս հարիւրապետին դարձը .  
 առաքելոց ճամբորդութիւննե-  
 ըր , և մանաւանդ Պօղոս առա-  
 քելոյն ըրածները , որ աւելի  
 զուարճալի ալ են : Վարտիրոսաց  
 վկայաբանութիւններէն ընտրէ  
 աւելի զարմանալի կտորները , ու  
 նաև նախնի քրիստոնէից ան-  
 ցուցած սքանչելի վարքէն ալ  
 քանի մը բան քաղէ ու անոնց



պատմէ . խառնէ անոնց հետ  
 նաև մանկահասակ կուսանաց  
 քաջասրտութիւնը , ճգնաւորաց  
 զարմանալի խստամբերութիւն-  
 ները , ինքնակալաց ու ինքնա-  
 կալութեանց դարձը , չրէից  
 կուրութիւնը , և անոնց ահաւոր  
 պատուհասը՝ որ ինչուան հիմայ  
 ալ կը տեսէ :

Մը ամէն պատմութիւնները  
 խելքով ու տեղին պատմուելով ,  
 տղոց թարմ ու կենդանի երևա-  
 կայութեանը մէջ կրօնքի վերա-  
 բերեալ բաները սկիզբէն ին-  
 չուան մեր ատենը կարգաւ ան-  
 ջնջելի կը տպաւորուին , ու մրտ-  
 քերնին ազնուական գաղափար-  
 ներով կը լեցընեն : Մը պատմու-  
 թեց մէջ կը տեսնեն տղաք որ Մը  
 տուծոյ ձեռքը միշտ պատրաստ  
 կեցած է արդարները փրկե-  
 լու , և ամպարիշտները պատ-  
 ժելու : Մտով կը սորվին , ու ինչ



բանի որ ձեռք զարնեն, կամ ինչ  
 ծածուկ բան որ ընեն՝ միշտ մըտ-  
 քերնին կը բերեն թէ Մատուած  
 քովերնին է ու զիրենք կը տես-  
 նէ, և թէ առանց Մատուծոյ  
 բան մը չըլլար: Մայց գիտնա-  
 լով թէ տղաք սովորաբար կրօն-  
 քի բաները տխուր ու անզարդ  
 բան մը կը կարծեն, աս պատ-  
 մութեանց մէջէն աւելի ուրա-  
 խալի ու փառաւոր կտորներ ըն-  
 տրելու է, որպէս զի տղաք մտքեր  
 նին բացուի ու իմանան որ կրօն-  
 քը գեղեցիկ, սիրելի, ու գե-  
 րազանց բան է եղեր:

Տղոց աս կերպով կրօնքը սոր-  
 վեցընելու անգին օգուտէն զատ,  
 աս զուարճալի պատմութիւննե-  
 ըր պզտիկուց մտքերնուն մէջ  
 տոգորուելով, հարկաւոր բանե-  
 ռուն անոնց հետաքրքրութիւնը  
 կ'արթնցընեն, մտաւոր զուար-  
 ճութեանց ետեւէ կ'ընեն զա-



նոնք, և անանկ փոյթ մը կը դնեն  
 սրտերնուն մէջ որ պատմութիւն  
 մը առջւեհին պատմուելուն պէս՝  
 ամենայն ջանքով անոր ուշ կը  
 դնեն, որ տեսնեն թէ իրենց գիտ  
 ցածներուն հետ կապ մը ունի :  
 Նայց դարձեալ կ'ըսեմ որ պէտք  
 չէ ամենեւին վրանին պարտք դը  
 նել որ ան պատմութիւններուն  
 մտիկ ընեն, կամ մտքերնին  
 պահեն, ևս առաւել կանոնա  
 ւոր դասառութեամբ պէտք չէ  
 սորվեցընել. հապա իրենց յօ  
 ժարութեանը թողու է : Մի  
 նեղեր զիրենք, ու վախճանիդ  
 կը հասնիս, թէ և շատ խելացի  
 ջրլան. մտքերնին շատ մի բեռ  
 նաւորեր, թող որ իրենք իրենց  
 մէ սկսին կամաց կամաց սորվե  
 լու հետաքրքիր ըլլալ : Նայց  
 թերևս ըսես թէ աս պատմու  
 թիւնները ինչպէս պատմելու  
 է, որ թէ կենդանի, կարճ ու



բնական ըլլայ պատմութեամբ , և  
 թէ տղոց հաճոյ անցնի . և կամ  
 ուր գտնեմ այնպիսի դաստիա-  
 րակներ որ կարենան աս բանս  
 ընել : Իմ պատասխանս աս է .  
 եթէ կ'ուզես որ տղաքդ աղէկ  
 կրթութիւն՝ կրցածիդ չափ ջանա  
 որ գտնես այնպիսի խելացի գի-  
 տուն անձինք , որ կարող ըլլան  
 ինչպէս պէտք է զանոնք դաս-  
 տիարակել . դուն ալ քու կող-  
 մանէդ , որչափ որ կրնաս յորդո-  
 րէ զանոնք որ աս ոճը բռնեն .  
 յայտնի է որ ամէն դաստիարակ  
 նոյնչափ խելացի չկրնար ըլլալ ,  
 որը շատ որը քիչ . ուստի իւրա-  
 քանչիւր դաստիարակ իր կարո-  
 ղութեանը համեմատ պիտի ջա-  
 նայ կատարել աս բաներս : Եւ այց  
 աս ալ կայ որ , որչափ ալ խելճ  
 ըլլայ դաստիարակը , դարձեալ  
 կրնայ յաջողիլ ուզածը՝ թէ որ  
 աշկերտները աս ոճով կրթելու



ըլլայ, որ թէ պարզ ոճ է և թէ  
բնական :

Վաստիարակը աստուածա-  
շնչի պատմութիւն մը պատմե-  
լու ատենը կամ պատմելէն ետ-  
քը, կրնայ նոյն բանին տպած  
կամ նկարուած պատկերը ցու-  
ցրնել՝ տղուն տալ, որով թէ  
նոր սորվելիքը սիրով կը սորվի,  
և թէ սորվածը մտքին մէջ կը  
տոգորուի : Սովորաբար տղոց  
տպած պատկեր տալու, ցուցը-  
նելու է. բայց երբոր կրնայ մէ-  
կը գեղեցիկ քաշուած գոյնզգոյն  
մեծ նկարներ ալ ցուցրնել,  
պէտք չէ որ անհոգութիւն ընէ.  
վասն զի գունոց զանազանու-  
թիւնը՝ բնական քաշուած կեր  
պարանբներուն մեծութեամբը  
տղոց երևակայութեանը մէջ ա-  
ւելի կը տպաւորուի :



ԳԼՈՒԽ Է .

Թէ ինչպէս պէտք է տղոց միտքը  
տպաւորել կրօնքի սկզբունքները :

Տեսանք ինչուան հիմայ որ  
տղաք քանի որ պզտիկ են՝ չեն  
կրնար խելք բանեցընել . չէ թէ  
անոր համար որ իբր թէ հար-  
կաւոր եղած գաղափարներն ու  
բանականութեան ընդհանուր  
սկզբունքները չունին , հապա  
շատ բան չգիտնալնուն պատճա-  
ռաւ չեն կրնար խելքերնին գործ-  
ածել . թող որ իրենց ուղեղին  
անդադար շարժմունքն ալ չթո-  
ղուր իրենց որ մտածած բաներ-  
նուն վրայ հաստատուն կենան ,  
ու զանոնք իրարու հետ կապեն :

Աստի քանի որ տղոց խելքը  
ուրիշ բանի չէ բացուած , պէտք  
է առանց նեղելու՝ իրենց հաս-



կըցընել թէ Նստուած ինչ է :  
 Քրիստոնէական ճշմարտութի  
 ները հասկըցուր իրենց՝ առանց  
 զանոնք տարակուսի մէջ ձգելու :  
 Արտեսնեն որ մէկը կը մեռնի ,  
 ետքը զանիկայ կը թաղեն . դու  
 ան ատենը ըսէ անոնց . « Նս  
 մեռելը գերեզմանին մէջ է : —  
 Հրամեր ես : — Արեմն արքայ  
 ութեան մէջ չէ : — Թողու  
 թիւն ըրէ , սխալեցայ , արքայ  
 ութիւնն է : — Տայց ինչպէս  
 կրնայ ըլլալ որ թէ գերեզմանի  
 մէջ ըլլայ և թէ արքայութեան  
 մէջ : — Վարմինը միայն գերեզ  
 մանը դրուած է , իսկ հոգին ար  
 քայութիւնն է : — Արեմն հո  
 գին իրեն մարմինը չէ : — Այն :  
 — Արեմն հոգին մեռած չէ :  
 — Այն , միշտ անմահ պիտի մնայ  
 երկինքը , » : Ատքը վրայ բեր .  
 « Նուն ալ կ'ուզեն փրկուիլ : —  
 Հրամեր ես կ'ուզեմ : — Տայց



փրկուիլ ինչ ըսել է : — Ասել է թէ մարդուս մեռնելէն վերջը, հողին արքայութիւն երթայ : — Հապա մեռնիլը ինչ է : — Մեռնիլը ան է որ հողին մարմնէն բաժնուելով՝ մարմինը հող կը դառնայ :

Սեմ ըսեր թէ առջի բերան ամէն տղաք մէկէն կրնան ասանկ պատասխան տալ. թէ պէտ է շատ չորս տարեկան տղաք ինծի աս պատասխանները տուեր են : Իսկ թէ որ են թաղրենք թէ տղուն միտքը դեռ ամենեւին բացուած չէ, ան ատեն պէտք է համբերութեամբ մէկ քանի տարի ալ սպասել ինչուան որ քիչ մը բացուի :

Տղոց տուն մը ցուցընելով ըսելու է թէ աս տունը որ կը տեսնես՝ ինքիրմէ շինուած չէ, աս քարերը իրենք իրենցմէ առանց մարդու բերելու՝ ու իրա-



ըստ վրայ շարելու անանկ բար-  
 ձրացած չեն : Այն կ'ըլլայ  
 նաև անոնց բուն պատ հիւսող  
 որմնադիրներ ցուցնել . ետքը  
 ցուցուր նաև երկինքն , երկիրս ,  
 և մարդկանց գործածութեանը  
 համար Աստուծոյ ստեղծած գրե-  
 խաւոր բաներն , ու ըսէ իրենց .  
 Ար տեսնէք թէ աշխարհս մէկ  
 տնէ մը որչափ աւելի աղուոր ու  
 գեղեցիկ շինուած է . ասիկայ  
 միթէ ինքիրմէ եղած է : Այ ,  
 տարակոյս չկայ . Աստուած աս  
 աշխարհս իր ձեռքովը շինած է :

Առջի բերան սուրբ գրքին ու-  
 ճը բունէ , երևակայութիւննին  
 սաստիկ տաքցուր , ու ամէն զուր-  
 ցած բանիդ անոնց զգալի օրի-  
 նակներ տուր : Ահարագրէ ա-  
 ռաջ զԱստուած աթոռի մը վրայ  
 նստած , աչուրները արևուն ճա-  
 ռագայթներէն ալ աւելի փայ-  
 լուն , ու փայլակէն ալ աւելի



սուր ու թափանցող . Մտուած  
 ասանկ ըսաւ , ասանկ խօսեցաւ  
 ըսէ . թէ Մտուած ականջ ունի  
 որով ամէն բան կը լսէ , ձեռք  
 որով տիեզերքը կը բռնէ , ու  
 միշտ պատրաստ է անով չարա-  
 գործները պատժելու , գթած  
 ու հայրական սիրտ մը՝ որով զին-  
 քը սիրողները երջանիկ կ'ընէ :  
 Մտէն կուգայ որ աս բաներուս  
 վրայ կրնաս աւելի ճշդութեամբ  
 տղուն հետը խօսիլ : Մայց նայէ  
 որ աս հարկաւոր ճշմարտութի-  
 ները կերպով մը տղուն հասկը-  
 ցընելու առիթները ձեռքէդ չը-  
 փախցընես : Մեռնելն տղուն նոր  
 բան մ'ըսեր՝ ինչուան որ ըսե-  
 լիքդ առաջուց զգալի օրինակով  
 մը անոր ջնտանեցընես :

( ) օրինակի համար , հարցուր  
 տղուն թէ զՔրիստոս չուրանա-  
 լու համար մեռնիլ յանձն կ'առ-  
 նէս . քեզի պատասխան կուտայ



Թէ շրամեր ես, կ'առնեմ: Ան  
 ատենը վրայ բեր. Վայց ինչպէս,  
 արքայու թիւն երթալու համար  
 կը թողնու որ գլուխդ կտրեն: —  
 շրամեր ես: Ալ տղան միտքը  
 կը դնէ թէ ըսածը երբ ալ ըլ  
 լայ՝ քաջութեամբ կրնայ ընել:  
 Վայց դուն որ կ'ուզես անոր  
 հասկը ցրնել թէ մարդս առանց  
 Վստուծոյ շնորհացը բան չկը  
 նար ընել, բան մը չես վաստը  
 կիր թէ որ պարզապէս իրեն ը  
 սելու ըլլաս թէ մէկը իր խոստ  
 մանը վրայ հասատարիմ կենա  
 լու համար Վստուծոյ շնորհացը  
 կարօտ է. վասն զի այդպիսի  
 խօսքերով տղան բան հասկը  
 նար. և թէ որ այնչափ անոր  
 նոյն բանը զուրցես՝ որ ինչուան  
 վարժի առանց հասկընալու զա  
 նոնք ըսելու, անկէ ալ տղուն  
 ամենեւին օգուտ մը չըլլար: Ա  
 ղեմն ինչ պիտի ընես: Վաստմէ



անոր սրբոյն Աւտրոսի պատմու  
 թիւնը, ձեացուր որ ինչպէս  
 յանձնապատանու թեամբ կ'ը-  
 սէր Վրիստոսի. «Թէ որ մեռ-  
 նիլ ալ պէտք ըլլայ՝ զքեզ չեմ  
 ուրանար. թէ որ ամէնքն ալ ըզ-  
 քեզ թողուն՝ ես չեմ թողուր.»  
 վերջը նկարագրէ թէ ինչպէս  
 մէկ աղախինէ մը վախնալով ի-  
 րեք անգամ ուրացաւ զՎրիս-  
 տոս: Իսկ թէ ինչո՞ւ համար  
 Վստուած թողուց որ այսչափ  
 տկարացաւ. ետքը ասոր օրինակ  
 մը բեր թէ ինչպէս որ տղայ մը  
 կամ մէկ հիւանդ մը չեն կրնար  
 մինակ քալել, նոյնպէս ալ մենք  
 բան մը չենք կրնար ընել ին-  
 չուան որ Վստուած ձեռքերնէս  
 բռնած զմեզ չտանի, ինչպէս  
 մէկ դայեակ մը իր սանին կ'ընէ:  
 Վհա ասով կրնաս տղուն պայ-  
 ծառ կերպով հասկըցընել շնոր-  
 հաց խորհուրդը:



Իսկ աս ճշմարտութիւնը հաս-  
կըցընելը տղոց թէ մարդս հոգի  
մը ունի մարմնէն աւելի գերա-  
զանց՝ շատ դժուար բան է: Վմանք  
առջի բերան տղաքը կը վարժե-  
ցընեն իրենց հոգւոյն վրայ խօ-  
սելու, և աղէկ կ'ընեն. վասն  
զի թէպէտև տղաք աս լեզուն  
աղէկ հասկընան, սակայն հո-  
գւոյն ու մարմնոյն մէջ կը սկսին  
տարբերութիւն մը դնել, որ  
ետքը իրօք ալ դիւրաւ կը հասկը-  
նան: Տղայութեան նախապա-  
շարմունքներն որչափ որ վնա-  
սակար են՝ երբոր ծայրերնին մո-  
լորութեան երթայ, նոյնչափ ալ  
օգտակար կ'ըլլան՝ երբոր երևա-  
կայութիւնը կը տաքցընեն ճրշ-  
մարտութեան ետևէ իյնալու.  
որով խելքերնին բացուելուն  
պէս, արդէն սկզբունքներն ու-  
նենալով՝ դիւրաւ կ'ըմբռնեն ճրշ-  
մարտութիւնը: Վիայն թէ ա-



սոր ջանալու է որ ինչ բանի որ  
տղաք հաւատան՝ համոզուելով  
հաւատան : Բայց ինչպէս ընե-  
լու է : Միթէ համոզուի ըսելով  
Թողլու է որ մէկ աղջիկ տղայ  
մը անօգուտ փիլիսոփայական  
վէճերու մէջ իյնայ : Մտոր պէս  
գէշ բան չկրնար ըլլալ : Հապա  
պէտք է որ գոնէ իրեն իմացը  
նենք, ու կարելի է նէ հասկը  
ցրնենք իր ամէն օրուան լսած  
ու ըսած բաները :

Մարմնայն պէտք եղած բա-  
ները չափէն ալ աւելի գիտէ տը-  
ղան, ամենայն կերպով կը ջա-  
նայ որ զանիկայ գոհ ընէ . կը  
զարդարէ մարմինն ու կուռքի մը  
պէս կը պաշտէ : Մտ գիտնալով,  
ամէն ջանք պէտք է ընել իրեն  
դիմացը արհամարհելի ընելու  
մարմինը, հասկըցրնելով անոր  
որ իր վրայ մարմնէն գերազանց  
ուրիշ էակ մը կայ :



Ըսէ ուրեմն ան տղուն որ խել  
 քը բաւական բացուած է . Աե-  
 րակուր ուտողը հողին է : (Թ) է  
 որ ծուռ պատասխան տայ , մի  
 յանդիմաներ զինքը . հապա  
 քաղցրութեամբ ըսէ թէ հողին  
 չէ ուտողը , մարմինն է՝ անասնոց  
 նման : Նաստունները խելք ու  
 գիտութիւն ունին : — Ը է կ'ը-  
 սէ տղան : Նուն վրայ բեր . Ն  
 նոնք թէպէտև ամենևին խելք  
 չունին , բայց կ'ուտեն . տեսար  
 որ ուտողը խելքը չէ եղեր , հա-  
 պա մարմինն է որ կ'ուտէ կերա-  
 կուրները՝ սնունդ առնելու հա-  
 մար , մարմինն է քալողը , մար-  
 մինն է քնացողը : հապա հողին  
 ինչ կ'ընէ : հողին կը մտածէ ,  
 կը ճանչնայ բոլոր աշխարհս ,  
 բան կայ որ կը սիրէ , բան ալ  
 կայ որ կ'ատէ : Ալ իբր թէ տը-  
 ղուն հետ կատակ կ'ընես՝ ըսէ .  
 Ար տեսնե՞ս աս սեղանը : — հը-



րամեր ես : — Նարկաւ կը տես  
 նես որ աս ալ աս աթուին պէս  
 շինած չէ . աղէկ գիտես որ տախ  
 տակէ շինած է , ու աս կրակա  
 րանին պէս քարէ շինած չէ : —  
 Նրամեր ես , կ'ըսէ տղան : Մ  
 կէց առաջ մ'երթար ինչուան  
 որ տղուն պատասխան տալու  
 կերպէն ու աչուրներէն չիմա  
 նաս թէ աս պարզ ճշմարտու  
 թիւնները հասկըցաւ : Ա երջը  
 դարձիր ըսէ . Մրդեօք աս տախ  
 տակը գքեզ կը ճանչնայ : Ար  
 տեսնես որ տղան կը սկսի ըրած  
 հարցմունքիդ վրայ ծիծաղիլ :  
 Նոգ չէ , դուն ըսէ դարձեալ .  
 Մ երկուքէն ո՞րը գքեզ աւելի  
 կը սիրէ , տախտակը թէ աթու  
 ուր : Վարձեալ պիտի ծիծաղի ,  
 շարունակէ դուն . Նապոս աս  
 պատուհանը շատ խելացի է :  
 Ատքը հարցմունքներդ քիչ մը  
 աւելի բարձրացընելով ըսէ ի



րեն . Մս պաճուճապատանքիդ  
 հետ երբեմն կը խօսիս : — Սէ :  
 — Մնչու . միթէ խելք չունի :  
 — Սէ , ամենեին խելք չունի :  
 — Արեմն քեզի պէս չէ եղեր .  
 վասն զի դուն զինքը կը ճանչնաս  
 ու ինքը զքեզ չիճանչնար : —  
 Հապա մեռնելդ վերջը հողին  
 տակ թաղուելու ատենդ դուն  
 ալ աս պաճուճապատանքին պէս  
 պիտի ջրլանս : — Հրամեր ես : —  
 Մլ բան մը պիտի ջրլանս : —  
 Սէ : — Մլ մարդ պիտի ջճանչ  
 նանս : — Սէ : — Հողիդ ար-  
 քայութիւն պիտի երթայ : —  
 Հրամեր ես : — Հոն զՄստուած  
 պիտի տեսնէ : — Հրամեր ես ,  
 պիտի տեսնէ : — Պաճուճապա-  
 տանքիդ հողին հիմայ ուր է : Ար  
 տեսնես որ տղան ժպտելով մը  
 պատասխան կուտայ . և կամ գէթ  
 կերպով մը կ'իմացնէ քեզի որ  
 պաճուճապատանքը հողի չունի :



Աւ ահա առ հիման վրայ , և  
 առ տեսակ ուրիշ զանազան պը-  
 տոյտ հարցմունքներով , քիչ  
 քիչ կրնաս վարժեցնել որ սկսի  
 հասկընալ թէ որ բանը մարմնոյն  
 կը վերաբերի , որ բանը հոգւոյն .  
 միայն թէ անխոհեմութեամբ  
 այնպիսի բաներ չըսես իրեն որ  
 թէ հոգւոյն և թէ մարմնոյն  
 կը յարմարին : Եւստ բարակը  
 պէտք չէ իջնալ , որ պարզելու  
 տեղ աւելի չմթնցընեն առ ճշ-  
 մարտութիւնները . և աղէկ ու-  
 թոշելու է ան բաները , որոնց  
 վրայ մարմնոյն և հոգւոյն իրարմէ  
 ունեցած տարբերութիւնը աւելի  
 յայտնի կ'երևնայ : Արնան գըտ-  
 նուիլ նաև այնպիսի թանձրամիտ  
 տղաք որ աղէկ դաստիարակութի-  
 մը առնելէն ետքն ալ չկարենան  
 առ ճշմարտութիւններն ըմբռ-  
 նել . բայց նոյնպէս չէ երբոր  
 հասկընալը աղէկ հասկընան , ու



չկարենան յստակ կերպով բա-  
ցատրել . ուր թողունք որ Մս-  
տուած մեզմէ աղէկ գիտէ թէ  
ամէն մարդու որչափ կարողու-  
թիւն տուած է իր խորհուրդնե-  
րը հասկընալու :

Խելացի տղաք կան որ վրանին  
յառաջադիմութեան շատ նշան-  
ներ կը տեսնուին . ասոնց կրնայ  
մարդ առանց փիլիսոփայական  
գիտութեանց՝ խելքերնուն կա-  
րողութեանը համեմատ հասկը-  
ցընել թէ ի՞նչ կը նշանակէ ան  
խօսքն որ կ'ըսուի թէ Մստուած  
հոգի է . նայնպէս նաև թէ մարդ  
հոգի ունի : Ալ ինծի կ'երևնայ  
թէ տղոց Մստուծոյ և հոգւոյն  
աննիւթ ըլլալը իմացընելու հա-  
մար ասկէց աղէկ ու պարզ կերպ  
չկայ . որ է անոնց հասկըցընել  
մեռած ու կենդանի մարդուն  
մէջ եղած տարբերութիւնը .  
մէկը մարմնէն զատ ուրիշ բան



չունի, իսկ մեկալին մէջ մար-  
 մինը հողւոյն հետ միացած է :  
 Ետքը իրենց աս ալ հասկըցը-  
 նելու է թէ մտածող բանը շատ  
 աւելի կատարեալ է, քան թէ  
 անիկայ որ կերպարանք միայն  
 ունի, քիչ մըն ալ շարժմունք :  
 Աերջը զանազան օրինակներով  
 ցուցուր թէ ամենեւին մարմին  
 մը մասն մասն բաժնուելով չի  
 մեռնիր, հապա կը զատուի  
 միայն, ինչպէս այրած փայտի  
 մասունքը մոխիր դարձած վար  
 կ'իյնայ, և կամ ծուխ կ'ըլլայ  
 ու կը ցնդի : Արեմն ըսէ, թէ որ  
 ան բանն որ ըստ ինքեան մոխիր  
 է՝ չի կրնար բան մը ճանչնալ կամ  
 մտածել, և սակայն չի կորսուիր,  
 հապա որչափ աւելի մեր հողին  
 որ ճանաչմունք ու մտածութիւն  
 ունի՝ պէտք չէ որ ոչընչանայ :  
 Մարմինը կրնայ մեռնիլ, այս-  
 ինքն կրնայ բաժնուիլ հողիէն



ու մոխիր դառնալ . բայց հոգին  
 բանի որ կը մտածէ՝ միշտ կեն  
 դանի պիտի մնայ : Սորվեցրնող  
 ները որչափ որ կրնան պիտի ջա  
 նան պարզելու աս գիտութիւն  
 ները ու տղոց որոշ հասկըցրնե  
 լու . վասն զի ամէնն ալ մեր կրօն  
 քին հիմունքն են : Այն որ տղոց  
 բթամտութեանը պատճառաւ  
 չկարենան անոնց մէկ կերպով  
 հասկըցրնել , պէտք չէ ամենեւին  
 յուսահատելով ձանձրանան ու  
 ետ քաշուին . հապա յուսով  
 պէտք է սպասեն , ինչուան որ  
 Նստուած անոնց միտքը բանա  
 լով ներսէն զիրենք լուսաւորէ :  
 Հոգւոյն և մարմնոյն մէջ եղած  
 տարբերութիւնը տղոց իմացը  
 նելու համար ուրիշ դիւրին ճապ  
 բայ մըն ալ կայ . այսինքն վար  
 ժեցրնել տղաքը որ ամէն բանի  
 մէջ մարմինը արհամարհեն , ու  
 հոգին պատուեն : Այսինքն ան կըր



ԹուԹիւնն որ հոգւոյն սնունդ  
 ու աճումն կուտայ . պատուէ ան  
 բարձրագոյն ճշմարտութիւննե-  
 ըր որ հոգւոյն սիրտ կուտան ի-  
 մաստուն ու աւաքինի ըլլալու :  
 Արհամարհէ փափուկ կերա-  
 կուրնեըր , զարդարանքներն , ու  
 ան ամէն բաներն որ մարդուս  
 մարմինը կը թուլցընեն . հասկը-  
 ցուր տղուն որ անվայել հեշտու-  
 թեանց քով՝ մարդուս պատիւը ,  
 մաքուր խղճմտանքն ու կրօնքը որ-  
 չափ գերազանց բաներ են : Այս  
 պիտի մտածմունքներով միայն  
 էր որ հին հռովմայեցիք առանց  
 հոգւոյ ու մարմնոյ վրայ խօսելու  
 ալ սորվեցուցեր էին իրենց տը-  
 ղոցը մարմիննին արհամարհել ,  
 ու հոգւոյն համար փառք ու ա-  
 ռաքինութիւն վաստըկելու մար-  
 մինը զոհ ընել : Այլ աս ճամբան  
 բռնող միայն ազնուականները  
 էին , հապա բոլոր ժողովուրդը



կարծես թէ անոր համար ծնած էր որ ըլլայ ժուժկալ, անշահասէր, բոլորովին արհամարհող կենաց, ու միայն պատուոյ և իմաստութեանց ցանկացող: Հին հռովմայեցիք ըսելով անոնք կը հասկընամ որ դեռ տէրութիւնսին այնչափ չէին մեծցուցած, ու կեանքերնուն պարզութիւնը դեռ չէին կորսընցուցած:

Մենեւին չըսէ մէկը թէ անկարելի բան է դաստիարակութեամբ այսպիսի նախապաշարմունքներ տալ տղոց: Արչափ սկզբունքներ կը տեսնենք որ սովորութեան ուժովը միայն հաստատուած են մէջերնիս, թէպէտև ամէնքն ալ խելքի դէմ, ծուռ բաներ ըլլան. օրինակ ըլլայ մենամարտութեան սկզբունքը՝ որ պատուոյ սուտ կանոնին վրայ հաստատուած է: Այս ասոր մէջ ամենեւին խելք բանեցընել



ջկայ , հապա առանց մտածելու՝  
 պատուոյ վրայ հաստատուած  
 սկզբունքը ճշմարիտ ենթադրե-  
 լով մարդիկ , կեանքերնին վտան-  
 գի մէջ կը դնեն , և զինուորական  
 մարդիկ անդադար առ վտանգիս  
 մէջ են : Մէկը որ ամենեւին ու-  
 ընչի հետ կռիւ չունի , ամէն  
 վայրկեան կրնայ ունենալ ան  
 մարդկանց հետ որ կռուի մը մէջ  
 մտնելով անուն հանելու առիթ  
 կը փնտռեն : Ալ մարդ որչափ  
 ար զգուշաւոր ըլլայ՝ առանց աս  
 սուտ պատիւը կորսնցընելու ոչ  
 փախչիլ կրնայ ան կռուէն իր ի-  
 րաւունքը ըսելով , և ոչ ալ հրա-  
 ժարիլ իր հետը կռուիլ ուզո-  
 ղէն : Անչ մեծ իշխանութիւն  
 հարկաւոր է այսպիսի մէկ բար-  
 բարոս սովորութիւն մը արմա-  
 տաքի ջնջելու համար : Տես ու-  
 ըեմն թէ որչափ զօրաւոր են  
 դաստիարակութեան նախապա-



շարմուկները . և ահա ասկէց  
 ալ աւելի զօրաւոր կ'ըլլան ա-  
 ռաքինութեան համար , թէ որ  
 խելքով հաստատուած ու ար-  
 քայութեանը յուսովը զօրա-  
 ցած ըլլան :

Հոսովնայեցիք , որոնց վրայ  
 քիչ մը առաջ խօսեցանք , և ա-  
 նոնցմէ ալ առաջ Յոյնք , իրենց  
 հասարակապետութե ծաղկած  
 ատենը կը ջանային իրենց տղոցը  
 աչքին առջևը արհամարհելի ը-  
 նել պերճութիւնն ու մեղկու-  
 թիւնը . կը սորվեցընէին անոնց  
 փառքի վրայ միայն մեծ համար-  
 մունք ունենալ , յաղթել թա-  
 գաւորներուն՝ ոչ եթէ անոնց  
 հարատու թիւնը ձեռք բերելու՝  
 հապա զանոնք նուաճելու հա-  
 մար , և մտքերնին դնել թէ ա-  
 ռաքինութեամբ միայն կրնան  
 երջանիկ ըլլալ : Այ հոգին այն-  
 պէս անջնջելի կերպով հաստա-



տուած էր ան հասարակապե-  
 տութեանց մէջ, որ անհաւա-  
 տալի քաջութիւններ ըրին աս-  
 սկզբունքներով, որ բոլոր մէ-  
 կալ ազգերուն սկզբունքներէն  
 տարբեր էին: Իսկ թէ որ ա-  
 նոնք խելքով միայն մտածելով  
 այսչափ արհամարհեցին մարմի-  
 նը ու մարմնոյն վերաբերեալ  
 բաները, որչափ աւելի պարտը-  
 կան ենք, մարմինը արհամար-  
 հել մենք որ առջևնիս ունինք  
 այնչափ մարտիրոսաց ու նախնի  
 քրիստոնէից ամէն կարգի ու  
 հասակի օրինակները. և ասոնք  
 ինչ զարմանալի տպաւորութի-  
 ներ չեն կրնար ընել հաւատա-  
 ցելոց վրայ երբոր մկրտութեան  
 շնորհքովն ու դաստիարակու-  
 թեամբ զօրացած ըլլան: Աւ-  
 րեմն նայէ որ ամէն կարելի հը-  
 նարքներն ու բացայայտ նամանու-  
 թիւնները գտնես, որոնցմով



կարենաս տղոց ցուցրնել թէ  
 մեր մարմինը անասնոց նման է ,  
 իսկ մեր հոգին հրեշտակաց :  
 Ահարազրէ մէկ ձիաւոր մը որ  
 ինչպէս ձիուն վրայ հեծած ա-  
 ռաջ կը քշէ զանիկայ . ետքը դար-  
 ձիր ըսէ թէ ահա հոգին ձիա-  
 ւորն է , մարմինն ալ ձին է : Ա-  
 խօսքդ հոս բեր թէ վայ ան հո-  
 գւոյն որ ինքզինքը բոլորովին  
 մարմնոյն ձեռքը թողած ըլլայ .  
 վասն զի այնպիսին իբր թէ ա-  
 մէհի երիվարի մը ձեռքը թո-  
 ղուած է , որ կը տանի անդուն-  
 դէ անդունդ կը քշէ զինքը : Աս  
 ալ իմացուր թէ մարմնոյն գեղեց-  
 կու թիւնը մէկ ծաղիկ մըն է , որ  
 առաւօտը կը բացուի , իրիկունը  
 կը գոցուի կը թռամի , ու ոտքի  
 տակ կը կոխուի . իսկ հոգին՝ Աս-  
 տուծոյ անթառամ գեղեցկու-  
 թեանը պատկերն է : Աս աշ-  
 խարհէս դուրս կարգ մը գերա-



զանց բաներ կան ըսէ տեսակ  
 տեսակ, որ մարդ չկրնար զանոնք  
 մարմնոյ կարճատես աչքերովը  
 այնպէս պայծառ տեսնել, ինչ  
 պէս որ կը տեսնէ աշխարհիս  
 մէջ եղած անհաստատ ու ապա  
 կանացու բաները: Առկէ՞ս որ  
 տղոց հաւտացընես թէ իրաւը  
 նէ այնպիսի ճշմարիտ բաներ  
 կան որ մարդուս աչքն ու ախանջ  
 ները չեն կրնար տեսնել ու լը  
 սել, հարցուր իրենց թէ ճշ  
 մարիտ չէ՞ որ աս մարդս իմաս  
 տուն է՝ ան մարդը խելացի է:  
 Հրամեր ես ըսելուն պէս շուտ  
 մը վրայ բեր. բայց ան մարդուն  
 իմաստութիւնը տեսար դուն.  
 ինչ գունով էր. ձայնը լսեցիր,  
 զօրաւոր էր ձայնը. բռնեցիր ա  
 նոր իմաստութիւնը. պա՞ղ էր թէ  
 տար: Տղան պիտի ծիծաղի.  
 նայնպէս կրնայ ծիծաղիլ նաև  
 հոգւոյ խնդիրներուն վրայ. բայց



Երբոր իրեն հարցընելու ըլլաս  
 թէ հողին ինչ գոյն ունի, ձևը  
 կընր է թէ քառակուսի, բոլորո-  
 վին կը շփոթի, ու չի գիտնար թէ  
 ինչ ըսէ: Ան ատեն կրնաս իրեն  
 հասկըցընել որ ուրեմն ինքն ալ  
 կը ճանչնայ եղեր այնպիսի բա-  
 ներ որ ստոյգ են, բայց հողեղէն  
 ըլլալուն համար ոչ կրնայ զա-  
 նոնք տեսնել, ոչ կրնայ շօշափել,  
 և ոչ կրնայ լսել: Միայն թէ  
 աղջիկ տղոց հետ աս տեսակ  
 նիւթերու վրայ խօսելու ատեն  
 շատ խորունկը պէտք չէ երթալ:  
 Ալ աս բաներս հոս անոնց հա-  
 մար միայն դրի, որոնք սաստիկ  
 հետաքրքիր ու մտքերնին բա-  
 ցուած ըլլալով, զքեզ բռնի այս-  
 պիսի խնդիրներու կը տանին:  
 Ասաստիարակը միշտ պիտի ջա-  
 նայ անոնց մտաց կարողութեանն  
 ու կարօտութեանը ինքզինքը  
 յարմարցընել:



Արչափ որ կրնաս նայէ որ տը  
 զոց միտքը բարձրագոյն բաներու  
 չտանիս . իրենց ալ հասկըցուր  
 թէ քիչ մը իրենց կարողութէր  
 նայելով պիտի ամրջնան , շատ  
 բարակ գիտութեանց ետեւէ պի  
 տի ջրլան , և ինչպէս մոլու  
 թիւններէ՝ անանկ ալ անոնցմէ  
 պիտի զգուշանան :

Վարդա պէտք չէ որ տղոց  
 միտքը միայն կրթելու նայի , հա  
 պա պէտք է նաև անոնց երևա  
 կայութիւնը կրթէ , որով կա  
 թենան իմանալ կրօնքին ան դե  
 ղեցիկ ճշմարտութիւնները , որ  
 մարմնաւոր աչքի տակ չեն իյ  
 նար : Աստի Յովհաննէս աւե  
 տարանչին մեզի պատմածին պէս  
 պէտք է արքայութեան փառքը  
 աղէկ մը նկարագրել անոնց . զոր  
 օրինակ թէ հոն ամենեւին լալ  
 չկայ . ոչ մահ կայ , ոչ ցաւ , ոչ  
 աղաղակ . տրտմութիւնները պի



տի դադրին , ամէն չարիք պիտի  
անցնին , յաւիտենական ուրա-  
խութիւն մը պիտի ըլլայ երա-  
նելեաց վրայ այնպէս՝ ինչպէս որ  
ծովու ջրերը կեցած կ'ըլլան ծո-  
վուն մէջ ընկղմած մարդուն  
վրայ : Հասկըցուր ան փառաւոր  
Նրուսաղէմ քաղաքը՝ որուն ա-  
րեգակը ինքը Նստուած պիտի  
ըլլայ , որուն օրերը վերջ պիտի  
չունենան . մէջէն պիտի անցնի  
խաղաղութեան գետ մը , փափ-  
կութեանց հոսանք մը , կենդա-  
նութեան աղբիւր մը . հոն ա-  
մէն բան պիտի ըլլայ ոսկիէ ,  
մարգարտէ , ու ազնիւ քարերէ :  
Վիտեմ որ ասոնք ամէնն ալ ըզ-  
գալինիւթական բաներ են , բայց  
մէյմը այսպիսի գեղեցիկ տեսա-  
րաններով տղոց զարմանքն և  
ուշադրութիւնը շարժելէդ ետե  
կրնաս ան հնարքները բանեցը-  
նել՝ որոնց վրայ քիչ մը առաջ



խօսեցանք՝ տղաքը հողեւոր բա-  
ներու վարժեցընելու համար :

Ա երջապէս խօսքդ հոս բեր  
թէ մենք աս աշխարհս պանդո-  
կի մը մէջ կամ վրանի մը տակ  
բնակած ճամբորդներու կը նմա-  
նինք . աս մարմիննիս պիտի ա-  
պականի, և ապականելու համար  
ալ շատ տարիներ պէտք չէ, և  
հողին պիտի թռչի երթայ ան  
երկնային հայրենիքը, ուր որ յա-  
ւիտեան պիտի ապրի Աստուծոյ  
հետ : Թէ որ կարելի ըլլայ վար-  
ժեցընել տղաքը որ սիրով խոր-  
հրդածութիւններ ընեն աս հար-  
կաւոր նիւթերուս վրայ, ու ա-  
նոնց հետ բաղդատելով հասա-  
րակ բաներու վրայ դատաստան  
ընեն, բանը շատ կը դիւրանայ :

Այլ կ'ըլլայ որ տղաք նաև  
մարմնոց յարութիւն առնելուն  
վրայ որոշ գաղափար մը ունե-  
նան : Հասկըցուր տղոց թէ բը-



Կու թիւնն ուրիշ բան չէ, բայց  
 եթէ հասարակ կարգ մը որ Մ.  
 տուած իր ստեղծած բաներուն  
 մէջ դրեր է. և ինչ բան որ Մ.  
 տուած աս իր դրած ընդհանուր  
 կարգէն դուրս կ'ընէ՝ հրաշք  
 կ'ըսուի, և ինչպէս որ ինծի հա-  
 մար դժուար բան մը չէ սովորա-  
 կան ատենէն քառորդ մը առաջ  
 տնէս դուրս ելլելը, նոյնպէս է  
 Մատուծոյ առջէն ալ հարիւրա-  
 ւոր հրաշքներ ընելը: Ատքը  
 պատմէ թէ ինչպէս Վազար  
 մեռնելէն ետքը կենդանացաւ,  
 նմանապէս Վրիստոս տէրն մեր  
 յարու թիւն առաւ, ու քառա-  
 սուն օր շատ մարդկանց ընտա-  
 նեքար յայտնի երեցաւ: Աւ-  
 լերջապէս հասկըցուր թէ ասի-  
 կայ ամենեւին դժուար բան չէ  
 Մատուծոյ համար. վասն զի ինչ  
 պէս որ մարդս մէյմը ստեղծեր  
 է՝ նոյնպէս կրնայ նաև կրկին



ստեղծել: Մի մոռնար կուտին  
 ու ցորենին նամանութիւնը, որ  
 մարդիկ հողի մէջ կը ցանեն ու  
 կը փտտեցրնեն, որպէս զի նո-  
 րէն բուսնի ու բազմանայ:

Սակայն աս բաները հարկ  
 չկայ որ տղաք բերնուց սորվին  
 քրիստոնէականի պէս. վասն զի  
 անով կրօնքը մէկ շինծու լեզու  
 մը, կամ գէթ ձանձրալի բան  
 մը կը դառնայ տղոց. միայն նայէ  
 որ դուն անոնց մտքին օգնես ու  
 ան ճամբուն մէջ զիրենք դնես,  
 որ կարենան աս ճշմարտութեց  
 բուն տեղը գտնել, ու անոնցմէ  
 զուարճութեամբ օգուտ քաղել:  
 Քու կողմանէդ ալ առիթները  
 ձեռքէ մի փախցրներ. տեղը  
 դալուն պէս նայէ որ անոնց  
 շիտթ հասկը ցած բաներն իրենց  
 մեկնես, որոշ հասկը ցրնես:

Բայց աս աղէկ գիտցիր որ  
 թէ որ տղոց դիմացը արհամար-



հելով վար զարնես աս աշխար-  
 հիս բաները, ու ետքը վար-  
 քովդ անոր հակառակը ցուցը-  
 նես, անկէ մնասակար բան չկըր-  
 նար ըլլալ: ( ) րինակ ըսածդ՝ թէ  
 մեծի և թէ պզտիկի վրայ զար-  
 մանալի ազդեցութիւն ունի, և  
 տղոց վրայ ըրած ազդեցութեա-  
 նը չափ չկայ: Տղաք շատ կը սի-  
 րեն ուրիշի հետեւիլ. իրենք ի-  
 րենցմէ մասնաւոր բնութիւն մը  
 դեռ չունին որ անով դժուարու-  
 թիւն քաշեն ուրիշի հետեւելու.  
 մէկ կողմանէ ալ որովհետեւ ի-  
 րենք իրենցմէ ամէն բանի վրայ  
 աղէկ դատաստան ընելու կարո-  
 զութիւն չունին, իրենց դատաս-  
 տանը աւելի ուրիշներուն վրայ  
 տեսած գործքովը կը չափեն քան  
 թէ անոնց տուած պատճառնե-  
 րովը. ո՛ւր թողունք որ գործքը  
 աւելի զգալի է քան թէ խօս-  
 քը. ուրեմն երբոր տղաք իրենց



սորվեցուցած բանիդ հակառակ  
կը կը տեսնեն գործքով՝ կը սկսին  
բարեպաշտութեան բաները գե-  
ղեցիկ հանդէսներու տեղ դնել,  
առաքինութիւնն ալ այնպիսի  
կարծիք մը որն որ գործադրելի  
բան չէ :

Այլ որ ամենեւին տղոց առ-  
ջևը բարեպաշտական բաներու  
վրայ կատակ չընես : ( ) րինակի  
համար, կրնայ մէկը ելլել տղոց  
առջևը միամիտ մարդու մը ըրած  
աղօթքին վրայ խնդալ, խոստո-  
վանահօրը խորհուրդ հարցընող  
անձին, և կամ անոր վրան  
դրուած ապաշխարանքին վրայ  
ծիծաղիլ : Միթէ կը կարծես որ  
ասոնք անմեղ բաներ են . շատ  
կը խաբուիս . չես գիտեր որ աս  
նիւթիս մէջ ասանկ բաները  
միշտ գէշ գէշ հետեւանքներ կ'ու-  
նենան : Աստուծոյ ու իր պաշ-  
տամանցը վրայ խօսելու ատեն ,



ամենայն պարկեշտութիւն ու  
 յարգութիւն պիտի ցուցուի,  
 առանց անանկ համարձակու-  
 թիւններու: Ամենեին վայել-  
 չութեան դէմ բան մ'ընէր,  
 բայց մասնաւորապէս աս բանե-  
 րուս մէջ: Եւստ անդամ կը  
 տեսնենք թէ ան մարդիկն որ աշ-  
 խարհիս բաներուն մէջ շատ ա-  
 դէկ կը ճանչնան թէ որն է վայել-  
 լուչը, կրօնքի բաներու դայ նէ՛  
 ամենեին չեն կրնար վայելուչը  
 անպատշաճէն զանազանել:

Արբոր տղան կը սկսի ինքզին-  
 քը ու զՎստուած ճանչնալու  
 համար հարկաւոր եղած խորհր-  
 դածութիւններն ընել, նայէ որ  
 ատեն ատեն յիշեցընես անոր իր  
 սորված պատմութիւնները. վասն  
 զի անով ոչ միայն մտքին մէջ  
 կրօնքի բաները կը նորոգուին,  
 հապա տղան տեսնելով ալ թէ  
 իր ըրած խորհրդածութիւննե-



ըր մարդկային ազգի պատմու-  
 թեան հետ յարմարութիւն մը  
 ունին՝ շատ կ'ուրախանայ : ( )  
 ըինակի համար, ճանչնալուն պէս  
 թէ մարդս ինքիրմէ չէ եղած,  
 իր հոգին Մատուծոյ պատկերն  
 է, ու մարմինը այլ և այլ զար-  
 մանալի գործարանքներէ ձեւա-  
 ցած է, որ աստուածային ճար-  
 տարութեամբ ու զօրութեամբ  
 մը իրարու հետ միացեր են, մէ-  
 կէն միտքը կուգայ արարչու-  
 թեան պատմութիւնը : Արբոր  
 կը մտածէ թէ ինքը բանակա-  
 նութեան հակառակ յօժարու-  
 թիւններով ծնած է, հեշտու-  
 թեամբ խաբուած ու բարկու-  
 թեան գերի եղած է, և թէ  
 մարմինը կը քաշկրուտէ իր հո-  
 գին բանականութեանը դէմ,  
 ու սանձի չեկող ձիու մը պէս  
 կ'առնէ կը տանի վրան նստողը,  
 որ ընդ հակառակն հոգին պիտի



ըլլար մարմնոյն կառավար, շուտ  
 մը Մղամայ մեղացը պատմու-  
 թենէն կ'իմանայ թէ աս ան-  
 կարգութեան պատճառը, և  
 թէ մէկ փրկչին գալուստը զմար-  
 դիկ Մստուծոյ հետ հաշտեցը-  
 նելու համար: Ալ ասա կրօնքի  
 գլխաւոր հիմունքն ալ ասոնք են:

Խորհուրդներն ու Քրիստո-  
 սի հեառն մերոյ գործքերն ու  
 առակները տղոց աղէկ հասկը-  
 ցընելու համար պէտք է անոնց  
 ստէպ Մտտարան կարդացընել:  
 Ալ ինչպէս որ տղաքը սլզտիկուց  
 կը պատրաստենք Քրիստոսի  
 հեառն մերոյ մարմինը հաղոր-  
 դութեամբ ընդունելու, նոյն-  
 պէս ալ պէտք է զիրենք պա-  
 տրաստել Մստուծոյ խօսքերը  
 կարդալու: Մտելու է իրենց որ  
 Ակեղեցին որդւոյն Մստուծոյ  
 հարսն ու ամենայն հաւատացե-  
 լոց հայրն ըլլալով ամէն բանի



իշխանութիւն ունի . և անոր ը-  
 սածին միայն պէտք է մտիկ ը-  
 նենք , վասն զի Հոգին սուրբ կը  
 լուսաւորէ զինքը , որպէս զի  
 մեկնէ մեզի սուրբ գիրքը . Ե-  
 կեղեցւոյ առաջնորդութեամբը  
 միայն կրնայ մարդս Վրիստոսի  
 Տեառն մերոյ քովը երթալ :  
 Ստէպ կարդա տղոց հետ Մէ-  
 տարանին ան կտորները , ուր  
 Վրիստոս Տէրն մեր կը խոստա-  
 նայ պաշտպանել ու ամրացնել  
 իր Ակեղեցին , որպէս զի անիկայ  
 կարենայ ճշմարտութեան ճամ-  
 բուն մէջ առաջնորդել իր որ-  
 դուցը : Վասնաւոր կերպով աղ-  
 ջիկ տղոց հասկըցուր Պօղոս  
 առաքելոյն պատուիրած պար-  
 կեշտ ու չափաւոր իմաստութիւ-  
 նը . պատմէ անոնց թէ նորասի-  
 ռութիւնը որչափ աղջկանց կոր-  
 ծանամանը որոգայթ եղած է ի-  
 րենց բնութեանը յարմար պա-



կասութիւնը ըլլալուն . աչուրնին  
 վախցուր որ չըլլայ թէ կրօնքի  
 բաներուն մէջ եղականութիւն  
 ընեն . պատմէ իրենց թէ նախնի  
 քրիստոնեայք ինչպէս զգուշա-  
 ւոր ու բարեկիրթ էին , ու հի-  
 մակուան մեր թուլութիւնը յի-  
 շելով ամբոջցուր զիրենք , և այն-  
 պէս ձգէ խօսքերը , որ իրենք ի-  
 ընցմէ փափաքանօք աս աւետա-  
 րանական զգուշաւորութեան ե-  
 տեւէ իննան : Մայց դուն ալ  
 լաւ նայէ որ չըլլայ թէ ինքիր  
 գլխէդ ամբարտաւան կերպով  
 մը , անոնց դիմացը մէկուն մէ-  
 կալին վրայ դատաստան ընես ,  
 ու անխոհեմութեամբ նոր նոր  
 կարգաւորութիւններ ընես :

Ղուեն միայն ջանա որ անոնց  
 աչքին առջևը դնես Մէտա-  
 րանն ու հին ատենը եղած բա-  
 ըի օրինակ առնելու դիպուած-  
 ները . բայց աս բանս ալ մ'ը-



ներ , ինչուան որ աղէկ մը անոնց  
 յօժարամիտ հըլթիւնը չփոր-  
 ձես ու չիմանաս թէ ըսած բա-  
 ներուդ պարզմտութիւն կը հաւ-  
 տան : Միշտ խօսքդ Ակեղեցւոյ  
 վրայ բեր ու ըսէ իրենց թէ Ա-  
 կեղեցւոյ համար եղած խոստ-  
 մունքներուն ու Աւետարանին  
 մէջ անոր տրուած իշխանու-  
 թեան ճշմարիտ ըլլալը ասով  
 յայտնի կ'իմացուի որ Վրիստո-  
 սի ասենէն ինչուան հիմայ այն-  
 չափ հալածանաց ու խռովու-  
 թեանց մէջ անմիտաս ու անաս-  
 սան մնացեր է Ակեղեցին , իր  
 հովիւներն ու վարդապետու-  
 թիւնն ալ միշտ անարատ և ան-  
 ընդհատ յաջորդեր են իրարու՝  
 որ Վրիստոսի Տեառն մերոյ  
 խոստմանց կատարուելուն յայտ-  
 նի նշան է : Ալ թէ որ կարենաս  
 անոնց սրտին մէջ խոնարհու-  
 թեան , հպատակութեան ու ա-



մէն տեսակ վտանգաւոր մասնա-  
 ւորութիւններն ատելու հիմը  
 հաստատել, կրնաս իրենց հաս-  
 կըցընել թէ ինչպէս կատարեալ  
 են Նստուծոյ օրէնքները, Այե-  
 ղեցւոյ խորհուրդներուն կարգա-  
 ւորութիւններն ու նախնի քրիս-  
 տոնէից ըրած կրթութիւննե-  
 ըր, և ասկից կրնան շատ պտուղ  
 քաղել: Այս ալ գիտեմ որ մարդ  
 չկրնար բոլոր աս կրթութիւն-  
 ները ամէն տեսակ տղոց ընել  
 տալ. ուստի հոս ասոնք անոր  
 համար միայն դրի՝ որպէս զի ա-  
 մէն դաստիարակ կրցածին չափ  
 ջանայ որ ժամանակին ու կրթե-  
 լու անձանցը կարողութեանն ու  
 յօժարութեանը նայելով յար-  
 մարցընէ անոնց:

Իրաւցընէ աւելորդապաշտու-  
 թիւնն ալ կնիկ մարդկանց հա-  
 մար շատ վախնալու բան է, ու  
 թուն առջևն առնելու; կամ ար-



մատեն խելու համար շարունա-  
կեալ հաստատուն կրթութիւն  
մը պէտք է : Այ կրթութիւնը  
թէպէտ և որոշ մէկ չափ մը  
պէտք է ունենայ , և իմաստնոց  
գիտցածներէն շատ հեռու մնայ ,  
և սակայն այնչափ կրնայ ընդար-  
ձակուիլ որ սովորաբար չկար-  
ծուիր : Ըստ անդամ մարդ  
կարծէ թէ ինքը աղէկ կրթուած  
է , և հակառակն է ամենեին .  
այնպիսւոյն տգիտութիւնը այն-  
չափ մեծ է , որ ինչուան չի կրնար  
ալ իմանալ թէ և ոչ քրիստո-  
նէութեան գլխաւոր բաները  
գիտէ : Հաւատքի ու աստուած-  
պաշտութեան կրթութիւննե-  
րուն մէջ ամենեին անանկ բան  
պիտի չմտնէ որ Աւետարանէն  
հանած կամ Ակեղեցւոյ ընդ-  
հանուր հաւանութեամբը հաս-  
տատուած չըլլայ : Անլքով պէտք  
է տղաքը առաջուց զգուշացը-



նել մէկ քանի անկարգութիւն  
 ներէ, որ շատ սովորական ըլ-  
 լանուն համար՝ ոմանք տգիտա-  
 բար կարծեցին թէ Ակեղեցոյ  
 հիմակուան կրթելու համար  
 բռնած ճամբէն առաջ կուգայ .  
 բայց առ բանս չեն կրնար հաս-  
 տատել ինչուան որ սկիզբը չբըն-  
 նեն, ինչուան որ ամէն բանի  
 կարգը չիմանան, և թէ սուրբե-  
 ըր ինչ կերպով կրթութիւն  
 կուտային :

Այլիկ տղաք բնութեամբ  
 շատ դիւրահաւան են . ուստի  
 վարժեցուր զիրենք որ թեթե-  
 ւամտութեամբ անվաւեր պատ-  
 մութիւններու հաւտան, մէկ  
 նոր ջերմեռանդութիւն մը տես-  
 նելնուն պէս, մանաւանդ թէ որ  
 անխորհուրդ նախանձաւորու-  
 թենէ մը առաջ եկած է ան  
 ջերմեռանդութիւնը, մէկէն 'ի  
 մէկ անոր չկապուին՝ ինչուան



որ Ակեղեցին չհաստատէ ան  
բանը :

Բայց աս ալ կայ որ աս տե-  
սակ նիւթերու մէջ զանոնք խը-  
րատել ուղելով, պէտք չէ դառն  
դատաւոր ըլլալ անոնց ամէն  
ջերմեռանդութիւններուն . հա-  
պա հասկըցընելու է՝ առանց  
վար զարնելու, թէ այսպիսի բա-  
ները սովորաբար հաստատուն  
հիմ մը չեն ունենար :

Բայց քրիստոնէութե վրայ  
ըրած կրթութիւններուդ մէջ  
ամենեւին աս բաներուս վրայ  
խօսք մի բանար : Այ լուծիք  
տղաք ՚ի սկզբանէ կը տեսնեն  
քրիստոնէութեան սրբութիւնն  
ու կատարելութիւնը, այնպէս  
որ կրթութիւններն աւելցընելու  
հարկ չըլլար : Ատքերն ալ կըր-  
նաս կամաց կամաց զիրենք պա-  
տրաստել նորաղանդից ըսածնե-  
րուն դէմ : Ալ ինծի կ'երևնայ



Թէ աս կրթութիւնն անօգուտ  
չլլար . վասն զի ամէն օր կրնանք  
հանդիպիլ այնպիսի մարդկանց՝  
որոնց միտքը իրենց զգայութի-  
ներուն գերի եղած ըլլալով՝ ին-  
չուան ընտանեկան խօսակցու-  
թեանց մէջ ալ աս բաներուս  
վրայ խօսք կը բանան :

Իսէ իրենց թէ անոնք անդա-  
դար զմեզ վար կը զարնեն ըսե-  
լով թէ դուք պատկերներուն  
յարգութիւն կուտաք , սրբոց  
բարեխօսութիւնը կ'ընդունիք ,  
մեռելոց համար աղօթք կ'ընէք ,  
ու ներողութեանց կը հաւտաք :  
Տեսնենք թէ Ակեղեցւոյ վար-  
դապետութիւնը ինչ է մկրտու-  
թեան , դրոշմի , պատարագի ,  
ասրաշխարութեան , խոստովա-  
նութեան վրայ , եպիսկոպոսաց  
ու Պապին իշխանութէր վրայ՝  
որ 'ի Քրիստոսէ անոնց գլուխ  
դրուած է , և ուսկից որ զա-



տուողը Ակեղեցիէն ալ զա-  
տուած կ'ըլլայ :

Ահա ասոնք են , ըսէ , հաւ-  
տայու բաները . իսկ ան բաները՝  
որոնց համար Ապրիլիանայք կը  
մեղադրեն զմեզ թէ մենք մեզ  
մէ հնարեր ենք՝ կաթողիկէ Ա-  
կեղեցւոյ վարդապետութիւն-  
ներ չեն , ու թէ որ մենք ուզենք  
ստիպել որ ընդունին ան բանե-  
րը՝ որ իրենց մտքին հակառակ  
են , և միանգամայն Ակեղեցւոյ  
ալ ընդունելի չեն իբրև մասունք  
հաւատոյ , մենք մեզմէ արգելք  
կ'ըլլանք անոնց դառնալուն ու  
Ակեղեցւոյ հետ միաբանելուն :  
Աւ ըսէ թէ նորադանդք յանդըզ-  
նութեամբ իրենք իրենց գլխուն  
որչափ հին ու սրբազան արարո-  
ղութիւններ ջնջեցին . աս ալ  
ըսէ թէ նոր բան մըն ալ դրուած  
էնէ՛ ան ալ առջիններուն դիտա-  
ւորութեանը համեմատ ըլլա-



լով, պէտք է որ անոնց պէս յար-  
գութիւն գտնէ. վասն զի այն  
պիսի բաներ հաստատողը միշտ  
Արդւոյն Նստուծոյ անմահական  
հարսին իշխանութիւնն է :

Աստի նորաղանդից աղան-  
դապետներուն վրայ խօսելով  
որ Ակեղեցին բարեկարգենք  
ըսելով՝ առջի հովիւներուն հօ-  
տին մէկ մասը յափշտակեցին,  
մի մոռնար աս ալ ըսելու թէ  
ան ամբարտաւան մարդիկը ինչ  
պէս մոռցան մարդկային տկա-  
րութիւնը, ինչպէս իրենք իրենց  
գլխուն քրիստոնէական վարդա-  
պետութեան, ու սուրբ գրքին  
ամէն կտորները մեկնել ուզե-  
լով, Ակեղեցւոյ տուած մեկնու-  
թիւններն արհամարհելով, պար-  
զամիտ մարդկանց համար դը-  
ժուարին բան մը դարձուցին  
կրօնքը : Հասկրցուր թէ հաւա-  
տացելոց հաւատքին գերագոյն



կանոնը սուրբ գիրքն է : Հերե-  
տիկոսաներուն չափ մենք ալ գի-  
տենք ըսէ թէ եկեղեցին ալ սուրբ  
գրքին պիտի հնազանդի , բայց  
մենք կ'ըսենք թէ հոգին սուրբ  
Նկեղեցւոյ կ'օգնէ , որ սուրբ  
գրոց մեկնու թիւնը շիտակ տայ :  
Մենք ոչ թէ Նկեղեցին սուրբ  
գրքէն վեր կը դնենք , հասլա  
ընդհանուր Նկեղեցւոյն սուրբ  
գրքին համար տուած մեկնու-  
թիւնը մեր տուած մեկնու թե-  
նէն վեր է կ'ըսենք : Ա երջի աս-  
տիճանի ամբարտաւանութիւն  
ու յանդգնութիւն է որ մէկը  
վախնայ որ չըլլայ թէ Նկեղե-  
ցին սխալ որոշմունք մը ընէ , իսկ  
ինքը անոր հակառակ որոշմունք  
ընելով իր վրայ ամենեին սխա-  
լելու վախ չունենայ :

Աերպով մը տղոց փափաքը  
չարժէ որ ուզեն ամէն արարո-  
ղութեանց , ամէն աստուածային



պաշտամանց խօսքերուն , ու Ե-  
կեղեցւոյ խորհուրդներուն մա-  
տակարարութեան պատճառնե-  
րը հասկընալ : Յուցուր իրենց  
մկրտարանը , թող մկրտուողնե-  
րը տեսնեն ու յիշեն թէ աւագ  
հինգշաբթի օրը ինչպէս մեռոն  
կ'օրհնեն , աւագ շաբաթ օրն  
ալ աւագաններուն ջուրը \* : Ա-  
տեն աստեն իրենց հոգևոր բան մը  
կարդա , որ ընդունայն ու շինծու  
զարդերու տեղը՝ խելք սորվելու  
և բարի օրինակ առնելու խօսքե-  
րով լեցուն ըլլայ , ինչպէս են  
գեղեցիկ քարոզներն ու վարդա-  
պետական ճառերը , որոնցմով  
աւետարանին խօսքերը պարզ  
կերպով կը հասկընան : Ասէ ի-  
րենց թէ աս կըթութիւնները  
ինչպէս յատակ և միանգամայն  
գեղեցիկ ու հոգեշահ են , ասով

\* Ըստ Աստիւնացւոյ :



կրնաս սրտերնուն մէջ սէր մը  
 ձգել որ ստէպ ժողովրդապետա-  
 կան եկեղեցին երթան, ուր որ  
 աւագերէցը օրհնութեամբ ու  
 իշխանութեամբ կը խօսի՝ թէ-  
 պէտե քիչ խելք ու առաքինութեան  
 թիւն ունեցող մարդ ալ ըլլայ :  
 Տայց միանգամայն նայէ որ ի-  
 րենց սիրելի ու յարգելի ընես  
 նաև ան ամէն ընկերութիւն-  
 ներն որ Ակեղեցւոյ կը ծառայեն :  
 Ա՛ի թողուր ամենեւին որ կրօ-  
 նաւորաց հազուստին կամ վի-  
 ճակին վրայ ծիծաղին . հասկը-  
 ցուր իրենց անոնց վիճակին սրբ-  
 բութիւնը, և թէ որչափ օգուտ  
 կ'ընեն Ակեղեցւոյ, որչափ քրիս-  
 տոնեայք բազմութեամբ կ'եր-  
 թան կը քաշուին ան առանձին  
 վանքերն ու կատարելութեան  
 ետեւէ կ'ըլլան, որ շատ դժուար  
 է աշխարհիս մէջ ընելը : Նայէ  
 որ տղոց երեւակայութիւնը ա-



նանկ վարժեցրնես որ մահուան  
վրայ խօսք լսելու փոյթերնին  
չըլլայ . կարենան առանց խռո-  
վելու դագաղ մը , բաց գերեզ-  
ման մը , հողեվարք հիւանդ-  
ներ , ու մեռել տեսնել . և թէ  
որ կարենաս աս բաներուս զի-  
րենք վարժեցրնել առանց վախ-  
ցրնելու՝ շատ լաւ կ'ընես :

Վ'նչ ցաւալի բան է տեսնելը  
շատ խելացի ու բարեպաշտ ան-  
ձինք՝ որ մահուան անուշը լսե-  
լուն պէս կը սարսափին կը մնան .  
ոմանք ալ թէ որ յանկարծ տա-  
սուիրեք հողւոյ հետ սեղան նրա-  
տին , կամ մէկ քանի երազներ  
տեսնեն , և կամ աղի ամանի մը  
թափուելը տեսնեն կը մարին  
կ'իյնան \* : Վ'ս ամէն ծուռ դու-

\* Եւրոպայի մէջ շատ տեղ աս աւե-  
լորդապաշտական կարծիքը կայ թէ սե-  
ղանի մը վրայ տասուիրեք հողի որ գրա-  
նուին՝ անոնց մէկը կը մեռնի , ինչպէս որ



շակութեանց վախը հեթանոս-  
 սութեանէն մնացած է. դուն հաս-  
 կըցուր տղոց թէ ասոնք որչափ  
 ընդունայն ու ծաղրելի բաներ  
 են : (Ծ) Կէպէտե կանանց այնչափ  
 հարկաւոր չսեպուիր քաջասըր-  
 տութիւնը որչափ էրիկ մարդ-  
 կանց, սակայն անոնք ալ պէտք  
 է որ գոնէ քիչ մը քաջասիրտ  
 ըլլան : Վ ատասրտութիւնը միշտ  
 արհամարհելի է, վասն զի միշտ  
 ալ գէշ հետեւանքներ կ'ունե-  
 նայ : Շ ատ հարկաւոր է որ կը-  
 նիկ մարդ մը կարենայ գէթ ըն-  
 դունայն վախերը արհամարհել,  
 ու քաջութեամբ անոնց դէմ  
 կենալ. յանկարծ վտանգի մը

Քրիստոսի Տեառն մերոյ վերջին ըն-  
 թրեաց ատենը տասուիրէք հոգի էին սե-  
 ղանին վրայ ու ետքը Յիսուս մեռաւ :  
 Նմանապէս կերակրոյ ատեն աղամանին  
 թափիլը նոյն սեղանը նստողներէն մէ-  
 կուն մեռնելուն նշան կը սեպեն :



մէջ իյնալու որ ըլլայ՝ չթուլնայ ,  
 հաստատուն կենայ . ու լալն ու  
 սոսկալը մեծամեծ բաներու հա-  
 մար միայն պահէ . թէպէտև ան  
 մեծ դիպուածներուն մէջ ալ  
 պէտք է առաքինութեան համար  
 ինքզինքը ամուր բռնէ : Արբոր  
 մէկը քրիստոնեայ է , թէ՛ էրիկ  
 մարդ եղեր է և թէ՛ կնիկ մարդ ,  
 ամենևին պէտք չէ որ վատասիրտ  
 ըլլայ : Արնանք ըսել թէ քրիս-  
 տոնէութեան հոգին է աս կե-  
 նաց արհամարհութիւն , և հան-  
 դերձեալ կենաց սէր :

ԳԼՈՒԽ Ը .

Արքուշրիշն Աստուծոյ տաար պատուի-  
 րանացը , Եկեղեցոյ խորհրդոց ու  
 սոթքի վրայ :

Տղոց աչքին առջևը ամէն  
 վայրկեան դնելու բան մը կայ  
 նէ՝ Վրիստոս Տէրն մեր է ,



մեր սուրբ հաւատքին կեդրոնը՝  
հեղինակն ու պարզեւիջը, և մեր  
մի միայն յոյսը: Միտքս ան չե  
որ ըսեմ հոս թէ տղոց ինչպէս  
պէտք է սորվեցընել մարդեղու  
թեան խորհուրդը, վասն զի ա  
նով մէյսը առաջարկութենէս  
չատ կը հեռանամ. երկրորդ,  
չատ գրքեր կան որոնց մէջ տեղն  
'ի տեղ կրնայ մարդ գտնել անոնց  
սորվեցընելու հարկաւոր բանե  
րը: Մէյսը սկզբունքը կամ  
հիմունքը տրուելէն ետքը՝ պէտք  
է կրթուելու անձին ամէն դա  
տաստաններն ու գործքերը շրտ  
կել Վրիստոսի օրինակովը, որ  
մահկանացու մարմին առաւ, որ  
պէս զի մեզի սորվեցընէ թէ ինչ  
պէս պէտք է ապրինք ու մեռ  
նինք. ու իր մեզի նման մարմնոյն  
վրայ ցուցուց թէ ինչ բանի  
պարտրկան ընենք հաւտալու, և  
ինչ պիտի ընենք: Հարկ չէ որ



անդադար տղուն զգացմունքներն  
 ու գործքերը Վրիստոսի Տեառն  
 մերոյ վարքին հետ բաղդատենք.  
 վասն զի այնպիսի բաղդատու  
 թիւնը թէ՛ ձանձրալի կ'ըլլայ և  
 թէ՛ փաստակար, հապա այնպէս  
 պէտք է վարժեցնել տղաքն որ  
 հասկընան թէ Վրիստոսի Տճն  
 մերոյ վարքը մեր օրինակն է, և  
 խօսքերը մեզի օրէնք: Վրիս-  
 տոսի խօսքերուն ու գործոցը  
 մէջէն տղուն աւելի յարմարնե-  
 ըր ընտրէ զատէ. և երբոր կը  
 նայիս որ մէկ բանի մը մէջ ան-  
 հանգիստ ըլլալուն համար կը  
 նեղանայ, շուտ մը միտքը ձգէ  
 թէ ինչպէս Վրիստոս խաչին  
 վրայ գամուեցաւ. երբոր իր չու-  
 զած բանին վրայ աշխատելուն  
 համար կը գանգատի ու չուզեր  
 համբերել, յիշեցուր իրեն թէ  
 Վրիստոս Տէրն մեր ինչպէս  
 ինչուան երեսուն տարի խանու-



Թի մէջ աշխատեցաւ . Թէ որ  
 ուզէ որ ամէնքը զինքը գովեն  
 ու մեծի տեղ դնեն , ըսէ իրեն  
 Թէ մեր փրկիչը Յիսուս որչափ  
 նախատինք ու թուքումուր լը-  
 սեց . Թէ որ մէկուն մէկալին  
 հետ ջլարենայ սիրով վարուիլ ,  
 յիշեցուր իրեն Թէ Վրիստոս  
 Տէրն մեր ինչպէս մեղաւոր ու  
 կեղծաւոր մարդկանց հետ սի-  
 րով կը վարուէր . իմանալուդ  
 պէս որ մէկուն դէմ ոխ պահեր  
 է , առջևը դիր Վրիստոսի օրի-  
 նակը որ խաչին վրայ մեռաւ  
 նաև զինքը մեռցրնողներուն փրկ-  
 կու թեանը համար . Թէ որ ինք-  
 զինքը անհամեստ ուրախութե  
 մը տալու ըլլայ , նկարագրէ ի-  
 րեն Վրիստոսի Տեառն մերոյ  
 հեղութիւնն ու համեստութիւ-  
 նը , և Թէ ինչպէս բոլոր կենացը  
 մէջ ծանրաբարոյ եղաւ և զգու-  
 շաւոր : Ա երջապէս լաւ մը հաս-



կրցուր իրեն որ միշտ աս բանս  
մտածէ թէ Վրիստոս Տէրն  
մեր քովերնիս ըլլար նէ, ար-  
դեօք ինչ կ'ըսէր՝ տեսնելով մեր  
կենցաղավարութիւնը, մեր զբօ-  
սանքներն ու մեր նաև ամենա-  
զգուշաւոր սեպուած գործքերը :  
Նն ինչ սոսկալի վախ ու սար-  
սափ պիտի ունենայինք, ըսէ,  
թէ որ յանկարծ իր պատուի-  
րանները մոռցած ատեննիս մեր  
մէջը երևնալու ըլլար : Վայց  
վրայ բեր թէ միթէ աս բանս  
մեռնելուս պէս պիտի ճանդի-  
պի՞ ամէն մէկերնուս, ու նաև բո-  
լոր աշխարհիս, երբօր վերջի դա-  
տաստանին անյայտ օրը հասնե-  
լու ըլլայ : Նս ըսելով նկարագրէ  
թէ ինչպէս բոլոր տիեզերքը մե-  
քենայի մը պէս պիտի քայքայի  
կործանի, արևը պիտի խաւարի,  
աստղերն իրենց տեղէն պիտի  
թօթափին, տարերքը պիտի այ-



ըին ու հրեղէն գետի պէս պիտի  
 վազեն . երկիրս 'ի հիմանց պիտի  
 սասանի : Արեմն ըսէ , ինչ աչ  
 քով պէտք է նայինք աս երկնքին  
 վրայ որ վրանիս պատած է , աս  
 երկրիս որուն վրայ որ կ'ապրինք ,  
 աս շէնքերուն որոնց մէջ կը բը-  
 նակինք , ու բոլոր մեր չորս կող-  
 մը եղած արարածներուն , երբոր  
 մտածենք թէ որ մը բոլորն ալ  
 պիտի բռնկին այրին : Այ բա-  
 ներս ըլլալէն վերջը , ըսէ , գե-  
 ղեղմանները պիտի բացուին ,  
 մեռելներուն ցրուած ոսկորները  
 քովէ քով պիտի գան միանան ու  
 կենդանանան . Արիստոս Տէրն  
 մեր ահաւոր զօրութեամբ ամ-  
 պերուն վրայէն պիտի իջնայ ,  
 բացուի պիտի ան գիրքը՝ ուր որ  
 գրուած պիտի ըլլան մարդկանց  
 սրտին նաև ամենածածուկ խոր-  
 հուրդները . ամենայն հին և նոր  
 ազգաց ու ժողովրդոց առջևը ա-



մէն մարդու վճիռ պիտի տրուի .  
 ան ատենը արդարները յաւի-  
 տենական պայծառութիւն պիտի  
 պատկուին , ու նոյն Վրիստոսի  
 հետ հաւասար նստած պիտի  
 թագաւորեն : Ատքը նկարագրե-  
 ան կրակէ ու ծծումբէ լիճը ,  
 ան խաւար գիշերը , ան յաւի-  
 տենական սոսկումը , ան ակռա-  
 ներուն կրճրտելը , ան սատանա-  
 ներուն հետ ամենուն ունեցած  
 կատաղութիւնը որ մեղաւորաց  
 բաժինը պիտի ըլլայ :

Վնհողութիւն մ'ըներ , Վս-  
 տուծոյ տասը պատուիրանքները  
 լաւ մեկնէ տղոց , հասկըցուր թէ  
 բոլոր Վստուծոյ օրէնքներն ա-  
 նոնց մէջ ամփոփուած են . և  
 թէ ինչ բան որ անոնց մէջ  
 մութ կ'երևնայ՝ աւետարանին  
 մէջ պարզուած է : Վսէ իրենց  
 թէ խրատը ինչ բան է . և մի  
 թողուր որ աշկերտներդ իրենք



զիրենք խաբեն, ինչպէս շատ  
 մարդիկ կ'ընեն, մեծ տարբերու  
 թիւն մը դնելով խրատուց ու  
 պատուիրանաց մէջ: Հասկըցուր  
 թէ խրատներն անոր համար  
 դուռած են որ անոնցմով պա  
 տուիրանաց պահպանութիւն  
 րանայ, և անոնցմով ուժ առնեն  
 մարդիկ իրենց բնական տկարու  
 թեանը յաղթելու, ու վտանգ  
 ներէ հեռանալու, ուր որ իրենց  
 ծանրութեամբը կրնային իյնալ.  
 վերջապէս խրատները բացար  
 ձակ պատուիրաններ կը դառնան  
 անոնց՝ որ մէկ պատճառով մը  
 չեն կրնար պատուիրանները պա  
 հել առանց մասնաւոր խրատ  
 ներն ալ պահելու: ( ) որ օրի  
 նակ ան մարդիկն որ աշխարհքի  
 բաներուն վրայ շատ սէր ձգած  
 են ու ընկերութեանց ծուղակ  
 ներու մէջ շուտով կը բռնուին,  
 պարտական են՝ ւետարանին խը



րատր պահել ու ամէն բան թու  
 ղուլ տեղ մը քաշուիլ: Ստեպ  
 ըսէ անոնց թէ գիրը մեռցրնող  
 է, ու հոգին է կեանք տուող.  
 այսինքն արտաքին բարեպաշ  
 տու թիւնը անօգուտ և մնասա  
 կար է՝ թէ որ ներսէն սիրով և  
 աստուածապաշտութեան հոգւով  
 զօրացած ջրլայ: Աս լեզուն ա  
 լելի բացայայտ ու զգալի ըրէ.  
 հասկըցուր թէ Աստուած կ'ու  
 զէ որ զինքը սրտով պատուենք  
 և ոչ թէ միայն բերնով. արա  
 ղողութիւնները բուն մեր հա  
 լատքը չեն, հապա անոնցմով  
 հաւատքին ինչ ըլլալը կ'երև  
 նայ, և մարդու ջերմեռանդու  
 թիւնը կը շարժի. իսկ հաւատքը  
 բոլորովին ներքին բան է, որով  
 հետև Աստուած կ'ուզէ որ իրեն  
 երկրպագութի ընողները զինքը  
 հոգւով և ճշմարտութեամբ պաշ  
 տեն. անոր համար ներքին սի



ըստ պէտք է զինքը սիրենք, և  
 զնենք մտքերնիս որ իբր թէ բո-  
 լոր աշխարհիս մէջ ինքն ու մենք  
 միայն ըլլայինք, և թէ ինքը ոչ  
 մեր խօսքերուն կարօտութիւն  
 ունի, ոչ մեր աս կամ ան ձեռով  
 իր առջևը կենալուն, և ոչ մեր  
 ստրկին, հասկա զմեզ միայն  
 կ'ուզէ. և բաւական չէ միայն  
 պարզ օրէնքին հրամայածը կա-  
 տարել, հասկա պէտք է այնպէս  
 կատարել որ օրէնքը ինչ դիտ-  
 մունք որ ունեցեր է՝ ան օգուտն  
 ալ քաղենք: Աստի բանի չի գար  
 պատարագ լսելը՝ թէ որ մէկը  
 չլրսէ Վրիստոսի հետ միանա-  
 լու փափաքանօք, որ մեզի հա-  
 մար ինքզինքը զոհ մատոյց, ու  
 փոյթ չունենայ Վրիստոսի վա-  
 րուցը հետևելու: Աերջապէս  
 խօսքը հոն բեր թէ ամէն Տէր  
 Տէր կանչողներն արքայութիւն  
 պիտի չմտնեն, հասկա որոնք որ



Վստուած բոլոր սրտանց սիրեր  
 են, ժամանակաւոր բարիքներէ  
 հրաժարեր, իրենք զիրենք ար-  
 համարհեր, ու աշխարհէս զը-  
 զուեր են՝ անոնք պիտի մտնեն .  
 իսկ անոնք որ քրիստոնէութեան  
 վրայ խենթ ու խելառ կարծիք-  
 ներ ունենալով՝ թէ՛ իրենք զի-  
 րենք և թէ զուրիշները կը խա-  
 բեն՝ ոչ երբէք պիտի մտնեն :

Վստնք ըսելէն վերջը անցիր է-  
 կեղեցւոյ խորհուրդներուն : Վը-  
 նենք թէ դուն արդէն ինչպէս  
 որ ըսինք, բաւական բացատրած  
 ես տղոց խորհուրդներուն ան  
 արարողութիւնները որ տղոց առ-  
 ջեն . ալ կը կատարուին . անով  
 միանգամայն անոնց հոգին ու  
 վախճանն ալ աղէկ կրնան ըմ-  
 բռնել : Հասկըցուր իրենց թէ  
 ինչ մեծ բան է քրիստոնէայ ըլ-  
 լալը, և թէ որչափ ամօթալի  
 ու ցաւալի է այնպէս ըլլալ՝ ինչ



պէս են շատերը աշխարհիս մէջ :  
 Յիշեցուր միշտ իրենց մկրտու-  
 թեան ատեն եղած հրաժար-  
 մունքներն ու խոստմունքները, և  
 վրայ բեր թէ աշխարհիս օրի-  
 նակներն ու սկզբունքները մեր  
 վրայ ազդեցութիւն մը չունե-  
 նալէն զատ՝ պէտք է նաև կաս-  
 կածելի ընեն մեզի ան ամէն  
 քաններն որ այնպիսի ատելի ու  
 թունաւոր աղբիւրէ մը կը բլլ-  
 խեն : Մի վախնար նաև Պօղոս  
 առաքելոյն խօսքովն ըսելու թէ  
 սատանան աշխարհիս վրայ թա-  
 դաւորած՝ տեսակ տեսակ կիր-  
 քերով մարդկանց սիրտը անդա-  
 դար շարժելու վրայ է, որպէս  
 զի հարստութեան, փառաց և  
 հեշտութեանց ետևէ իյնան .  
 ուստի, ըսէ, հիմակուան զեղ-  
 խութեանց պատճառն ալ ոչ  
 այնչափ աշխարհս է, որչափ սա-  
 տանան . և մէկ քրիստոնէայ մը



ասոնք աղէկ գիտնալով՝ պէտք  
 չէ որ աս ունայնութեանց տե-  
 սարանին ոչ աչք ձգէ և ոչ սիր-  
 տը կապէ : Մարդս մկրտութի-  
 քրիստոնէութե մէջ մէկ քայլ  
 մը առնելուն պէս՝ հրաժարած  
 կը գտնուի աշխարհիս զեղխու-  
 թիւններէն . և Մատուծոյ ըրած  
 այնչափ մեծամեծ խոստմունք-  
 ները բանի տեղ չսեպելով աշ-  
 խարհիս ետեւէն երթալը , կեր-  
 պով մը հաւատքը ուրանալ է ,  
 այնպէս ինչպէս որ մէկ ուխտած  
 կրօնաւոր մը ըրած ուխտերն ար-  
 համարհէ , վանքէն ելլէ , ապաշ-  
 խարութեան սքեմը ձգէ , ու եր-  
 թայ աշխարհք մտնէ :

Եւ վրայ բեր թէ մենք որչափ  
 պարտրկան ենք ոտքի տակ առ-  
 նելու ամէն տեսակ սնոտի ու ան-  
 հիմն արհամարհութիւնները ,  
 ամպարիշտ կատակներն ու նաև  
 աշխարհիս բռնութիւնները , ու



ըովհետև դրոշմ առնելով Վր-  
 թիստոսի զինուոր կ'ըլլանք, որ-  
 պէս զի ան թշնամւոյն՝ այսինքն  
 աշխարհիս հետ պատերազմինք :  
 Ապիսկոպոսը, ըսէ, որ ձեզի  
 պզտիկ ապտակ մը կը զարնէ\* ,  
 անոր համար է որպէս զի անով  
 վարժիք նաև հալածանաց ամէն  
 սաստիկ հարուածներուն համ-  
 բերելու . կ'օժէ զձեզ մեռնով  
 ինչպէս որ հին ատեն պատերազ-  
 մի երթալէն առաջ վրանին ե-  
 ղեր կը քսէին, որ անդամին ա-  
 լելի դիւրադարձ ու զօրաւոր ըլ-  
 լայ . վերջը վրանիդ խաչ կը հա-  
 նէ, որպէս զի ձեզի հասկըցընէ  
 թէ դուք ալ պէտք է Վրիստո-  
 սի հետ խաչուիք :

\* Ատինացիք մեզի պէս դրոշմը մկր-  
 տութեան հետ չեն տար, այլ տղուն վեց  
 եօթը տարեկան ըլլալէն ետքը զատ կու-  
 տան . և Ապիսկոպոսը դրոշմը տալէն  
 ետքը՝ տղուն երեսը կամացուկ ապտակ  
 մը կը զարնէ :



Հիմա հալածանք չունինք ը-  
 սէ, ինչպէս հին ատենն որ Աւե-  
 տարանը ուրանալ չուզողը կը  
 բռնէին կը մեռցընէին . բայց  
 քանի որ աշխարհս աշխարհ է,  
 այսինքն ապականած է, ուղղակի  
 ալ չէ նէ՝ մէկուն մէկալին ձեռ-  
 քովն անդադար բարեպաշտից  
 դէմ հալածանք կը հանէ, որո-  
 գայթներ կը լարէ որ զիրենք վար-  
 ձդէ, կ'արհամարհէ զիրենք ու  
 վրանին կը ծիծաղի . և բարե-  
 պաշտութեան գործքերը շատ  
 վիճակներու մէջ այնպէս կը դը-  
 ժուարացընէ որ ինչուան քրիս-  
 տոնեայ ազգաց մէջ, քրիստո-  
 նեայ թագաւորաց հաւատքին  
 նեցուկ և պաշտպան կեցած ա-  
 տենն ալ կրնան գտնուիլ շատ  
 մարդիկ որ Վրիստոսի անուանը  
 վրայ ու Վրիստոսի վարուցը  
 հետևելու ամբնան :

Հասկըցուր աշկերտներուդ



Թէ որչափ երջանիկ ենք մենք որ  
 սուրբ հաղորդութեան խորհրդով  
 Վրիստոսի հետ կը միա  
 նանք, մկրտութեամբ իրեն եղ  
 բայրակից, հաղորդութեամբ ալ  
 իրեն անդամ ըլլալով: Ալ Թէ  
 ինչպէս որ Վրիստոս մարդեղու  
 Թեան խորհրդով բոլոր մարդ  
 կային բնութեան տուաւ ինք  
 զինքը, հաղորդութեան խորհրդով  
 ալ, որ մարդեղութեան հե  
 տեանքն է, կուտայ ինքզինքը  
 իւրաքանչիւր հաւատացելոց: Ար  
 խորհրդոցը մէջ ամէն բան իրա  
 կան է. Վրիստոս հէրն մեր  
 ինչպէս որ առաւ, նոյնպէս ալ  
 իրօք կուտայ իր մարմինը. բայց  
 ով որ Վրիստոսի հետուն մերոյ  
 հոգին չունի, անարժանութի  
 կը մերձենայ սուրբ խորհրդոյն,  
 ու փոխանակ անոր կենդանարար  
 մարմինն ու արիւնը ճաշակե  
 լու՝ իր անձին դատապարտու



Թիւնը կ'ընդունի. վասն զի ինքն  
 ալ ըսաւ թէ՛ «Ո՛վ որ զիս կը  
 ճաշակէ, ինձի համար պիտի ա-  
 պրի »:

Բայց ինչ մեծ թշուառու-  
 թիւն է, ըսէ, Մատուծոյ որդի-  
 քը գտնուելէն վերջն ալ կարօտ  
 ըլլալ ապաշխարութեան խոր-  
 հրդոյն: Իրաւ է որ աս երկնային  
 իշխանութիւնը Մատուած տուեր  
 է քահանայից երկրիս վրայ,  
 որ ասով կապէն ու արձակէն  
 մեղաւորներն իրենց կարօտու-  
 թեանցը համեմատ, որով ողոր-  
 մութեանց անսպառելի աղբիւր  
 մըն է. սակայն պէտք է միշտ ա-  
 հով դողով կենալ որ չըլլայ թէ  
 Մատուծոյ տուած պարգևները  
 չարաչար գործածելով, իր եր-  
 կայնամտութիւն չափը անցընենք:  
 Պէտք է սրտանց փափաքինք որ  
 Քրիստոսի հէն մերոյ մարմնու-  
 վը ամէն օր սնանինք, ինչպէս որ



արդարոյ կեանքը , զօրութիւնն  
 ու միսիթարութիւնը ան է . ուս-  
 տի հիւանդ հողոց բժշկու-  
 թեանը համար պէտք է փափա-  
 քել որ այնպիսի առողջութեան  
 մը հասնին , որ ալ ապաշխարու-  
 թեան դեղին կարօտութիւն չու-  
 նենան : Ալ թէպէտ առ կարօ-  
 տութիւն բողորովին չի կրնար վեր-  
 ցուիլ , բայց շատ գէշ բան է որ  
 մէկը բողոր կենացը մէջ անդա-  
 դար գայթապդական շրջան մը  
 ընէ՝ ի մեղաց յապաշխարութի ,  
 յապաշխարութենէ ՚ի մեղս :  
 Անոր համար խոստովանանքը  
 պիտի ըլլայ մեղքերէն ետ կե-  
 նալ , վարքը փոխել . ապա թէ  
 ոչ արձակման խօսքերը թէպէտ  
 և շատ զօրաւոր են՝ Վրիստոսի  
 Տեառն մերոյ դրածն ըլլալովը ,  
 բայց մեր անպատրաստութեամբ  
 բը մահաբեր խօսքեր կը դառ-  
 նան , ու մեզի դատապարտու-



Թեան պատճառ կ'ըլլան Մատու  
 ծոյ առջևը : Սուտի առանց ներ-  
 քին փոփոխու թեան եղած խոս-  
 տովանու թիւնը ոչ միայն չի թե-  
 թեցրնէր մարդուս խիղճը մե-  
 ղաց բեռներէն , հապա մէկալ  
 մեղաց վրայ սրբապղծու թեան  
 սոսկալի մեղքն ալ կ'աւելցրնէ :

Մշկերտներուդ կարդացրնել  
 տուր հոգեվարաց վրայ ըլլալու  
 աղօթքները , որ շատ սքանչելի  
 բաներ են . ցուցուր անոնց թէ  
 Մշկեղեցին հոգեվարք եղողնե-  
 րուն վերջին օծումը տալու ա-  
 տեն ինչ կ'ընէ , ու ինչ խօսքեր  
 կ'ըսէ : Մ'նչ մեծ մխիթարու-  
 թիւն է անոնց որ նորէն օծուին  
 սուրբ իւղով ան վերջի պատե-  
 ռազմին համար : Մայց որպէս զի  
 այնպիսի մահուան շնորհքներուն  
 արժանի ըլլայ , պէտք է որ մարդս  
 իր կենացը մէջ Մատուծոյ տուած  
 շնորհքը աղէկ գործածէ :



Տղոց զարմանքը բեր թէ աս  
 ինչ մեծ շնորհք է որ Վրիստոս  
 Տէրն մեր սրբազան բան մը ը-  
 նելով ծննդեան ծագումը՝ որ է  
 ամուսնութիւն, ուզեր է դար-  
 ման ընել այն ամենայն չարեաց  
 որ անկէ կրնային առաջ գալ:  
 Արչափ վայելուչ էր ամուսնու-  
 թեան վրայ մէկ խորհուրդ մը  
 հաստատել, որ Մատուծոյ իր ա-  
 բարածոցը՝ ու Վրիստոսի Ա-  
 կեղեցւոյն հետ ունեցած միաւո-  
 ռութեանը օրինակ է: Արչափ  
 հարկաւոր էր աս օրհնութիւնը  
 որ մարդկանց վայրենի կիրքերը  
 չափաւորուին, ընտանեաց մէջ  
 սէր և խաղաղութիւն ըլլայ, և  
 աստուած պաշտութիւնը ժառան-  
 գութեան մը պէս որդւոց որդի  
 անցնի: Մտով ալ յայտնի կ'ի-  
 մացուի թէ ամուսնութիւնը ամ-  
 մենասուրբ վիճակ մըն է, թէ-  
 պէտև կուսութեան պէս կատա-



րեալ չըլլայ . վասն զի կոյս մնա-  
լու համար պէտք է որ մարդ  
մասնաւոր կոչումն ունենայ , և  
անկէց ետքը ոչ հեշտութիւն  
փնտռէ և ոչ աշխարհային պեր-  
ճութիւն , հապա միայն սուրբ  
ըլլալու փափաքի :

Գովէ Արդւոյն Նստուծոյ ան-  
հուն իմաստութիւնը , որ իր տե-  
ղը մեզի հովիւներ դրեր է , որ-  
պէս զի զմեզ իր կողմանէ կըր-  
թեն , մեզի իր մարմինը տան ,  
թէ որ բանի մը մէջ սխալելու  
ըլլանք՝ զմեզ իրեն հետ հաշտե-  
ցնեն , ամէն օր նոր նոր մարդիկ  
դարձնեն ՚ի քրիստոնէութիւն ,  
իրենց յաջորդ նոր հովիւներ  
ձեռնադրեն , և անոնք իրենցմէ  
ետքը մեզի առաջնորդելով՝ ա-  
մէն ժամանակ Նկեղեցին անա-  
պական պահուի : Հասկըցուր  
թէ պէտք է ուրախանալ որ Նս-  
տուած այսպիսի իշխանութիւն



մը սուեր է մարդկանց: Ալ վրայ  
 բեր թէ ուրեմն ինչպիսի կրօնա-  
 սիրու թեամբ պէտք է պատուել  
 Մատուծոյ օժեալ քահանաները  
 որ արք Մատուծոյ են և իրեն  
 խորհրդոցը մատակարար: Աւս-  
 տի թէ որ վրանին մէկ պզտիկ  
 արատ մըն ալ տեսնէ մարդ, որ  
 իրենց պաշտաման պայծառու-  
 թեանը վրայ մթու թիւն մը  
 ձգէ, պէտք է որ աչք գոցէ, ջը-  
 տեսնելու զարնէ, վրանին ցաւի  
 և փափաքի որ եթէ կարելի ըլ-  
 լար իր արեամբը ան արատը  
 լուար: Քահանայից սորվեցու-  
 ցած վարդապետութիւնն իրեն-  
 ցը չէ, ո՛վ որ անոնց մտիկ կ'ընէ  
 Քրիստոսի մտիկ ըրած կ'ըլլայ.  
 Երբոր անոնք յանուն Քրիստո-  
 սի կը ժողվուին որ սուրբ գրքին  
 խօսքերուն մեկնութիւն տան,  
 Հոգին սուրբ հետերնին կը խօ-  
 սի: Իրենց ժամանակը իրենցը



չէ . ուստի պէտք չէ որ ուզէ մէ-  
 կը զիրենք այնպիսի բարձր պաշ-  
 տօնէ իջեցընել , ուր որ հարկա-  
 դրուած են վարդապետելու , ա-  
 ղօթելու և Նստուծոյ ու մարդ-  
 կանց մէջ միջնորդ ըլլալու , և  
 ինչուան աշխարհական գործքեր  
 ընել տալ անոնց : Նսկէց ալ ա-  
 լելի ապօրինաւոր բան է անոնց  
 եկամուտին դաչելը , վասն զի ան  
 եկամուտը աղքատաց ժառան-  
 գութիւն է և զին մեղաց ժողո-  
 վրդեան . բայց ամենէն սոսկալի  
 անկարգութիւն ան է որ մէկը  
 առանց կոչմունքի ժամանակա-  
 ւոր շահու համար միայն ուզե-  
 նայ իր ազգականներէն կամ իր  
 բարեկամներէն մէկը աս ահա-  
 ւոր պաշտօնին հասցընել :

Իմայ կը մնայ ցուցընել թէ  
 որչափ հարկաւոր բան է աղօթ-  
 քը շնորհք առնելու համար , ո-  
 ռուն ինչ ըլլալը քիչ մը առաջ



բացատրեցինք : Մտառած կ'ու-  
 զէ որ իրմէ շնորհք խնդրենք , ը-  
 սէ տղուն , չէ թէ անոր համար  
 որ իբր թէ ինքը մեր պիտոյքը  
 չի ճանչնար , հասկա անոր համար  
 որ կ'ուզէ որ մենք մեր պիտոյքը  
 ճանչնալու համար իրմէ խըն-  
 դիրք մը ընենք . անոր համար կը  
 պահանջէ մեզմէ որ սրտերնիս  
 խոնարհեցնենք , ու ճանչնալով  
 մեր խեղճութիւնն ու մեր տկա-  
 րութիւնը իր գթութիւնը ապաւի-  
 նինք : Մ խնդիրը որ իրեն պիտի  
 ընենք , դիտաւորութեան ու փա-  
 փաքին վրայ հաստատուած է ,  
 վասն զի ինքը մեր խօսքերուն  
 կարօտ չէ : Շատ անգամ մարդ  
 շատ խօսքեր կ'ըսէ առանց աղօ-  
 թելու , շատ անգամ ալ մտքէն  
 աղօթք կ'ընէ առանց մէկ խօսք  
 մը ըսելու : Այս սակայն ան խօս-  
 քերը կրնան օգտակար ալ ըլ-  
 լալ . վասն զի մէջի բառերուն



նշանակութեանը յարմար մը  
 տաճմունքներ ու զգացմունքներ  
 կուգան մտքերնիս թէ որ ուշա-  
 դրութիւն ընելու ըլլանք . և ա-  
 սոր համար ալ Վրիստոս Տէրն  
 մեր մեզի աղօթքի կերպ մը սոր  
 վեցուց : Անչ մեծ միտիթարու-  
 թիւն է , որ Վրիստոս Տէրն  
 սորվեցուցեր է մեզի թէ իր  
 հայրը ինչպէս կ'ուզէ որ իրեն  
 աղօթք ընենք : Ան ինչ զօրու-  
 թիւն պիտի ըլլայ ան աղաչանք-  
 ներուն մէջ , որ ինքն Մատուած  
 դրեր է մեր բերանը : Անչպէս  
 կրնայ ըլլալ որ չտայ մեզի ան  
 բանը , որ ինքը սորվեցուցեր է  
 մեզի որ խնդրենք : Մսկէ վերջը  
 հասկըցուր թէ աս աղօթքը ինչ  
 պէս պարզ է , վսեմ ու համա-  
 ոտ , և թէ ինչ որ կրնանք խըն-  
 դրել Մատուծմէ՝ մէջը կայ :

Տղոց առջի խոստովանութե  
 ժամանակը այնպիսի բան մըն է



որ հոս ճիշդ որոշելը դժուար է .  
 վասն զի ասիկայ իրենց խելքէն  
 ու խղճմտանքէն կախուած է :  
 Արբոր հասկը ցողութիւննին կը  
 բացուի , պէտք է սորվեցընել ի-  
 րենց թէ խոստովանութիւնը  
 ինչ բան է : Անկէց ետքը դիտէ ,  
 ու տղան քիչ մը մեծկակ պակա-  
 սութիւն մը ընելուն պէս , սաս-  
 տիկ ամրացուր զինքը ու զղջումի  
 բեր : Ար տեսնես որ արդէն խոս-  
 տովանանքի բաներ սորված ըլ-  
 լալով , բնականապէս կը ջանայ  
 որ շուտ մը ըրած յանցանքը խոս-  
 տովանա՛յօրը զուրցելով՝ սիր-  
 տը հանգչի : Աս բանս ջանալու  
 է այնպիսի կերպով ընել , որ  
 տղան սրտանց զղջումի գայ և  
 խոստովանութեամբ զգալի միտի  
 թարութիւն մը գտնէ . որպէս  
 զի առջի խոստովանութիւնը ա-  
 նոր մտքին մէջ սաստիկ տպաւո-  
 րութիւն մը ընէ , ու շնորհաց



աղբիւր մը ըլլայ նաև բոլոր մէկաշնոնց :

Մեղհակառակն առջի հաղորդութիւնը ինծի կ'երևնայ թէ պէտք է ան ատենը առնել տալ, երբոր տղուն խելքը կը բացուի, ու աւելի հլու և ազատ կ'երևնայ ամէն տեսակ երևելի պակասութիւններէ : Թէ որ հաւատոյն և աստուածսիրութեան աս երախայրիքը ունենալու ըլլայ, Քրիստոս Տէրն մեր ալ հաղորդութեան շնորհքովը աւելի աղէկ կ'երևցնէ իրեն ինքզինքը, ու կը քաղցրացնէ անոր իր մարմնոյն ճաշակումը : Պէտք է որ տղան շատ ատենէ սպասած ըլլայ հաղորդութեան, այսինքն պզտիկուց իրեն սրտին մէջ սուրբ հաղորդութեան խոր հուրդը առնելու փափաքը պէտք է ձգել, իմացնելով որ եթէ մարդ երկրիս վրայ մէկ գերա-



դոյն բարիք մը կրնայ ունենալ  
 ասիկայ է, որով և երկնային  
 ուրախութեանց արժանի կ'ըլ-  
 լայ: Ալ կարծեմ թէ որչափ  
 կարելի է պէտք է աս հաղոր-  
 դութիւնը հանդիսաւոր կեր-  
 պով ըլլայ. անանկ որ տղուն ե-  
 րեւայ թէ ան օրերը ամենուն  
 աչքը իր վրան է, ամէնքը երա-  
 նի կուտան իրեն և ուրախակից  
 կ'ըլլան, ու այսպիսի մեծ գործո-  
 ղութե մը համար կը սպասեն որ  
 իր հասակէն վեր բարի վարք մը  
 ցուցնէ: Ալ թէպէտ տղոց հա-  
 ղորդութիւն առնել տալու հա-  
 մար երկար ատեն զիրենք պատ-  
 րաստելու է, ինչպէս որ ըսի, բայց  
 ինձի կ'երեւայ թէ պէտք է այն-  
 չափ ալ ուշացնել որ տղոց ան-  
 մեղութիւն վտանգաւոր առիթ-  
 ներու մէջ իյնալով սկսի ապա-  
 կանիլ:



ԳԼՈՒԽ Թ.

Աղջիկ տղոց այլ և այլ պակասոչքիւն,  
նկարուն վրայ դիտողոչքիւննէր :

Վիչ մըն ալ պէտք է խօսինք  
թէ աղջիկ տղաքը իրենց բնու-  
թեանը սովորական եղած շատ  
մը պակասութիւններէն զգու-  
շացընելու համար ինչ խնամք  
պէտք է : Արբոր աղջիկ տղաք  
փափուկ ու վախկոտ կը մեծնան,  
չեն կրնար հաստատուն ու բա-  
րեկարգ կեանք մը ունենալ, հա-  
պա առաջ թեթեամտութեամբ  
վերջն ալ սովորութիւն ընելով  
փուճ բաներէ կը սկսին վախնալ,  
և առանց պատճառի շուտ մը  
աժան աժան արցունք թափել.  
այսպիսի թեթեամտութիւնները  
շտկելու համար՝ արհամարհելու  
վար զարնելու է զանոնք, վասն



զի շատ անգամ փառասիրութե-  
նէ շարժած կ'ընեն իրենք այն-  
պիսի կերպերը :

Այելու է որ շուտով ճգմունիս  
վրանին երեցած չափէ դուրս  
սերտ բարեկամութիւնները, մանր  
մունր նախանձները, չափազանց  
կոտորտութիւնները, շողոքորթութի-  
ւնները, բանի մէջ ըլլալները,  
վասն զի այսպիսի բաներով կ'աւ-  
րուին երես կ'ելլեն, և մտքեր-  
նին կը դնեն թէ ծանրաբարոյ  
ու զգուշաւոր ըլլալը կոպտու-  
թիւն ու անհամ բան է : Տա-  
նալու է նաև այնպէս ընել, որ  
ջանք ընեն կարճ ու ճիշտ խօսե-  
լու : Անելացի մարդը անօգուտ  
բառերը դուրս կը ձգէ ու քիչ  
խօսքով շատ բան կը հասկըցը-  
նէ. ընդ հակառակն կանանց մեծ  
մասը շատ խօսքով՝ քիչ բան կը  
հասկըցընեն : Արթերն թէ խօ-  
սելու դիւրութիւնը ու երևա-



Կայութեան տաքութիւնը խե-  
 լացութիւն է . ուստի իրենց մը-  
 տածմունքներուն մէջ ամենեւին  
 ընտրութիւն չեն ընէր , և ոչ ալ  
 կարգ մը կը դնեն անոնց մէջ ու-  
 զած բաներնին լաւ հասկըցընե-  
 լու համար . գրեթէ իրենց ամէն  
 ըսածին վրայ մեծ համարումն  
 ունին , և աս համարումը հար-  
 կաւ շատ խօսիլ կուտայ իրենց .  
 և սակայն մէկ կնիկ մարդէ մը  
 չի կրնար աղէկ բան մը յուսա-  
 ցուիլ , ինչուան որ չվարժի իր  
 մտածմանցը մէջ կարգ մը դնե-  
 լու , զանոնք քննելու ու կարճ  
 կերպով մը բացատրելով շուտ  
 մը լռելու : Անանց շատախօս  
 ըլլալուն մէկ պատճառն ալ աս  
 է որ բնութեամբ հնարագէտ  
 ըլլալով իրենց ուզած բանին  
 հասնելու համար պտոյտ խօսքեր  
 կը բանեցընեն : Վարակամտու-  
 թեան վրայ շատ համարումն ու-



նին . ինչպէս չունենան որ իրենց  
 համար անկէց լաւ խոհեմութի  
 չկայ , և սովորաբար ամէն բանէ  
 առաջ ուրիշի օրինակաւր ան  
 սորված են : Այնպիսի ճկուն  
 բնութիւն մը ունին որ ամէն  
 տեսակ խաղ խաղալու վարպետ  
 են , արցունք թափելը իրենց  
 համար բան մը չէ . կիրքերնին  
 սաստիկ է , և գիտութիւննին  
 չափաւոր . ասկից կը հետեւի որ  
 կամքերնին կատարելու համար  
 ամէն ջանք կ'ընեն . և ան կեր-  
 պերն որ կարգաւորեալ մարդու  
 մը անպատշաճ կ'երևնան՝ իրենց  
 աչքին աղէկ կ'երևնան . ուզած  
 բաներնուն վրայ երկայն բարակ  
 քննութիւններ չեն ըներ թէ  
 արդեօք ուզելու բան է թէ չէ ,  
 բայց անոնք ձեռք բերելու շատ  
 վարպետ են :

Ասոնցմէ զատ նաև վախկոտ  
 են ու սուտ ամօթ խածութեամբ



լեցուն , որ ան ալ կեղծաւորու-  
թեան պատճառ է : Այսպիսի  
մեծ պակասութեան մը դիմացը  
առնելու համար պէտք է նայիլ  
որ ոչ երբէք խորամանկութեան  
առիթ տրուի իրենց , հապա  
վարժեցրնելու է զիրենք որ օրի-  
նաւոր բաներու մէջ պարզմտու-  
թեամբ զուրցեն իրենց յօժա-  
րութիւնները : Չանճրացածնուն  
պէս՝ թող համարձակ ըսեն որ  
ճանճրացեր են , ու պէտք չէ  
բռնադատել զիրենք որ սրտեր-  
նին չքաշած անձերն ու գիրքե-  
րը սիրեն :

Ըստ անգամ մայրերը դայե-  
կին խօսքովը շարժած , իրենց  
աղջիկներուն ամենեւին ազա-  
տութիւն մը չեն տար , հապա  
կ'ուզեն որ ամէն բանի մէջ ա-  
նոր հնազանդին , անոնք ալ կեղ-  
ծաւորութեամբ իրենց ախոր-  
ժակին դէմ անոր ըսածին մտիկ



կ'ընեն : Վարձեալ պէտք չէ ա-  
մենեւին կասկած տալ աղջկանց  
թէ ծնողք կ'ուզեն զիրենք կու-  
սան կամ մայրապետ ընել . վասն  
զի աս մտածմունքով ծնողացը  
վրայէն վատահու թիւննին կ'եր-  
թայ , մտքերնին կը դնեն թէ  
ծնողքը զիրենք չեն սիրեր , սըր-  
տերնին կը խռովի , և տարինե-  
րով նեղու թիւն կը քաշեն : Թէ  
որ դժբաղդու թիւ մէյմը վար-  
ժին իրենց զգացմունքները ծած-  
կելու , զիրենք աս պակասու թե-  
նէն ազատելու հնարքն է ճշը-  
մարիտ խոհեմու թե սկզբունք-  
ները տպաւորել անոնց մտքին  
մէջ . ինչպէս կը տեսնենք որ ա-  
ռասպելներէ ու շինծու պատմու-  
թիւններէ զիրենք զգուեցրնելու  
հնարքը՝ օգտակար ու զուարճա-  
լի պատմու թիւններն անոնց ա-  
խորժելի ընելն է : Թէ որ ի-  
րենց օգտակար հետաքրքրու-



Թիւն մը չտրվեցրնես, անկարգ  
 հետաքրքրութեան ետեւէ կ'ըլ-  
 լան. նոյնպէս թէ որ իրենց միտ-  
 քը ճշմարիտ խոհեմութեան չը-  
 վարժեցրնես, սուտին ետեւէն  
 կ'ըլլան, որ է խորամանկու-  
 Թիւն:

( ) օրինակներով հասկըցուր ի-  
 րենց թէ ինչպէս մարդ առանց  
 խաբէութեան՝ կրնայ խոհեմ,  
 զգուշաւոր ըլլալ, ու օրինաւոր  
 միջոցներով ուղածին հասնիլ:  
 Իսկ իրենց թէ ճշմարիտ խոհե-  
 մութիւնն է քիչ խօսիլ, և ու-  
 թիշի վրայ աւելի վստահիլ քան  
 թէ իր վրայ. չէ թէ խօսքին մէջ  
 սուտ խառնել, ու կռուարար ըլ-  
 լալ: Արուց ուղղութիւնն և  
 ուրիշներուն առջևը խոհեմի ա-  
 նուն հանելը պատճառ կ'ըլլայ  
 որ ամէնքը մարդուս վրայ վրս-  
 տահութիւն ու համարմունք  
 կ'ունենան. աստե՛նով ալ ուրիշ



չատ օգուտներ, նաև ժամանա-  
կաւոր բարիք կ'ելլեն անկէց .  
իսկ ծուռումուռ ճամբաները  
բողորովին անոր ներհակ : Այս  
խոհեմ զգուշաւորութիւնը որ-  
չափ անուանի կ'ընէ մարդս, ու  
ի՞նչ մեծամեծ բաներու կը հաս-  
ցընէ :

Բայց աս ալ աւելցուր թէ  
խորամանկութիւն վախճանը որ-  
չափ ցած ու անարգ բան է . վասն  
զի այնպիսի փուճ բան է որ  
ինքն ալ ըսելու կ'ամրջնայ, և  
կամ փաստակար կիրք մըն է :  
Արբոր մէկուն ուզածը օրինա-  
ւոր բան է, յայտնապէս կը զուր-  
ցէ, ու իր չափը պահելով և ու-  
ղիղ ճամբով ձեռք բերելու զա-  
նիկայ կը ջանայ : Պարզսիրտ  
ըլլալուն պէս անուշ ու վայելուչ  
բան կրնայ ըլլալ . միշտ հան-  
գիստ է այնպիսին, միշտ իր ան-  
ձին վրայ գոհ, ոչ վախճալու



քան ունի և ոչ քովէն հնարե-  
լու . ընդ հակառակն կեղծաւորը  
միշտ խռովութե մէջ է , անդա-  
դար խղճմտանքը կը զարնէ , վը-  
տանգները չորս դին առած են , ու  
այնպիսի ողբալի վիճակի մը մէջ  
է որ մէկ խորամանկութիւնը ծած-  
կելու համար՝ հարկադրուած է  
ուրիշ հարիւր հատ հնարելու :

Վստչալի ամօթալի անհան-  
գատութիւններով ալ խորամանկ  
անձինք ըրածնին չեն կրնար բո-  
լորովին ծածկել , և օր մը չէ նէ  
օր մը ինչ ըլլալնին դուրս կ'ել-  
լէ : Թէ որ ուրիշները քանի մը  
բաներու մէջ իրենցմէ խաբուած  
ալ ըլլան , ընդհանուր մեծ բա-  
ներուն մէջ չեն խաբուիր , միշտ  
մէկ կերպով մը ինչ ըլլալնին կը  
գուշակեն . շատ անգամ ալ որոնք  
որ կ'ուզեն խաբել՝ իրենք անոնց-  
մէ կը խաբուին . վասն զի ուրիշ  
ները խաբուիլ ձեացընելով՝ թէ



պէտեւ արհամարհեն զիրենք ,  
 անոնք կը կարծեն թէ զիրենք  
 կը պատուեն : Մայց գէթ կաս-  
 կածներէ ազատ չեն ըլլար . և  
 խելացի անձի մը անձնասիրու-  
 թեանը որչափ դառն է , որ միշտ  
 ուրիշներուն կասկածելի տեսնէ  
 ինքզինքը : Մը բաներս նայէ որ  
 քիչ քիչ ըսես , առիթներուն ,  
 պէտք եղածին և դիմացինիդ  
 կարողութեանը նայելով :

Մը ալ հասկըցուր թէ խորա-  
 մանկութիւնը միշտ ցած սրտէ  
 ու պզտիկ խելքէ առաջ կուգայ :  
 Խորամանկ անոր համար կ'ըլլայ  
 որ ինքզինքը ծածկէ , որովհե-  
 տեւ ինքն ալ գիտէ որ այնպէս չէ  
 ինչպէս որ պէտք էր ըլլար . և  
 կամ հրաման եղած բաները  
 ձեռք ձգելու համար օրինաւոր  
 միջոցները կը թողու՝ կ'երթայ  
 ապօրինաւոր հնարքներու ձեռք  
 կը զարնէ : Իմացուր տղոց իրենց



տեսած խորամանկութիւններուն  
անխելքութիւնը, և թէ զանոնք  
ընտղները սրչափ արհամարհելի  
կ'ըլլան ուրիշներուն. վերջապէս  
այնպէս ըրէ որ յանկարծ բանի  
մը մէջ խաբէութիւննին բռնե-  
լուղ պէս՝ իրենք իրենցմէ ամրջ  
նան : Նոտեն ատեն երբոր կը  
տեսնես որ սիրած բաներնին խո-  
րամանկութեամբ կ'ուզեն ձեռք  
ձգել, մի տար իրենց ան բանը, և  
ըսէ որ եթէ պարզմտութեամբ  
ուզելու ըլլայիք՝ սիրով կուտայի.  
մի վախնար նաև անոնց մանր  
մունր տկարութիւններուն կա-  
րեկից ըլլալու, որպէս զի անով  
սիրտ առնեն ու քեզի ալ յայտ-  
նեն : Չափազանց ամօթը այն-  
պիսի մնասակար ջարիք մըն է՝ որ  
շուտով պէտք է դիմացը առ-  
նել, ապա թէ ոչ բոլոր մէկալ  
պակասութիւններն ալ անբժըշ-  
կելի կ'ընէ :



Նայէ որ աղջիկ տղաքը զգուշացրնես ան չարամիտ իմաստակութիւններէն որոնցմով կ'ուզէն այնպէս ընել որ դիմացինը խաբուի, ու իրենք զանիկայ խաբած չսեպուին. վասն զի ասոր մէջ աւելի ցածութիւն ու աւելի խաբէութիւն կայ քան թէ հասարակ խորամանկութիւններուն մէջ: Աւրիշները խորամանկութիւն ալ ընելու ըլլաննէ՝ գոնէ շտկէ շիտակ կ'ընեն, իսկ ասոնք անոր վրայ նոր խաբդախութիւն ալ կ'աւելցրնեն: Բսէ տղուն թէ Վճ ինքն ճշմարտութիւն է. խօսակցութեան մէջ ճշմարտութիւնը բանի տեղ տեղնելը՝ զՎճ արհամարհել է. ուստի ճշմարտութիւնը պատուելու համար մեր խօսակցութիւնը պիտի ըլլայ համառօտ ու ճիշդ, և քիչ ալ պիտի խօսինք որ ճրջմարիտ բան ըլլայ խօսածնիս:



Արեմն սաստիկ զգուշացիր  
 որ չամանիս անոնց որ տղոց վրայ  
 խորամանկութեաննչան մը տես-  
 նեղուեն պէս՝ կը սկսին զիրենք  
 գովել: Այնպիսի խարդախ կեր-  
 պերը գովելու տեղ լաւ մը յան-  
 դիմանէ զիրենք, և այնպէս ըրէ  
 որ փորձով տեսնեն թէ իրենց  
 խորամանկութիւնները չեն յա-  
 ջողիր, ու անով զգուին այնպիսի  
 կերպերէն: Այսպիսի պակա-  
 սութիւններու համար տղոց գո-  
 վեստ տալը՝ ըսել է թէ խորա-  
 մանկութիւնը ճարտարութի է:

ԳԼՈՒԽ Ժ.

Գեղեցկոչքեան ոչ գարդարանքի  
 ընդունայնոչքիչեր:

Բայց աղջիկ տղոց ունայնա-  
 սիրութեանը պէս վտանգաւոր  
 բան չկայ: Այս պակասութեան  
 աղբիւրն է ուրիշի հաճոյ ըլլա-



լու փափաքը : Արիկ մարդիկը  
 իշխանութեան ու փառքի հաս-  
 ցնող ճամբաները որովհետև  
 իրենց համար գոց են , կանայք  
 կը ջանան որ անոնց պակասու-  
 թիւնը խելքի ու մարմնոյ հա-  
 ճոյքը կատարելով լեցնեն . աս-  
 կէց է որ իրենց խօսակցութիւ-  
 նը անուշ ու մարդահաճոյ կ'ըլ-  
 լայ . ասկէց է որ այնչափ կը փա-  
 փաքին գեղեցկութեան և ար-  
 տաքին տեսքի , զարդարուելու  
 ալ այնչափ ջանք ունին . մէկ  
 գլխու լաչակ մը , կտոր մը ժա-  
 պաւէնը , մազերնուն մէկ կտորին  
 քիչ մը վեր կամ քիչ մը վար  
 ըլլալը , ու աս կամ ան գոյնը ըն-  
 տրելը , իրենց համար մեծամեծ  
 գործողութիւններ են :

Այս անխելքութիւնները ու-  
 ըիշ ազգերէն աւելի մեր գաղ-  
 դիացի ազգին մէջ կը գտնուի .  
 մեր ազգին փոփոխամիտ բնու-



Թիւնը անդադար նորելուկ սո-  
 վորութիւններու պատճառ կ'ըլ-  
 լայ . ուստի մերինները զարդա-  
 սիրութեան սէրն ալ կ'աւելցը-  
 նեն , որ այսպիսի զարդասէր աղջ-  
 կանց վրայ մեծ ազդեցութիւն  
 ունի : Նս երկու խենթութիւն-  
 ները մէկ տեղ գալով՝ վի-  
 ճակները տակնուվրայ կ'ընեն և  
 մարդկանց ամէն տեսակ բարքը  
 կ'աւրեն կ'ապականեն . վասն զի  
 երբոր հագուստներու և կարա-  
 սեաց համար կանոն մը չկայ , վի-  
 ճակներու համար ալ ամենեւին  
 սահման մը չըլլար . որովհետեւ  
 տերութիւնը չիկրնար ամէն մար-  
 դու սեղանին վրայ կերածին  
 խառնուիլ . ամէն մարդ իր ստը-  
 կին համեմատ , մանաւանդ թէ  
 առանց ստրկի ալ իր փառասի-  
 րութեանը և ընդունայնամտու-  
 թեանը համեմատ ուզածը կ'ըն-  
 արէ :



Մի պերճասիրու թք տներ կը  
 կործանին, տներու կործանմանէն  
 ալ բարուց ապականու թիւնը կը  
 հետևի: Ասան զի մէկ կողմանէ  
 ցածագգի մարդիկ պերճասիրու  
 թեամբ կը նային որ ժամ մը ա-  
 ուաջ բաղդի մը հանդիպին, որ  
 հոգւոյն սրբոյ ըսածին նայելով  
 աս բանս չի կրնար առանց մեղաց  
 ըլլալ. մէկալ կողմանէ ալ ազ-  
 նուական մարդիկ ստակ չբաւե-  
 ցընելով՝ կը սկսին ծախքերնուն  
 դիմանալու համար սոսկալի վա-  
 սու թիւններ ու իրենց վիճակին  
 անվայել բաներ ընել. ասով կա-  
 մաց կամաց պատիւը կը մարի,  
 հաւատարմութիւնը, խոհեմու-  
 թիւնն ու բարեւրտութիւնը կը  
 կորսուի նաև մերձաւոր ազգա-  
 կաններու մէջէն:

Մի ամէն չարեաց պատճառ  
 ան ունայնասէր կնիկ մարդկանց  
 համարձակութիւնն է որ նորե-



լուկ քաներու ետևէ ըլլալով,  
 մէկն որ ուզէ հին սովորութեանց  
 պարզութիւնն ու վսեմութիւնը  
 պահել՝ կը սկսին դրսեցի մարդ  
 է ըսելով՝ վրան ծիծաղիլ:

Աստի ջանա աղջիկ տղոց  
 հասկըցընելու թէ մարդուս իր  
 բարի վարուցը ու ճշմարիտ կա-  
 տարելութեանցը համար ընդու-  
 նաժ պատիւը՝ որչափ աւելի յար-  
 գի ու պատուական է, քան թէ  
 մազերուն ու հագուստին հա-  
 մար ընդունաժը: Աեղեցկու-  
 թեամբ, ըսէ, աւելի ունեցողը  
 կը խաբուի քան թէ տեսնողնե-  
 ըր. գեղեցկութիւն ունեցողը  
 խռովեալ ու գինովի պէս կ'ըլ-  
 լայ, և ինքը իր տեսքին այնպէս  
 կը խենթեանայ որ տարփաժունե-  
 ըր իրենց սիրելիներուն վրայ  
 այնչափ չեն զմայլիր: Աեղեցիկ  
 ու տգեղ կնկան մէջի տարբե-  
 րութիւնը քանի մը տարի է



միայն : Աեղեցկու թիւնը միշտ  
 մնասակար է , շատ շատ՝ պատ-  
 ճառ կ'ըլլայ աղջիկ տղու մը լաւ  
 տեղ գտնելուն . բայց աս օգուտն  
 ալ ինչպէս կրնայ ընել՝ թէ որ  
 հետը արժանաւորութիւն ու ա-  
 ռաքինութիւն չունենայ : Աենթ  
 երիտասարդին մէկը թերեւս առ-  
 նու այնպիսին , ու հետը գտնէ  
 նաև իր թշուառութիւնը . ու  
 ըիշ բան է թէ որ խելքովն ու  
 համեստութեամբը բարեկարգ  
 ու հաստատուն արաքինութիւն  
 փնտռողի մը երթայ : Ան ան-  
 ձինքն որ իրենց պարծանքը ի-  
 րենց տեսքին վրայ դրած են՝  
 շուտով ծաղրելի կ'ըլլան . ա-  
 ռանց իմանալու այնպիսի հասա-  
 կի մը կը հասնին՝ ուր գեղեց-  
 կութիւննին կ'աւրուի կ'երթայ ,  
 և իրենք դեռ իրենց վրայ ըզ-  
 մայլած կ'ըլլան , թէպէտ աշ-  
 խարհք երեսնին ջնայիր ու կը զը-



զուի ալ: Աերջապէս խելքը  
միտքը տեսքի տալը այնպիսի  
անամուծի մըն է, ինչպէս է ան  
վայրենի ազգերունը որ մարմնոյ  
ոյժը ամէն բանէ վեր կըդնեն:

Տեսքէն անցնինք զարդարան-  
քի: Ճշմարիտ գեղեցկուծիւնը  
ամենեւին ընդունայն ու շինծու  
զարդարանքի վրայ չէ: Արաւ է  
որ մարդս պիտի ջանայ որ վրան  
գլուխը որչափ կարելի է մաքուր,  
համեմատ ու վայելուչ ըլլայ.  
բայց աս հագուստնիս որչափ ալ  
վայելուչ ու զարմանալի ըլլան,  
չեն կրնար այնպիսի զարդեր ըլ-  
լալ որ ճշմարիտ գեղեցկուծիւն  
մը տան մեզի:

Աուզէի որ աղջկունք տես-  
նէին մէյմը հին ատենի յոյն ու  
հռովմայեցի կանանց հագուս-  
տին ազնիւ պարզուծիւնը որ ար-  
ձաններու և քաշուածքներու  
վրայ կ'երևնան. կը տեսնէին որ



անոնց մազերը անհողութեամբ  
 գլխորնուն ետեր կապուած, հա-  
 գուստնին ալ պարզ, լայն ու  
 ծալք ծալք ձգուած՝ որչափ ա-  
 խորժելի ու վայելուչ են: Այ-  
 բաներու վրայ պատկերահան-  
 ներուն ու այնպիսի հին սովորու-  
 թիւններէ համ առնողներուն  
 կարծիքն ալ լսեն՝ գէշ չըլլար:  
 Սէ որ քիչ մըն ալ մտքեր-  
 նէն նորելուկ բաներու սաստիկ  
 սէրը ելլէ, կը տեսնես թէ ինչ  
 պէս շուտ մը կ'արհամարհեն ան-  
 իրենց ոլորած մազերն որ այն-  
 չափ բնականին ալ գէմ է, ու  
 չափէ գուրս ձևերով հագուստ-  
 ները: Այս ալ գիտեմ, պէտք չէ  
 որ հիմակուան կանայք հին ա-  
 տենի հագուստները հագնին,  
 վասն զի աս բանս ուզելն ալ այ-  
 լանդակ բան մը կ'ըլլար. բայց  
 կրնան առանց մասնաւորութե-  
 հիներուն պարզութեանը հե-



տեիլ, որ շատ շնորհքով է և  
միանգամայն քրիստոնէական տը  
վարուց ալ աւելի կը վայլէ : Ա-  
սանկով իրենք զիրենք արտաքին  
բաներու մէջ հիմակուան սուլո-  
րութեան յարմարցընելով ալ՝  
գէթ առ կը գիտնան թէ վրան  
ինչ համարումն ունենալու է .  
ան ատեն նորելուկ բաներու հե-  
տեին ալ նէ՝ չուզելով կը հե-  
տեին, և միայն ան նորելուկ սո-  
վորութիւնները կը գործածեն  
որ չբանեցընել չըլլար : Ատէպ  
մտքերնին ձգէ թէ նորելուկ բա-  
ներուն անդադար փոփոխութիւնը  
պատճառ՝ ընդունայնութիւն ու  
թեթեամտութիւն է : Շատ  
անխելք բան է, օրինակի հա-  
մար, վրայէ վրայ լաթեր կապե-  
լով գլուխնին խոշորցընել . ճիշ-  
մարիտ զարդարանքը բնութեան  
կը հետեի, չէ թէ նեղութիւն  
կուտայ անոր :



Քայց աա ալ կայ որ նորելուկ  
 քաները իրենք իրենցմէ կը փճա  
 նան . միշտ կատարելութեան ե  
 տեէ են , և ոչ երբէք կը հաս  
 նին . կամ գէթ հասնին ալ նէ՛  
 հոն չեն կենար : Սէ որ դիւրու  
 թեան ու վայելչութեան կա  
 տարելութիւնը գտնելէն վեր  
 ջը՝ ալ չփոխուէին , ո՛վ ինչ կ'ը  
 սէր . քայց եկուր տես որ անդա  
 դար աս փոխելն ու փոփոխելը՝  
 ճշմարիտ քաղաքավարութեան  
 ու ընտիր ախորժակի ետեէ ըւ  
 լալու տեղ՝ անհաստատութեան  
 ու անկարգութեան ետեէ ըւ  
 լալ է . անոր համար ալ նորելուկ  
 սովորութիւններուն պատճառ  
 շատ անգամ մէկուն մէկալին  
 խելքին ասանկ կամ անանկ փը  
 չելն է : Անանց ձեռքն է վճիռ  
 տալը , ու անոնց միայն կը հաւ  
 տացուի . անոր համար ամենէն  
 թեթեւամիտներն ու անկիրթ



ները զուրիշներն ալ իրենց կը  
 հետևեցնեն: Ալ երբէք աս կամ  
 ան բանը կանոնով մը կ'ընտրեն  
 կամ կը թողուն. բաւական է որ  
 մէկ նորելուկ բան մը հնցած է,  
 թէպէտև աղէկ գիւտ մը ըլլայ.  
 և անդին ուրիշ բան նոր է, թէ  
 պէտև ծիծաղական ըլլայ՝ առջի  
 նը կը ձգուի, նորելուկը անոր  
 տեղ կը բռնէ ու զարմանալի  
 կ'ըլլայ:

Այսինքն դնելէդ վերջը, ցը ցուր  
 իրենց քրիստոնէական պարկեշ-  
 տու թեան կանոնները: Անք  
 կը սորվինք, ըսէ, մեր սուրբ խոր  
 հուրդներէն թէ մարդս մեղաց  
 ապականու թեան մէջ կը ծնանի.  
 իր մարմինը միշտ հիւանդ ըլլա-  
 լով, անդադար զհոգին փորձու-  
 թեանց մէջ կրնայ ձգել: Վրիս-  
 տոս հերն մեր մեզի կը սորվեցը-  
 նէ թէ բոլոր մեր առաքինութիւ  
 ան պիտի ըլլայ որ Աստուծոյ եր-



կիւղը մտքերնէս ճանենք, ու  
 մեր վրայ ամենեին վստահու  
 թիւն չունենանք: Արնաս ըսել  
 աղջիկ տղու մը, կ'ուզէս որ մէկ  
 խենթ փառասիրութեան մը հա  
 մար քու հոգիդ ալ ընկերոջդ  
 հոգին ալ վտանգի մէջ ձգես.  
 ուրեմն վախցիր վիզդ բաց ձգե  
 լէն, և անոր նման անհամեստ  
 կերպերէն. այսպիսի բաները ա  
 ոանց չար մտքի ալ ըլլան՝ պէտք  
 չէ ընել. վասն զի գէթ փառա  
 սիրութիւն է և ուրիշներուն  
 հաճոյ ըլլալու անկարգ փափաք  
 մը: Աւ աս փառասիրութեամբ  
 ինչպէս կրնայ արդարանալ թէ  
 Վստուծոյ և թէ մարդկանց առ  
 ջեր այնպիսի համարձակ դայ  
 թագդական և ամենուն չար օրի  
 նակ տուող վարքը: Վստ ուրիշ  
 ներուն հաճոյ ըլլալու կոյր փա  
 փաքը կը վայլէ քրիստոնէի մը,  
 որ կռապաշտութիւն պիտի հա



մարի ան ամէն բաներն որ կը  
 հեռացրնեն զմեզ 'ի սիրոյ Ա.  
 ըրարչին և յարհամարհութենէ  
 արարածոց : Մայց աս հաճոյ ըւ  
 լալու փափաքին վախճանը ինչ  
 է . միթէ մարդկանց կիրքերը  
 գրգռել չէ : Աւ միթէ գրգռե  
 լէն վերջը հանդարտեցրնելը մեր  
 ձեռքն է . միթէ անոր հետեանք  
 ներուն պատճառ գրգռողը չը  
 լար . և միթէ ան կիրքերուն դի  
 մացը առնելը դիւրին է : Մա  
 ըակ ու մահառիթ թոյն մըն է  
 որ դուն կը պատրաստես ու ամէն  
 վրադ նայողին վրայ կը թափես ,  
 ու ինքզինքդ անմեղ կը կարծես :  
 Մտնք ըսէ ու օրինակ բեր իրեն  
 ան անձինքն որ իրենց համես  
 տութեանը համար գովելի է  
 ղեր են . և անոնք որ իրենց ան  
 համեստութեանը համար ա  
 նուննին աւրեր են :

Մայց ամէն բանէն աւելի աղ



Ջիկ տղոց մի թողուր որ իրենց  
 վիճակէն վեր զարդարանքներ ը-  
 նեն . խստութեամբ սանձէ ա-  
 նոնց ամէն փուճումուճ երեւա-  
 կայութիւնները : Յըցուր իրենց  
 թէ այնպիսի բաներով ինչ վը-  
 տանագներու մէջ կ'իյնան . և որ-  
 չափ արհամարհելի կ'ըլլայ մար-  
 դրս խելք ունեցողներուն առ-  
 ջւը՝ երբոր իր չափէն դուրս  
 կ'ելլէ :

Մ Բ բաներէս վերջը կը մնայ  
 աղջիկ տղաքը խելք ծախելու  
 սովորութենէն ազատել : Թէ որ  
 արթուն չկենաս , քիչ մը աշ-  
 խութութիւն որ ունենան , կը  
 սկսին ամէն բանի մէջ մտնել ,  
 ամէն բանի վրայ կ'ուզեն խօսիլ ,  
 խելքերնին չհասած բաներուն  
 վրայ դատաստան ընել , ու ամե-  
 նեին բանի մը հաւնիլը խելա-  
 ցիութիւն սեպել : Աղջիկ տղան  
 պէտք է որ միայն իրաւցընէ հար-



կաւոր բաներուն վրայ խօսի, ան  
 ալ ակնածութեամբ ու տարա-  
 կուսելով. նոյնպէս ալ պիտի ջիս-  
 սի ան բաներուն վրայ որ սովո-  
 րաբար աղջիկ տղոց կարողու-  
 թենէն վեր են՝ թէպէտ և ինքը  
 անոնք սորված ալ ըլլայ: Ար-  
 նենք թէ շատ յիշողութիւն,  
 աշխուժութիւն, զուարճախօ-  
 սութիւն, շնորհքով խօսելու  
 յարմարութիւն ունենայ. ասոնք  
 անանկ հասարակ բաներ են որ  
 շատ պակասամիտ ու անարգ կնիկ  
 մարդիկ ալ կրնան ունենալ:  
 Իայց թէ որ վարքը կանոնաւոր  
 ու միակերպ է, խելքը հաստա-  
 տուն ու կարգաւորեալ է, տեղը  
 գայ նէ գիտէ լռել կամ բանը  
 առաջ տանիլ, ան ատենը բոլոր  
 կանանց մէջ մէկ հատիկ կ'ըլլայ:  
 Իսկ փափկութիւն ծախելով ա-  
 մէն բանի հաւնելուն պակասու-  
 թիւնը շտկելու համար, պէտք



է զինքը խրատել ու հասկըցը-  
նել թէ լաւ բան ճանչնալը կամ  
ընտիր ախորժակը ան է որ մարդ  
գիտնայ ամէն բանէ անոր ունե-  
ցած օգուտը քաղել :

Միայն խելքն ու առաքինու-  
թիւնն է որ մեծ բանի տեղ  
գրուելու են . և ահա աս եր-  
կուքն ալ կը ցուցընեն թէ բանի  
հաւանիլն ու տհաճութիւնը ոչ  
միայն գովելի փափկութիւն չէ ,  
հապա նաև հիւանդոտ խելքի  
տկարութիւն մըն է :

Արովհետև մարդս հարկա-  
գրուած է կոպիտ մարդկանց  
հետ ալ վարուելու , ու այնպիսի  
գործքերու մէջ մտնելու որ  
զուարճութիւն մը չունին , խել-  
քը ( որ ամէն փափկութիւննե-  
րէ վեր է ) հոս պիտի երևնայ որ  
մարդս ան կոպիտ մարդկանց հետ  
կոպիտ ըլլալ գիտնայ : Մէկ բա-  
րեկիրթ մարդ մը որ հարկաւոր



եղած ատենը գիտէ քաղաքա-  
վարութենէն վեր ելլել ու աւել-  
լի հաստատուն բաներու ետեւէ  
ըլլալ, անհամեմատ կերպով վեր  
է քան զանոնք որ փափկութիւն  
կը ծախեն, ու իրենց բանի հաւ-  
նող բնաւորութենէն կը յաղ-  
թուին :

### ԳԼՈՒԽ ԺԱ.

Կրքոչքիչև կսևսևց իրևևց ունևցած  
պարտքերուչև վրայ :

Վանք հիսնա ան մանր բանե-  
րուն, որոնց մէջ պէտք է որ կը-  
նիկ մարդ մը կիրթ ըլլայ : Ա-  
րոնք են իր ընելու բաները : Իր  
պարտքն է ուշադիր ըլլալ իր  
զաւկըններուն դաստիարակու-  
թեանը, մանչ տղոց՝ ինչուան ա-  
նոնց մէկ մասնաւոր տարիքը,  
աղջիկ տղոց՝ ինչուան որ կար-  
գուին կամ կրօնաւորին. ուշ



դնել ծառայից վարքին, բարքին,  
 ծառայութիւնը. տան մանր ծախ-  
 քերուն, ամէն բանի խնայու-  
 թեամբ ու միանգամայն վայել-  
 չութիւն ըլլալուն, երբեմն նաև  
 կալուածները վարձով տալու ու  
 եկամուտներն առնելու:

Վանանց գիտութիւնը, ինչ-  
 պէս նաև էրիկ մարդկանցը, այն-  
 չափ պիտի ըլլայ, որչափ որ ի-  
 րենց գործողութիւններուն հար-  
 կաւոր է. իրենց ուսմունքներն  
 իրարմէ այն տարբերութիւնը  
 պիտի ունենան՝ ինչ տարբերու-  
 թիւններ որ ունին իրենց պաշ-  
 տօնները: Աստի կանայք պիտի  
 նային որ վերի ըսած բաներուս  
 մէջ աղէկ կրթուած ըլլան:  
 Տայց հետաքրքիր կին մը կրնայ  
 ըսել թէ այնչափով իմ հետա-  
 քրքրութիւնս չի լեցուիր, ինք-  
 զինքը կը խաբէ, վասն զի չիճանչ-  
 նար իմ իրեն առաջարկած բանե-



րուս հարկաւորութիւնն ու մեծութիւնը :

Արչափ ընտրողութիւն պէտք է իրեն որ ամէն մէկ զաւակացը բնաւորութիւնն ու հոգին հասկընայ, իրենց հետ այնպէս վարուի որ կարենայ դիւրաւ իմանալ իրենց ախորժակը, իրենց յօժարութիւնը, իրենց տաղանդը, նոր սկսած ախտերուն առաջը առնէ, ուղիղ սկզբունքներ սորվեցընէ ու պակասութիւննին շտկէ : Արչափ խոհեմութիւն պէտք է իրեն որ անոնց վրայ ունեցած իշխանութիւնը պահէ՝ առանց կորսընցընելու սէրն ու վստահութիւնը : Իայց մի՛թէ իրեն պարտքը չէ որ մարդ մը ինչուան որ աղէկ չճանչնայ՝ իր տղոցը քովը չդնէ : Տարակոյս չկայ : Մէկը տանտիկինը լլալու համար պէտք է ուրեմն որ կրօնքի բաներուն լաւ տե-



դեակ ըլլայ, և հասուն, հաս-  
տասուն ու կառավարութեան  
յարմար ու փորձ խելք ունե-  
նայ :

Արնայ մէկը տարակուսիլ թէ  
արդեօք կանայք բոլոր աս բա-  
ներս հոգալու պարտք ունին  
նաև իրենց երկանը կենդանու-  
թեան ատեն՝ որ բնականապէս  
դրսի բաներուն աւելի զբաղած  
կ'ըլլայ. ևս առաւել այրի մնա-  
ցած ատեննին աս հոգերը իրենց  
վրայ պիտի ըլլան : Անոր համար  
Պօղոս առաքեալն ալ կանանց  
փրկութիւնը իրենց որդւոցը դաս-  
տիարակութեանը հետ այնչափ  
կապուած կը ճանչնայ, որ կը  
հաստատէ թէ անով պիտի ըլ-  
լայ իրենց փրկութիւնը :

Հոս չեմ ուզեր երկայն բա-  
րակ բացատրել թէ կանայք ի-  
րենց տղաքը դաստիարակելու  
համար ինչ բաներ պիտի գիտ-



նան . վասն զի աս գրքուկիս մէջ  
բաւական կը տեսնեն գիտնալու  
բաներնին :

Եւ կառավարութեան վրայ  
տնտեսութիւնն ալ աւելցուր :  
Կանանց մեծ մասը անփոյթ  
կ'ըլլան աս բանիս , իբր թէ ցած  
պաշտօն մը ըլլար ու գեղացւոց  
կամ վարձուորներու միայն յար-  
մար , կամ շատ շատ՝ պանդոկա-  
պետի և կամ պաշտօնատէր կրն-  
կան մը . մանաւանդ ան կանայքն  
որ փափկութեան , առատութե-  
ու դատարկութե մէջ մեծ ցած  
են՝ ամենեւին անփոյթ կ'ըլլան  
ու կ'արհամարհեն ալ աս մանր  
բաները . և ասոնց համար ամե-  
նեւին տարբերութիւն մը չկայ  
գեղացւոց կենացն ու Վանա-  
տայի վայրենիներուն կենացը  
մէջ : Եւ որ իրենց ելլես ցորեն  
վաճառելու , երկիրներու մշակու-  
թեան , տեսակ տեսակ բերքե-



րու , եկամուտները և ուրիշ տա-  
 նուտերական տուրքերը ժողովե-  
 լու , տուն տեղ վարձելը աւելի  
 շաւ կերպով ընելու , կամ վար-  
 ձերը ժողովելու մարդիկ գնելու  
 վրայ խօսիս , կը կարծեն թէ  
 կ'ուզես այնպիսի զբաղմանց ե-  
 տելէ ընել զիրենք , որ իրենց ա-  
 մենսին չի վայլեր :

Այս սակայն իրենց տգիտու-  
 թիւնն է որ արհամարհել կու-  
 տայ աս տնտեսական գիտութիւ-  
 նը : Նին ատենի Յոյնք և Նը-  
 ուովմայեցիք որ այնպէս ճարտար  
 ու քաղաքավար էին , մեծ ջան-  
 քով իրենք զիրենք աս բանե-  
 րուս կը կրթէին . և իրենց մէ-  
 ջի մեծամեծ մարդիկն ալ իրենց  
 հմտութեամբը տնտեսութեան  
 վրայ գրքեր շարադրած են որ  
 ինչուան հիմա ունինք , և անոնց  
 մէջ գրուած են երկրագործու-  
 թեան ինչուան ամենամանր բա-



ներն ալ : Մէնքը գիտեն որ ա-  
 նոնց աշխարհակալներն իրենց  
 անարգութիւն չէին սեպեր եր-  
 կիր հերկելը , ու յաղթանակէն  
 դառնալնուն պէս արօրը ձեռք  
 կ'առնէին : Ս'ս բանս այնչափ հե-  
 ու է մեր սովորութենէն որ  
 պատմութեանց մէջ խիստ յայտ-  
 նի գրուած չըլլար նէ՝ ոչ ոք  
 պիտի հաւատար : Ս'այց միթէ  
 բնական բան չէ՞ որ մարդս իրեն  
 երկիրը անոր համար պաշտպանէ  
 ու ընդարձակել ուզէ , որպէս զի  
 կարենայ զանիկայ խաղաղութիւն  
 մշակել : Ս'նչ բանի կուգայ յաղ-  
 թութիւնը՝ թէ որ անոր պտու-  
 ղը խաղաղութիւն չըլլայ : Ս'այդ  
 որ մարդուս մտաց հաստատու-  
 թիւնը ան ատենը կ'երևնայ ,  
 երբոր ուզենայ լաւ մը տեղեկա-  
 նալ ան բաներուն՝ որ մարդկային  
 կենաց հիմունքն են . ուրիշ ա-  
 մէն մեծամեծ գործքերն ալ ա-



նոնցմով կը դառնան : Տէրու  
 թեան մը զօրաւոր ու երջանիկ  
 ըլլալը շատ մը գէշ մշակուած  
 գաւառներ ունենալուն վրայ է ,  
 հապա ունեցած քիչ երկիրնե-  
 րէն ալ դիւրութեամբ իր ժո-  
 դովրդեան ապրուստը հանելուն  
 վրայ է :

Արաւցընէ շատ խելք ու տե-  
 դեկութիւն պէտք է տնտեսու-  
 թեան հետ վերաբերութիւն  
 ունեցող ամէն արհեստները սոր-  
 վելու , ու մէկ տուն մը լաւ կեր-  
 պով կառավարելու՝ որ պզտիկ  
 հասարակապետութիւն մըն է ,  
 քան թէ խաղալու , նորելուկ  
 բաներու վրայ խօսելու ու կեն-  
 ցադավարութեան մանր մունր  
 վայելչութիւններուն վրայ կըթու-  
 թիւն ընելու : Շատ փուճ խելք  
 է ան խելքն որ լաւ խօսելէն՝ ի  
 զատ ուրիշ բանի ետեւէ չըլլար .  
 ուր որ դառնաս կը տեսնես որ



շատ կանանց խօսակցութիւնը  
խելացի վճիռներով լեցուն է .  
բայց ասոնք ան վճիռները 'ի  
գործ դնելու պզտիկուց կրթուած  
չըլլալով՝ ամենեին բանի չեն  
գար :

Բայց դուն ներհական պա-  
կասութենէն ալ զգուշացիր .  
վասն զի կանայք ամէն բանի  
մէջ շուտով մէկ ծայրէն մէկալ  
ծայրը կ'անցնին : Այն բան է  
պզտիկուց զիրենք վարժեցրնել  
կառավարութեան , հաշիւներ  
ընելու , բան գնելու համար ,  
սակարկութիւն ընելու , և թէ  
ամէն բան աղէկ գործածելուն  
կերպը ո՞րն է : Բայց վախցիր որ  
չըլլայ թէ աս տնտեսութեան  
կամ խնայութեան ծայրը ագա-  
հութեան երթայ . լաւ մը հաս-  
կըցուր իրենց թէ ո՞րչափ ծաղ-  
րելի բան է աս ախտը , ու ըսէ  
իրենց . լաւ նայեցէք , ագահու-



Թիւնը քիչ բան կը վաստըկի ու  
 շատ պատիւ կը կորսընցընէ: Ան-  
 լացի մարդը պիտի նայի որ չա-  
 փաւոր ու աշխատասէր կեանքով  
 մը ամենայն կերպով փախչի ա-  
 մօթէ ու անիրաւութենէ, որ  
 զեղխութեան ու մեխողութեան  
 հետ կապուած են: Աւելորդ  
 ծախքերը անոր համար միայն  
 պէտք է քիչցընել, որպէս զի  
 կարենայ մէկը աւելի առատա-  
 ձեռնութիւն ընել ինչ որ վայել  
 չութիւնը, բարեկամութիւնը և  
 կամ ողորմութիւնը կը պահան-  
 ջէ: Շատ անգամ մեծ վաստակ  
 է ըստ տեղւոյն կորսընցընել  
 դիտնալը. մեծամեծ շահեր ը-  
 նել տուողը կծծի խնայութիւնը  
 չէ, հապա կարգով կանոնով բան  
 տեսնել է: Ատէպ յիշեցուր ի-  
 ընց այնպիսի կանանց սխալ-  
 մունքը, որ մէկ մոմի մը վրայ  
 կը դողան, ու անդին մեծամեծ



ծախքերու մէջ տնտեսէ մը կը  
խաբուին :

Մաքրութիւնն ալ տնտեսու  
թեան պէս սորվեցուր : Մար  
թեցուր աղջիկ տղաքն որ զգուին  
ամէն աղտոտ ու անկարգ բանէ ,  
տան մէջի մէկ պզտիկ անկար  
գութիւնն ալ աչքերնէն չփախ  
ջի : Մը ալ ըսէ իրենց թէ տըն  
տեսութեան ու մաքրութե հա  
մար ամէն բանէ աւելի հար  
կաւորն աս է որ ամէն բան իր  
տեղը դրուի : Մը կանոնը պզտիկ  
բան մը կ'երևնայ , սակայն ա  
ղէկ պահուելու ըլլայ նէ՛ շատ  
օգուտներ ունի : Մեզի բան մը  
հարկաւոր է . փնտուելու ատեն  
չես կորսընցըններ , ոչ խռովու  
թիւն կ'ելլէ , ոչ վէճ և ոչ  
տագնապ . ձեռքդ երկընցընելուդ  
պէս կ'առնես ուղածդ , ու գոր  
ծածելէդ վերջը շուտ մը կը դար  
ձրնես , առած տեղդ կը դնես :



Մը գեղեցիկ կարգաւորութիւնը  
 մաքրութեան գլխաւոր մէկ մասն  
 է. և առ ճիշդ կարգաւորութիւ  
 նը ամէն բանէ աւելի աչքի կը  
 զարնէ : Մեր թողունք որ ամէն  
 բան ուր որ մէյմը վայելչու  
 թեան, աչքի աղէկ երևնալուն  
 ու աղէկ պահուելուն համար  
 դրուի, հոն աւելի պէտք է որ  
 կենայ քան ուրիշ տեղ. վասն  
 զի ոչ միայն հոն սովորաբար դի  
 պուածով մը չաւրուիր, այլ նաև  
 չմաշիր, ու մաքուր ալ կը մնայ.  
 վասն զի, օրինակի համար, մէկ  
 աման մը ոչ կը փոշոտի և ոչ  
 կոտրելու վտանգ կ'ունենայ՝ թէ  
 որ գործածելուն պէս իր տեղը  
 դրուի : Աղութիւն սիրող ու  
 ամէն բան կարգաւորող անձը  
 մաքրել ալ կը գիտնայ : Մը օւ  
 դուտներուն վրայ ան ալ աւել  
 ցուր, որ ծառաններուն վրայէն  
 ծուլութեան ու խառնափնդո



րութէ ոգին կը վերցընես : Ան  
 կէց 'ի զատ մեծ բան է իրենց  
 ծառայութեան ծանրութիւնը  
 թեթևցընելն ու դիւրացընելը ,  
 և դուն ալ իրենց բան մը հրա-  
 մայած ատենդ ուշացընելուն  
 վրայ չես նեղանար : վասն զի  
 շուտ մը կը գտնեն կը բերեն :  
 Մայց աս ալ նայէ որ մաքրու-  
 թիւն ընեմ ըսելով վերջի ծայ-  
 րը չանցնիս : Մաքրութիւնը եր-  
 բոր չափաւոր ըլլայ՝ առաքինու-  
 թիւն է . բայց երբոր մէկը խեղ-  
 քը միտքը անոր տալու ըլլայ՝ իր  
 թեթևամտութիւնը կը ցուցընէ :  
 Աիրթ ախորժակ ունեցողը չա-  
 փազանց փափկութենէ կը զգու-  
 շանայ . պզտիկ բանը պզտրկի  
 տեղ կը դնէ , ու ամենևին այն-  
 պիսի բաներու վրայ չնեղանար :  
 Աստի տղոց առջևը ծաղր ըրէ  
 ան ամէն անպիտան զարդարանք-  
 ները , որոնց համար ոմանց խեղ



քը դիտեն կ'երթայ, ու անոնց  
 պատճառաւ այնչափ անխոհեմ  
 ծախքեր ալ կ'ընեն: Արթե-  
 ցուր դիրենք այնպիսի պարզ մաք-  
 րութեան մը, որ դիւրաւ ալ  
 կարենան 'ի գործ դնել. հաս-  
 կըցուր իրենց թէ մէկ բան մը  
 աղէկ ընելը ինչպէս կ'ըլլայ,  
 բայց առ ալ հասկըցուր որ ա-  
 ռանց անոր ալ կ'ընայ ըլլալ: Ա-  
 սէ իրենց թէ որչափ թեթեա-  
 մսութիւն ու ցածութիւն է՝  
 աղէկ չեփած ապուրի մը համար,  
 գէշ ծալած վարագուրի մը հա-  
 մար, շատ բարձր կամ շատ ցած  
 աթուի մը համար ելլել մէկուն  
 մէկալին բարկանալ:

Տարակայս չկայ որ շատ աւել-  
 լի խելացի մարդու նշան է կա-  
 մաւ քիչ մը բան հասկըցող ե-  
 ղենալ, բան թէ այսպիսի ճշիւ  
 բաներու մէջ՝ այնչափ փափուկ  
 ըլլալ: Այլ թէ որ առ գէշ փափ-



կու թիւ խելացի կանանց վրայէն  
 շուտով վերցընելու ջանացուի ,  
 աւելի վտանգաւոր կրնայ ըլլալ  
 կենցաղավարութե ատեն քան  
 թէ ուրիշ բաներու մէջ . շատը  
 իրենց համար անհամ ու ճանձ  
 րալի մարդիկ կ'ըլլան . քաղաքա  
 վարութեան դէմ եղած պզտիկ  
 բանը իրենց հրէշ մը կ'երևնայ ,  
 անդադար զուրիշները ծաղր կ'ը  
 նեն ու մէկ բանի մըն ալ չեն  
 հաւնիր : Ազտիկուց պէտք է ա  
 նոնց հասկըցընել թէ արտաքին  
 կերպերուն նայելով՝ մէկուն  
 վրայ վեր 'ի վերոյ դատաստան  
 ընելուն պէս անխելք բան չկայ ,  
 առանց քննելու անոր խելքը ,  
 անոր մտածմունքներն ու օգտա  
 կար կատարելութիւնները : Օ ա  
 նազան փորձելով ցըցուր իրենց  
 թէ մէկ հասարակ պարզ ու ան  
 կեղծ գեղացի մը , հանդերձ ի  
 րեն անյարմար քաղաքավարու



Թիւններովը , Թէ որ բարեսիրտ  
 ու բարեմիտ ըլլայ , շատ աւելի  
 յարգելի է քան Թէ մէկ պա-  
 լատական մը , որ ամենաբարակ  
 քաղաքավարու Թիւններուն տա-  
 կը ապերախտ , անիրաւ կեղծա-  
 ւոր ու ցած սիրտ մը ունի : Մ<sup>ս</sup> ալ  
 ըսէ Թէ միշտ պակասամիտ կ'ըլ-  
 լան ան մարդիկն որ շուտ մը ամէն  
 բանէ կը ձանձրանան ու բանի  
 մը չեն հաւնիր : Մարդ մը չկայ  
 այնչափ գէշ խօսող , որ անոր  
 խօսակցու Թենէ չկարենայ մէկը  
 խելք սորվիլ , կամ աղէկ բան մը  
 հանել . և Թէպէտ երբոր մարդս  
 ազատ է ընտրելու՝ պէտք է որ  
 աղէկներն ընտրէ , բայց Թէ որ  
 յանկարծ դիպուածով մը այն-  
 պիսի մարդկանց հանդիպելու ըլ-  
 լայ նէ՝ միտի Թարու Թիւն մը կ'ու-  
 նենայ , վասն զի կրնայ անոնց  
 դիտցած բաներուն վրայ հարց-  
 մունքներ ընել . և խելացի մար-



գիկ կրնան խելք սորվելու բան  
մը հանել նաև տգէտ մարդ-  
կանցմէ :

Բայց մենք դառնանք նորէն  
աղջիկ տղոց սորվելու բաներուն :

### ԳԼՈՒԽ ԺԲ .

Գարձեայ կանանց պարտքերուն  
վրայ :

Արիշները իրեն ծառայեցը-  
նել գիտնալը պզտիկ գիտու-  
թիւն չէ : Նապիտի ծառաներ  
պէտք է ընտրել՝ որ թէ պա-  
տուաւոր ըլլան և թէ բարե-  
պաշտ . պէտք է գիտնայ ան պաշ-  
տօնները որ անոնց պիտի յանձ-  
նէ , և թէ իւրաքանչիւր գործի  
համար որչափ ժամանակ ու աշ-  
խատութիւն պէտք է , որն է ա-  
ղէկ ընելուն կերպը , որչափ ծախ-  
քի բան է : ( ) րինակի համար ,



փուլ՝ տեղը մատակարարող յան-  
դիմանաժ կ'ըլլաս, թէ որ ուզե-  
նաս որ պտուղ մը բերէ քեզի  
այնչափ շուտ՝ որ անկարելի է,  
և թէ բան մը շինել տալու ա-  
տեն չգիտնաս գէթ ընդհանրա-  
պէս թէ անոր որչափ շաքար և  
ուրիշ բան կ'երթայ, և թէ որ-  
չափ է անոնց գինը. ասանկով  
թէ որ տեղեկութիւն չունենաս  
անոնց արուեստին, կամ չարա-  
չար կը խաբուիս անոնցմէ, և  
կամ թէ ծառաներուդ գլխուն  
պատիժ կ'ըլլաս :

Այտք է նաև ճանչնալ անոնց  
բնաւորութիւնները, սրտերնին  
շահիլ ու քրիստոնէաբար կար-  
գաւորել ան պզտիկ հասարակա-  
պետութիւնն՝ որ սովորաբար  
խռովայոյզ բան մը կ'ըլլայ :  
Յայտնի բան է թէ աս ընելու  
համար իշխանութիւն պէտք է .  
վասն զի որչափ աւելի ըլլան ծա



ուայք՝ այնչափ ասելի վախ պէտք է որ զսպուին . բայց որովհետև իրենք ալ քրիստոնեայ ու քեզի եղբայր են ՚ի Վրիստոս , և պարտական են զիրենք պատուելու իբրև Վրիստոսի անդամներ , իշխանութիւնդ վրանին ան ատենը միայն բանեցընես՝ երբոր անուշ խօսելով ճար չըլլար :

Արեմն ջանա որ ծառաներուդ սիրելի ըլլաս՝ առանց ցածրնտանութեան . հետերնին երկայն բարակ խօսակցութիւններ մ'ընեն . բայց հարկաւոր եղած ատենն ալ մի քաշուիր առանց մեծութիւն ծախելու սիրով հետերնին խօսելէն : Մնանկ ըլլայ որ պէտք եղած ատենը քեզմէ խրատ և մխիթարութիւն գրտնեն . բանի մը մէջ որ սխալին՝ դառն կերպով մի յանդիմաներ զիրենք . և վրան ոչ զարմանք և ոչ տհաճութիւն ցըցուր՝ քանի



որ յոյս ունիս թէ կրնան շրտ-  
կուիլ . քաղցրութեամբ իրենց ,  
իրաւունք հասկըցուր . և իրենց  
ծառայութեան մէջ ըրած պա-  
կասութեանը շատ անգամ համ-  
բերէ , որպէս զի կարենաս ի-  
րենց ցուցընել պաղ արիւնով մը  
թէ առանց կրից ու առանց նեղ  
սրտութեան է իրենց ըսածդ ,  
ան ալ ոչ այնչափ իրենց ծա-  
ռայութեանը , որչափ իրենց շա-  
հուն համար : Վիւրին բան չէ  
մեծատուն աղջիկը վարժեցը-  
նել այսպիսի անուշ ու գթած  
հրամանատրութեան . վասն զի  
անհամբերութիւնն ու երիտա-  
սարդական եռանդը ազնուա-  
տոհմութեան ընդունայն կար-  
ծիքին հետ միանալով՝ ծառա-  
ները գրեթէ ձիու տեղ կ'ուզեն  
գործածել . կարծեն թէ ծա-  
ռայից բնութիւն բոլորովին տար-  
բեր է իրենց բնութեանէն . միտ-



քերնին դրած են թէ անոնք ի-  
 րենց տէրերուն հանգստութեա-  
 նը համար միայն ծնած են :  
 Ս անա ցուցընելու թէ աս կար-  
 ծիքները որչափ հակառակ են  
 համեստութեան ու ընկերսի-  
 րութեան : Հասկըցուր որ մար-  
 դիկ ուրիշներէն ծառայութիւն  
 ընդունելու համար չեն ծնած .  
 անձոռնի մոլորութիւն մըն է ,  
 ըսէ , կարծելը թէ մարդիկ կան  
 որ ուրիշներուն ծուլութիւնն ու  
 հպարտութիւնը սնուցանելու հա-  
 մար ծնած են . և ծառայութիւ-  
 նը մարդկանց բնական հաւասա-  
 րութեանը դէմ հաստատուած  
 ըլլալով , որչափ կարելի է նէ  
 պէտք է զանիկայ քաղցրացընել ,  
 և ան տէրերն որ իրենց ծա-  
 ռայիցմէ շատ աւելի լաւ կրթու-  
 թիւն առած ըլլալով ալ երբոր  
 պակասութիւններով լեցուն են ,  
 թող չյուսան որ իրենց ծառա-



ներն ամենեին պակասութիւն  
 չունենան, որովհետեւ անոնք ոչ  
 կրթութիւն առած են և ոչ բա-  
 րի օրինակներ տեսած. և թէ  
 որ ծառաները կ'աւրուին՝ իրենց  
 ծառայութիւնն աղէկ չընելով,  
 ևս աւելի տէրերը կ'աւրուին  
 երբոր աղէկ ծառայութի գըտ-  
 նեն. վասն զի ամէն բանի մէջ  
 մէկուն սրտին ուզածը կատա-  
 րուիլը՝ մարդու հոգին կը մեղ-  
 կացընէ, ու ամէն տեսակ դիւ-  
 րութեանց ու փափկութեանց  
 ետեւէ կ'ընէ:

Արպէս զի աղջիկ տղաք աղէկ  
 գիտնան թէ ինչպէս պէտք է  
 կառավարել ծառաները, լաւ  
 կ'ըլլայ որ պզտիկուց վարժին աս  
 բանիս: Յանձնէ իրենց կարգա-  
 ւորելու բան մը ան պայմանով՝  
 որ ետքը քեզի հաշիւ տան. աս  
 վատահոլութիւնը շատ սիրելի բան է  
 իրենց. վասն զի տղաք անկարծե-



լի կերպով կ'ուրախանան, երբ  
 որ տեսնեն որ ուրիշները վրա-  
 նին վստահութի կը ցուցնեն ու  
 մեծկակ գործքերու մէջ կը մըտ-  
 ցնեն զիրենք: Վս բանիս գե-  
 ղեցիկ օրինակը կը տեսնենք  
 Մարգարիտա թագուհոյն վր: Վս  
 թագուհին կը պատմէ իր  
 գրուածքին մէջ ու կ'ըսէ, թէ  
 բոլոր կենացս մէջ իմ ամենէն  
 մեծ ուրախութիւնս ան եղեր է  
 որ երբոր դեռ պզտիկ տղայ էի  
 տեսայ որ թագուհի մայրս սկը-  
 սաւ հետս իբրև չափահաս աղջ-  
 կան մը հետ խօսիլ. և տեսնե-  
 լով որ մայրս ու եղբայրս Վն  
 ժուի դուքսը տէրութեան ծա-  
 ծուկ բաներն ալ ինծմէ չեն պա-  
 հեր, ինծմէ՝ որ ինչուան ան ա-  
 տեն տղայական խաղերէն զատ  
 ուրիշ բան չէի գիտեր, ուրա-  
 խութենէս խելքս գլխէս կ'եր-  
 թար: Վս յսպիսի փորձերու մէջ



Թող որ տղան քանի մը պակա-  
 սութիւններ ալ ընէ, ու քիչ  
 մը բան դուն ալ անոր կըթու-  
 թեանը զոհ ըրէ: Ատքը քաղ-  
 ցրութիւն հասկըցուր իրեն թե  
 աս պակասութեան մէջ չիյնա-  
 լու համար ինչ պէտք էր ընէր  
 կամ ըսէր. պատմէ իրեն քու  
 գլխէդ անցած փորձառութիւն-  
 ները, մի վախնար ըսելու անոր  
 իրեններուն նման սխալմունք-  
 ներ՝ որ դուն ըրած ես տղայու-  
 թեան ատենդ. ասով իրեն վրս-  
 տահութիւն կուտաս, գիտնա-  
 լով որ առանց վստահութեան՝  
 դաստիարակութիւնը ձանձրալի-  
 արարողութիւն մը կը դառնայ:  
 Այլ որ աղջիկ տղոց ան-  
 սխալ կարգալ ու գրել սորվե-  
 ցնես: Մեծ ամօթ բան է,  
 բայց խիստ ալ հասարակ եղած  
 է, որ կը տեսնես խելացի ու  
 քաղաքավար կանայք, որ կար-



դացածնին չեն կրնար աղէկ ար-  
տաբերել . կամ կը կըմկրման և  
կամ եղանակով մը կը կարդան ,  
որ պէտք էր պարզ ու բնական , և  
միանգամայն միակերպ ու հա-  
մարձակ կարդային : Մայց աս-  
կէց ալ աւելի խեղճ են ուղ-  
ղագրութեան մէջ ու գրելու ա-  
տեն գրերուն ձևին , կամ զա-  
նոնք իրարու հետ կապելու կեր-  
պին մէջ . գէթ վարժեցուր զի-  
րենք շիտակ տողի վրայ գրելու ,  
և անանկ յստակ ու մաքուր՝ որ  
դիւրաւ կարդացուի : Աս ալ հար-  
կաւոր է որ աղջիկ տղաք իրենց  
լեզուին քերականութիւնը գիտ-  
նան . բայց հարկ չկայ որ իրենք  
ալ դպրատան տղոց պէս կարգաւ  
ինչուան ամենաբարակ կանոն-  
ներն ալ սորվին . բաւական է  
վարժեցընես զիրենք , որ ա-  
րուեստակութեամբ բայերուն  
մէկ ժամանակը ուրիշ ժամա-



նակի տեղ չբանեցրնեն . իմաստին յարմար բառեր գործածեն , մտածմունքնին կարգաւ , յստակ ու համառօտ կերպով բացատրեն . ասով ան օգուտն ալ կ'ընես որ օր մը իրենք ալ կարող ըլլան իրենց տղոցը աղէկ խօսելուն կերպը սորվեցրնել :

Վիտենք որ հին հռովմայեցւոց աստենը Վրակքօսեանց մայրը իր տուած լաւ դաստիարակութեամբը շատ օգնեց իրեն որդւոցը ճարտասանութիւնը զարդարելու՝ որով այնչափ մեծ մարդիկ եղան :

Վէտք է որ գիտնան նաև թուաբանութեան չորս գլխաւոր կանոնները , անոնց մէջ ալ աղէկ վարժեցրնելու համար՝ ստէպ հաշիւներ պէտք է տաս իրենց որ ընեն : (Վէպէտ աս զբաղմունքը շատերուն համար մեծ տաժանելի բան մըն է ,



բայց երբոր մէկը պզտիկուց վար-  
ժի որ և իցէ հաշիւ շուտ մը ը-  
նելու՝ ան կանոններուն օգնու-  
թեամբը շատ կը դիւրանայ ի-  
րեն ու այնչափ ձանձրալի չըլ-  
լար : Ամէնքնիս գիտենք որ տը-  
ներու բարեկարգութեանը մեծ  
պատճառ է ամէն բան ստէպ  
համրելը :

Ազէկ կ'ըլլայ որ իրաւանց ալ  
գլխաւոր կանոնները գիտնան .  
զոր օրինակ թէ ի՞նչ տարբերու-  
թիւն կայ կտակի ու պարգևի  
մէջ . ի՞նչ բան է դաշնադրու-  
թիւնը, փոխանակութիւնը, ժա-  
ռանգակիցներու բաժինը . այս-  
պիսի գործողութիւնները վա-  
ւերական ընելու համար, իրենց  
բնակած երկրին գլխաւոր օ-  
րէնքները կամ սովորութիւննե-  
րը որո՞նք են . որ բանը սեպհա-  
կան ստացուածք կ'ըսուի, որ բա-  
նը հասարակաց է . շարժական



ստացուածները որն են , անշար-  
ժականները որոնք են : Ասան զի  
թէ որ կարգուելու ըլլան , ամէն  
գլխաւոր բաներ ասոնց վրայ կը  
դառնան :

Եւ այց միանգամայն աս ալ  
հասկըցուր թէ իրենց կարողու-  
թենէն որչափ վեր է իրաւանց  
վրայ խորունկ տեղեկութիւններ  
ունենալը , և թէ նոյն իսկ իրա-  
ւագիտութիւնը մարդկային մը-  
տաց տկարութեանը համար որ-  
չափ մթութիւններով ու տա-  
րակուսական կանոններով լե-  
ցուն է , որչափ փոփոխութիւն-  
ներ կ'ունենայ , և թէ դատա-  
ւորներէն կախուած բաները որ-  
չափ ալ յայտնի երևնան՝ դար-  
ձեալ անստոյգ են . և թէ որչափ  
իրաւացի դատաստաններ ալ  
սաստիկ երկրնալով փասակար-  
ու անտանելի կ'ըլլան : Հասկը-  
ցուր իրենց դատաստանարանին



շփոթութիւնները, եղած խորա-  
 մանկութիւնները, դատաստան-  
 ներու բարակ քննութիւններն  
 ու պտոյտները, անոնց համար  
 եղած անբաւ ծախքերը, դա-  
 տաստան բացողներուն խեղճու-  
 թիւնը, փաստաբաններուն վար-  
 պետութիւնը, գրագիրներուն  
 ճարտարութիւնը, որ ամէն  
 հնարք կը բանեցնեն որպէս զի  
 իրենք շուտ մը հարրստանան՝ եր-  
 կու կողմի հակառակորդները  
 աղքատցնելով: Ան ալ ըսէ թէ  
 մէկ աղէկ դատաստան մը ինչ  
 գէշ կերպերով կ'աւրուի. մէկ  
 ատեանէն մէկալ ատեանը եր-  
 թալով իրաւունքները ինչպէս  
 իրարու ներհակ կը պատահին,  
 թէ որ մէկ ատեանին դիմելու  
 ըլլաս, դատաստանդ կը վաստը-  
 կիս, իսկ թէ որ քննութեան  
 տակ իյնաս, կը կորսնցնես:  
 Աի մոռնար նաև իրաւասութե



համար եղած կռիւներն ըսելու ,  
 և թէ ինչպէս շատ անգամ կը  
 պատահի որ չգիտնալով թէ ո՞ր  
 ատենին կ'իյնայ վճիռ տալը ,  
 դատաստանը տարիներով կախ  
 կը մնայ : Աերջապէս իմացուր  
 թէ որչափ տարբեր կ'ըլլայ նոյն  
 գործողութեան մէջ փաստա-  
 բաններուն ու դատաւորներուն  
 կարծիքը . խորհուրդ հարցու-  
 ցած ատենդ կ'ապահովցնեն  
 զքեզ թէ դատաստանդ կը վաս-  
 տրկիս , մէյմըն ալ վրադ վճիռ  
 կ'ելլէ որ դատաստանին տու-  
 գանքն ալ դուն վճարես :

Աս ամէն բաներն ալ ինծի  
 կ'երևնայ թէ շատ հարկաւոր է  
 կանանց գիտնալը , որպէս զի  
 դատաստան բանալու սէր չձգեն ,  
 և ոչ կոյրզկուրայն այնպիսի խը-  
 րատներու մտիկ ընեն որ մար-  
 դուս խաղաղութիւնը կը վերցը-  
 նեն՝ երբոր այրի մնան կամ ու-



նեցածներնուն վրայ իրենք տէր  
 ըլլան : Այնպիսի ատեն պէտք  
 է որ իրենց գործակալներնուն  
 մտիկ ընեն , բայց բոլորովին ալ  
 անոնց ձեռքը անձնատուր չըլ-  
 լան :

Արբոր ուզեն անոնց ձեռքովը  
 դատաստան բանալ , պէտք չէ որ  
 բոլորովին վստահին անոնց , հա-  
 պա խորհուրդ հարցընեն ուրիշ  
 խելացի ու բան գիտցող մարդ-  
 կանց . և վերջապէս մտքերնին  
 դնեն թէ դատաստանի մէջ գրե-  
 խաւոր վարպետութիւնը աս է  
 որ վնասները առաջուց իմանայ  
 մէկն ու անոնցմէ զգուշանայ :

Մեծագգի ու հարուստ աղ-  
 ջիկ տղաք պէտք է աղէկ գիտ-  
 նան թէ ինչ պարտք ունին եր-  
 կիրներու տէր մարդիկը : Աստի  
 ըսէ այնպիսեաց թէ ինչ կեր-  
 պով պիտի կարենան այն անկար-  
 գութեանց , հարստահարութեց



խորամանկութեց ու խաբէութեանց առաջը առնել՝ որ գեղերու մէջ շատ կը պատահին : Ըսէ թէ ինչ կերպով կրնան պզտիկ դպրոցներ հաստատուիլ ու աղքատ և հիւանդ մարդկանց համար հիւանդանոցներ շինուիլ : Հասկըցուր թէ մարդ ինչպէս երկրի մը վաճառաշահութիւնը ծաղկեցընելով՝ հոն տեղի խեղճութիւնը կը պակսեցընէ . բայց մանաւանդ առ բանս հասկըցուր իրենց թէ ինչպէս կրնայ մէկը ժողովրդեան մը հաստատուն կըթութիւն ու քրիստոնէական քաղաքականութիւն մը սորվեցընել : Թէ որ ասոնք ամէնը հոս դնելու ըլլայինք , շատ երկայն կ'ըլլար :

Սեծատանց պարտքերը բացատրելու ատենդ մի մոռնար նաև անոնց իրաւունքները զուրցելու : Աստի ըսէ իրենց թէ ինչ



բան է կալուածը, տէրը, հպատակը, պատիւը, եկամուտը, տասանորդը, տուրքը, սակը, տուրքէ ազատ ըլլալը, և ասոնց նման բաները: Այս տեղեկութիւնները շատ հարկաւոր են. վասն զի երկիրներու կառավարութիւնը ասոնցմով կ'ըլլայ:

Այս կրթութիւններէն վերջը, որ ամենէն հարկաւորներն են, կարծեմ թէ գէշ չըլլար թողուլ որ աղջիկ տղաք երթան իրենց ընտրութեամբը ու մտքերնուն կարողութեանը համեմատ կարդան նաև ան արտաքին գրքերը՝ որոնց մէջ ամենեւին վրասասակար կիրքեր գրգռելու բան չկայ. ասով կրնանք նաև իրենց զգուելի ընել կատակերգութիւններն ու առասպելապատում գրուածները: Աւստի ձեռուրնին տուր հին Յունաց ու Հռովմայեցւոց պատմութիւնները. հոն



կը տեսնեն որ քաջութիւնն ու  
անշահասիրութիւնը ինչ խելքէ  
դուրս բաներ կրնան ընել տալ :  
Սորվեցուր նաև Վաղղիոյ պատ-  
մութիւնը որ անոր մէջ ալ շատ  
գեղեցիկ բաներ կան . նոյնպէս  
նաև մերձաւոր երկիրներունը  
նմանապէս հեռաւոր երկիրնե-  
րուն խելքով գրուած պատմու-  
թիւնները : Աս բաներս շատ  
կ'օգնեն իրենց միտքը բանալու  
ու սրտերնին ազնիւ զգացմունք-  
ներով զարդարելու , բաւական  
է որ պարծենկոտութեան ու ի-  
մաստակութեան ետևէ չըլլան :

Սովորաբար կը կարծուի որ  
ազնուազգի աղջիկ տղայ մը ա-  
ղէկ կըթուելու համար հարկա-  
ւոր է որ Վտալացւոց ու Վալա-  
նիացւոց լեզուները սորվի . բայց  
ասիկայ ինձի անօգուտ կ'երև-  
նայ . ուրիշ բան է թէ որ մէկ  
աղջիկ մը սպանիացի կամ իտա-



լացի իշխանութի մը քով մտ-  
 նէ, ինչպէս մեր Վաղղիոյ ան  
 թագութիւններն որ Վաստրիոյ կայ-  
 սերաց և կամ Վէտիչի ըսուած  
 ցեղերէն էին: Աւրիշ կողմանէ  
 աս երկու լեզուները քնասէն  
 զատ օգուտ մը չունին, և կա-  
 նայք անոնք սորվելով կը սկսին  
 քնասակար գրքեր կարդալ ու  
 պակասութիւննին աւելցնել,  
 որով և օգուտէն աւելի կորուստ  
 կ'ընեն: Վատիւններէն սորվելը  
 աւելի խելք է՝ Ակեղեցւոյ լե-  
 զուն ըլլալով, վասն զի շատ պը-  
 տուղ կը քաղեն և մեծ միսիթա-  
 ըութիւն կ'ըլլայ իրենց, որ ա-  
 նով կը սկսին աստուածային  
 պաշտամանց խօսքերը հասկը-  
 նալ: Ասե անոնք ալ որ խօսքի  
 գեղեցկութիւն կը փնտռեն՝ ա-  
 ւելի լատինին մէջ կրնան գրտ-  
 նել ուզածնին կատարելու հաս-  
 տատուն կերպով՝ քան թէ ի



տալերէնին ու սպանեօլերէնին  
 մէջ, որ սովորաբար աս լեզու-  
 ներով գրուած գրքերը բան ծա-  
 խելու կերպով մը և երևակայու-  
 թեան տաքութեամբ մը առանց  
 հաստատուն կանոնի գրուած  
 են. բայց կ'ուզեմ որ աս լատինե-  
 րէնն ալ ան աղջիկ տղաքը միայն  
 սորվին, որոնց մտաց դատումը  
 հաստատուն է ու վարքերնին  
 համեստ, և գիտնան թէ աս  
 ուսմունքը ինչ բանի համար  
 պիտի սորվին, ընդունայն հե-  
 տաքրքրութիւններ պիտի չընեն,  
 սորվածնին ծածկեն, և միայն  
 խելք սորվելու համար գիտնան  
 իրենց գիտցածները \* :

\* Ինչ որ Ֆենելոն լատիներէնին հա-  
 մար կ'ըսէ, մենք ամենայն կերպով կրնանք  
 մեր գրաբառ լեզուին վրայ հասկընալ :  
 Իսկ իտալերէնին ու սպանեօլերէնին հա-  
 մար ըսածները վախեմ թէ ատեն պիտի  
 գայ որ մենք ալ գաղղիարէնին ու յու-



Թող կուտամ աղջկանց, բայց լաւ ընտրութեամբ, որ ճարտասանական ու բանաստեղծական գրքեր ալ կարդան, թէ որ տեսնեմ կ'ախորժին, և իրենց դատմունքը այնչափ հասուն է որ կրնան այսպիսի բաներու մէջ աղէկ ընտրութիւն ընել. բայց զգուշանալու է որ չըլլայ թէ իրենց կենդանի երևակայութիւնը սաստիկ վառուի. ուստի աս բաներու մէջ ճիշդ չափաւորութիւն մը պիտի պահուի. սիրոյ վրայ եղած բաները որչափ մեղմ ու պարտրկած ալ ըլլան՝ այնչափ աւելի վտանգաւոր կ'երևնան ինծի:

Արաժշտութեան ու պատկերահանութեան մէջ ալ նոյն զգուշութիւններն ընելու է. բոլոր

նարէնին համար ըսենք մեր ազգին աղջիկ տղոցը:



աս տեսակ արհեստները նոյն ու  
 գւոյն ու նոյն ախորժակի տակ  
 կ'երթան : Արաժշտութե հա-  
 մար գիտենք որ հիները կ'ըսէին  
 թէ բարեկիրթ ժողովրդեան մը  
 բարքին համար շատ վնասակար  
 բան է կանացի մեղկ երաժշտու-  
 թիւնը որ մարդու ջղերը կը  
 թուլցընէ , ու հոգին մեղկ ու  
 հեշտասէր կ'ընէ . մեղմ ու սրը-  
 տաշարժ ձայները անոր համար  
 միայն այնչափ զուարճալի կու-  
 գան՝ վասն զի մարդու զգայա-  
 րանքները այնպէս կը զմայլեցը-  
 նեն որ անոնց մէջ կ'ընկղմի ու  
 կը գինովնայ : Անոր համար հին  
 Ապարտացւոց իշխանները երբոր  
 նուագարան մը տեսնէին որ չափէ  
 դուրս անուշ ձայն ունէր , կ'առ-  
 նէին կը կոտորտէին , և ասիկայ  
 իրենց քաղաքական օրինաց գըւ-  
 խաւորներէն մէկն էր . Աղատոն  
 ալ անոր համար սաստիկ վար



կը զարնէ ասիացւոց նուագա  
 րաններուն հեշտալի ձայները .  
 ուրեմն որչափ ևս աւելի իրա-  
 լամբ քրիստոնեայք , որոնք հեշ-  
 տութիւնը պիտի չփնտռեն միայն  
 հեշտութեան համար , պարտա-  
 կան են ամենայն կերպով խոր-  
 շելու աս թունաւոր զուարճու-  
 թիւններէն :

Բանաստեղծութիւնն ու ե-  
 րաժշտութիւնը , թէ որ մէկը  
 վերցրնէ անոնցմէ ան բաներն  
 որ իրենց բուն վախճանէն դուրս  
 են , մարդու սրտին մէջ առա-  
 քինութեան կենդանի սէրը ու  
 վսեմ զգացմունքները արթնցը-  
 նելու շատ օգտակար կրնան ըլ-  
 լալ : Որչափ սուրբ գրոց մէջ աս  
 տեսակ բանաստեղծօրէն գը-  
 րուածներ ունինք՝ որ Աբրայե-  
 ցիք կ'երգէին , ինչպէս որ կ'ե-  
 րենայ : Նստուածաշնչին գրուե-  
 լէն առաջ ամէն աստուածային



բաներու աւանդութիւնը երգե-  
 րով պահուած են մարդկանց  
 մէջ: Վիտենք թէ երաժշտու-  
 թիւնը հեթանոսաց մէջ որչափ  
 զօրաւոր բան սեպուած էր մար-  
 դուս հոգին հասարակ զգաց-  
 մունքներէն վեր հանելու: Սուրբ  
 Ալեղեցին ալ միտքը դրեր է  
 թէ իր որդիքը միայն Մատուծոյ  
 գովութեանց երգերովը կրնայ  
 մխիթարել: Արեմն աս ար-  
 հեստներն որ հոգին սուրբ սրբ-  
 բազան արհեստներ դարձուցեր  
 է՝ մէկդի ձգել չըլլար: Վրիս-  
 տոնէական երաժշտութիւնն ու  
 բանաստեղծութիւնը ամէն բա-  
 նէն աւելի կրնան մարդուս զը-  
 զուելի ընել արտաքին հեշտու-  
 թիւնները: Վայց որովհետեւ  
 մեր գաղղիացի ազգը ծուռ կար-  
 ծեօք պաշարուած է աս բանիս  
 մէջ, աս արուեստներուն ետեւէ  
 իյնալը վտանգէ ազատ չէ: Աւա-



տի երբոր աղջիկ տղու մը վրայ  
 փափաք մը երևնայ աս տեսակ  
 բաներու, պէտք է առաջուց հաս-  
 կըցընել իրեն թէ երաժշտու-  
 թեան մէջ որչափ գեղեցկու-  
 թիւն կրնայ գտնել մարդս՝  
 առանց բարեպաշտական երգե-  
 րէն դուրս ելլելու : (Թ) Եր աղ-  
 ջիկը ձայն ու երգելու յարմա-  
 րու թիւն ունի, մի կարծեր որ  
 ինչուան ետքը կրնաս իրեն ար-  
 գելել որ չսորվի : Վս արգելքով  
 փափաքը աւելի կը սաստկանայ .  
 աղէկը ան է որ բարեկարգ ձամ-  
 բու մը բերես աս հեղեղին ըն-  
 թացքը, քան թէ բոլորովին կե-  
 ցընելու ձեռք զարնես : Վկար-  
 չու թիւնը մեր մէջը աւելի դիւ-  
 րաւ կրնայ ՚ի բարին դարձուիլ,  
 թող որ ասիկայ կանանց համար  
 հարկաւոր ալ է . վասն զի ա-  
 ռանց ասոր իրենց ձեռագործ-  
 ները անկատար կ'ըլլան : Վի-



տե՛մ որ կրնան նկարչութեան  
այնպիսի կտորները միայն սոր-  
վել, որ անոնց համար մասնաւոր  
արհեստ մը բանեցընելու հարկ  
չկայ. բայց խօսքը մեծատուն  
կանանց վրայ բերելով՝ իմ միտքս  
ան է որ ձեռքերնուն հետ մըտ-  
քերնին ալ աշխատցընեն. ուս-  
տի կ'ուզեմ այնպիսի ձեռա-  
գործներ ընեն՝ որ ճարտարու-  
թեան և արհեստին գեղեցկու-  
թիւններովը աշխատանքը աւել-  
լի համ մը ունենայ: Եւ այս ձե-  
ռագործներ կան որ ճշմարիտ  
գեղեցկութիւն մը չեն կրնար  
ունենալ ինչուան որ գծագրու-  
թե՛ կանոններով շինուած չըլ-  
լան. անոր համար է որ գրեթէ  
ինչ բան որ կը տեսնենք հիմա  
դիպակներու, ասղնեգործ շա-  
րերու ( Լանձելտներու ) և նկա-  
րակերպ բանուածքներու վրայ՝  
ամէնն ալ գէշ ախորժակով



խառնափնդոր շինուած բաներ  
 են . ոչ գծագրութիւն կայ վրա  
 նին և ոչ համեմատութիւն :  
 Ալ ասոնք անոր համար միայն  
 բանի տեղ կ'անցնին , որ շինող  
 ները վրանին շատ աշխատեր են ,  
 գնողներն ալ շատ ստակ տուեր  
 գներ են . իրենց գեղեցկութիւ  
 նը այնչափ է որ հեռուանց նայո  
 ղին կամ հասկըցողին աչուրնե  
 ըր կ'առնեն : Անայք ան տեսակ  
 բաներու մէջ իրենց համար կա  
 նոններ ալ դրած են . թէ որ  
 մէկը անոնց դէմ խօսի՝ փախու  
 կի տեղ կը դնեն : Սակայն թէ  
 որ նկարչութենէ հասկընան ,  
 կրնան իրենք իրենց սխալմունքը  
 ճանչնալ , և չափաւոր ծախքով  
 մը ու մեծ զուարճութեամբ  
 այնպիսի ազնիւ կերպ ու գեղե  
 ցիկ ձեռագործներ հանել , որ  
 անկանոն նորելուկներէն շատ  
 գերազանց բան կ'ըլլան :



Վմանապէս պէտք է որ աղ-  
 ջիկները թէ վախնան դատար-  
 կութենէ և թէ արհամարհեն  
 զանիկայ . թող մտածեն որ հին  
 ատենի քրիստոնեայք թէ աղ-  
 քատ ըլլային և թէ հարուստ  
 կ'աշխատէին , ոչ թէ զբօսանքի  
 մտքով՝ հապա աշխատութիւնը  
 իրենց օգտակար , անընդհատ ու  
 վայելուչ զբաղմունք մը դարձը-  
 նելու համար : Վնական կարգը ,  
 նախաստեղծ մարդուն ու անով  
 բոլոր իր որդւոցը վրայ դրուած  
 ապաշխարանքը , ու նոր մարդուն՝  
 որ է Վրիստոս Տէր մեր՝ մե-  
 զի թողած մեծ օրինակը , աս  
 ամէն բաներն ալ կը յորդորեն  
 զմեզ որ աշխատասէր կենաց ե-  
 տեէ ըլլանք՝ ամէնքնիս ալ մեր  
 վիճակին յարմար կերպով :

Մէկ աղջիկ տղայ մը դաս-  
 տիարակելու համար նայելու է  
 ընդհանրապէս թէ անոր վիճակը



Թնչ պիտի ըլլայ, կեանքը Թնչ  
 տեղեր պիտի անցընէ և Թնչ  
 դործքի ետևէ պիտի ըլլայ: Ա-  
 ղէկ նայէ որ չըլլայ թէ իր ու-  
 նեցածէն ու իր վիճակէն վեր  
 բաներու վրայ աչք ձգէ: Ախտ  
 քիչ մարդ կայ որ չափէ դուրս  
 բաներու ակնկալու թիւն ունե-  
 նալը իրեն մեծամեծ փնասներու  
 պատճառ եղած չըլլայ. ան բանն  
 որ զինքը երջանիկ պիտի ընէր՝  
 ճանճրալի բան մը կը դառնայ ի-  
 րեն՝ երբոր մէյմը միտքը կը  
 դնէ թէ անկէց աւելի բարձր վի-  
 ճակի կրնար հասնիլ: Թէ որ  
 աշակերտդ իր կեանքը գեղը պի-  
 տի անցընէ, օր մը առաջ իր  
 միտքը դարձուր հոնտեղը ունե-  
 նալու զբաղմանցը, և մի թողուր  
 որ քաղաքի զբօսանքներուն հա-  
 մը առնէ. հասկըցուր իրեն թէ  
 պարզ ու անպարապ կեանքի մը  
 օգուտները որոնք են: Թէ որ



քաղաքին մէջ չափաւոր մարդու  
 մը զաւակ է, մի թողուր որ պա-  
 լատական մարդկանց հետ տես-  
 նուի. ապա թէ ոչ, կը սկսի այն-  
 պիսի կերպերու ետեւէ իյնալ որ  
 զինքը ծաղրելի բան մը կ'ընեն.  
 նայէ որ իր վիճակին չափէն  
 դուրս չելլէ, և օրինակ առնել  
 սուր իրեն ան մարդիկներէն որ  
 նոյն վիճակին մէջ ըլլալով ա-  
 ղէկ առաջ եկեր են. ան բանե-  
 րուն կը թէ անոր միտքը, որ բո-  
 լոր կենացը մէջ պիտի ընէ. սոր-  
 վեցուր իրեն թէ ինչպէս պիտի  
 կառավարէ միջակ վիճակի մը  
 սուներ. ինչ հոգ պիտի ունենայ  
 գեղին եկամուտներուն ու կա-  
 լուածոց և քաղաքին մէջ եղած  
 տներուն վարձերուն, տղոց դաս-  
 տիարակու թեանը և ուրիշ ո՞ր և  
 իցէ մանր զբաղմանց վրայ, որոնց  
 մէջ որ աստենով կարգուելէն ե-  
 տե պիտի մտնէ: Ասկ թէ որ ա-



աանց ծնողքէն ստիպուելու միտ-  
 քը դնէ որ կուսան ըլլայ, դար-  
 ձուր մէկէն իր ամէն դաստիա-  
 րակութիւնը դէպ'ի փափաքած  
 վիճակին. նայէ որ անիկայ իր  
 կարողութիւններն ու մարմինը  
 փորձէ առանց նորրն ծայու թեան  
 ատենին սպասելու. վարժեցուր  
 զինքը լուծութիւն պահելու, կըր-  
 թէ որ իր կամքին ու սովորու-  
 թեանցը դէմ եղած բաներուն  
 սիրով համբերէ. և քիչ քիչ  
 փորձէ թէ արդեօք պիտի կա-  
 ռենայ իր փափաքած կարգին  
 մէջ հաստատուն կենալ. նայէ  
 որ վարժի չարքաշ, սակաւապէտ  
 ու աշխատասէր կեանքի. տեղն  
 'ի տեղը հասկըցուր իրեն թէ  
 ինչ երջանկութիւն է մարդուս  
 որ կարենայ ինքզինքը անկարօտ  
 ընել աշխարհիս ունայնութիւն,  
 մեղկութեան և կամ'նաւ վայել  
 չութեանը համար հարկաւոր



սեպուած բաներուն՝ վանք մը  
 քաշուելով. մէկ խօսքով, մէկ  
 դիէն աղքատութեան վարժե-  
 ցուր զինքն ու մէկալ դիէն հաս-  
 կըցուր թէ Վրիստոս Տէրն մեր  
 ինչ երանութիւն խոստացաւ  
 մեզի աս առաքինութեան հա-  
 մար : Ա երջապէս ամէն ջանք ը-  
 րէ որ երբոր աշխարհէս հեռա-  
 նայ՝ մէյմ՝ ալ աշխարհիս ընդու-  
 նայնութեանցը վրայ մէկ ախոր-  
 ժակ մը չմնայ սրտին մէջ : Ա-  
 ռանց չափէ դուրս վտանգաւոր  
 փորձեր ընել տալու, յայտնէ  
 անոր աշխարհիս սուտ հեշտու-  
 թիներուն տակը եղած ծածուկ  
 փշերը . և հասկըցուր իրեն թէ  
 քանի քանի մարդիկ կան աշ-  
 խարհիս մէջ որ ամէն հեշտու-  
 թիւն ունին ու թշուառ են :



ԳԼՈՒԽ ԺԳ .

Դաստիարակ կանանց վրայ :

Վիտեմ թէ շատ մարդկանց  
աս դաստիարակութեան կերպս  
մտացածին ու անգործադրելի  
բան մը պիտի երևնայ : Վիտի  
ըսեն թէ ատ ըսած դաստիարա-  
կութիւնդ 'ի գործ դնելու հա-  
մար՝ կարգէ դուրս բարակա-  
մտութիւն համբերութիւն ու  
խելք պէտք է . ո՛ւր գտնեմ ես  
այնպիսի դաստիարակ կանայք  
որ կարող ըլլան աս բանս հաս-  
կընալ : Այս առաւել ո՛ւր գըտ-  
նեմ այնպիսի դաստիարակներ  
որ ատ ոճին կարենան հետեիլ :  
Տայց կ'աղաչեմ որ այնպիսինե-  
րը նախ աս մտածեն թէ երբոր  
մէկը ձեռք կը զարնէ տղոց աղէկ  
դաստիարակուելուն վրայ գերք



մը շարադրելու, ՚ի հարկէ չի կըր-  
նար անկատար կանոններ տալ.  
ուրեմն աս գրքիս մէջ ալ ամէն  
բանին կատարեալը սորվեցընել  
ուզելնուս համար պէտք չէ որ  
գիրքը անպիտան սեպուի: Իրաւ  
է որ ամէն մարդ ալ, գործա-  
դրութեան որ գայ, չի կրնար մեր  
տուած կանոններովը առաջ եր-  
թալ ու ինչուան նպատակին  
հասնիլ, վասն զի մեր միտքը  
թղթի վրայ գրելը ամենադիւ-  
րին բան է. բայց թէպէտ և ջը-  
կարենայ մէկը ան կատարելու  
թեան հասնիլ՝ անօգուտ բան  
չըլլար գէթ ան կատարելու  
թիւնը ճանչնալը ու անոր հաս-  
նելու համար ջանք ընելը. վասն  
զի անոր մօտիկնալու համար ալ  
ասկէց աւելի լաւ հնարք չկայ:  
Ես ալ կայ որ աս գործքս գրելու  
ատեն միտքս չեմ դրած թէ տը-  
ղոց բնութեան մէջ ամենեին



պակասութիւն չըլլայ, ու կա-  
 տարեալ դաստիարակութիւն մը  
 տալու համար ամէն յաջողու-  
 թիւններ մէկտեղ գան. ընդհա-  
 կառակն ջանացեր եւմ գէշ ու  
 աւրուած բնաւորուէց դարման-  
 ներ տալու. դաստիարակութեց  
 մէջ եղած սովորական պակասու-  
 թիւնները չմոռնալով՝ նայեր եւմ  
 որ զանոնք բոլորովին կամ ըստ  
 մասին շտկելու հնարքները ցու-  
 ցընեմ: Այնպիսի է որ չի կրնար  
 մէկը աս պզտիկ գրուածքիս մէջ  
 երեսի վրայ ձգուած կամ գէշ  
 մեծցած տղայ մը դաստիարա-  
 կելու համար հարկաւոր եղած  
 բաները գտնել. բայց ինչ զար-  
 մանք: Սիթէ բաւական չէ որ  
 մարդ ասոր մէջ այնպիսի պարզ  
 կանոններ գտնէ, որոնց ճիշդ  
 գործադրութիւնը կարենայ տղոց  
 աղէկ դաստիարակութիւն մը  
 տալ: Վիտեմ որ կրնայ ըլլալ



որ աս իմ ըսածներէս խիստ քիչ  
բան 'ի գործ դրուի տղոց դաս-  
տիարակութեանը համար, ու  
ամէն օր ալ փորձը կը տեսնեմ.  
բայց աս ալ կայ որ խիստ շատ  
տղաք աս անհոգութեան համար  
մեծամեծ վնասներ կը կրեն:  
Իմ ցուցըցած ճամբաս ուրջափ ալ  
երկայն երևնայ՝ ամենէն կարճն  
է, վասն զի շիտակ ուզած տե-  
վերնիս կը հանէ. մէկալ ճամ-  
բան՝ որ է տղոց աչքը վախցը-  
նել ու մտքերնին վեր 'ի վերոյ  
կերպով մը հրահանգել, որջափ  
ալ կարճ երևնայ՝ չափէ դուրս  
երկայն է. վասն զի ան ճամբով  
ոչ երբէք կրնայ մէկը հասնիլ  
դաստիարակութեան ճշմարիտ  
վախճանին՝ որ է տղոց միտքը  
համոզել ու առաքինութեան  
սէրը անոնց սրտին մէջ տպաւո-  
րել: Աս ճամբով կրթուած տը-  
ղոց մեծ մասը երբոր ալ դաս-



տիարակութիւննին լմնցուցած  
 կը կարծուի՝ դեռ անոր ծայրն են,  
 և իրենց առջի տարիները նոյն  
 սխալմանց մէջ իյնալէն վերջը,  
 որ շատ անգամ անդարմանելի  
 են, պէտք է որ փորձառուութիւն  
 խելք սորվին ու իրենք իրենցմէ  
 գտնեն ան ամէն սկզբունքներն  
 որ ան նեղիչ ու անկատար դաս-  
 տիարակութեամբ չէին սորված:  
 Աս ալ գիտնալու է որ առջի նե-  
 ղութիւններով որոնք կ'ուզեմ որ  
 դաստիարակները աչքերնին առ-  
 նեն տղոց աղէկութեանը հա-  
 մար, և որ անփորձ մարդկանց  
 անտանելի ու չըլլալու բաներ  
 կը կարծուին, շատ դժնդակ բա-  
 ներէ կ'ազատին ետքը իրենք, ու  
 իրենց համար կը վերցուին ան  
 արգելքներն որ հարեանցի ու  
 խիստ դաստիարակութենէ մը  
 վերջը անյաղթելի կ'ըլլան:

Վերջապէս մտածէ որ աս



դաստիարակութեան ոճը 'ի  
 գործ դնելու համար ոչ այնչափ  
 կարգէ դուրս հանձար ունենալ  
 հարկաւոր է, որչափ աս գրքիս  
 մէջ յիշած մեծամեծ սխալ  
 մունքներէն զգուշանալ: Հաստ  
 անգամ աս միայն ըսեր ենք որ  
 պէտք չէ տղաքը նեղել, միշտ  
 քովերնին կենալու է, դիտելու  
 է զիրենք, վրանին վստահու  
 թիւն ցուցրնելու է, իրենց տը  
 դայական հարցմունքներուն ալ  
 յստակ ու խելացի կերպով պա  
 տասխան տալու է, զիրենք լաւ  
 ճանչնալու համար թողլու է որ  
 իրենց բնութիւնը դուրս ելլէ,  
 և երբոր սխալին կամ պակասու  
 թիւն մը ընելու ըլլան, համբե  
 րութեամբ զիրենք ուղղելու է:

Իրաւունք չէ պահանջելն որ  
 գէշ դաստիարակուհի մը կարե  
 նայ աղէկ դաստիարակուի տալ:  
 Տարակոյս չկայ որ չափաւոր կա



րողութիւն ունեցող անձէ մը  
այնչափ միայն կը պահանջուի որ  
այսպիսի կանոններով ընելիքը  
գիտնայ . բայց գէթ այսչափս  
ալ կրնայ պահանջուիլ որ ունե-  
նայ ուղիղ միտք , տանելի բնա-  
ւորութիւն ու ճշմարիտ երկիւ-  
ղածութիւն :

Մ. յնպիսի դաստիարակուհին  
աս գրուածքիս մէջ բարակ ու  
վերացեալ բաներ չի գտներ . բայց  
թէ որ քանի մը բան իրեն խըր-  
թին երևնայ՝ հարկաւ գէթ գըւ-  
խաւոր բաները կը հասկընայ՝ այն  
բաւական է : Տուր որ շատ ան-  
գամ աս գիրքը կարդա , երբեմն  
ալ հետը մէկտեղ կարդա . հա-  
մարձակութիւն տուր որ հաս-  
կըցած կամ համոզուած տեղե-  
րը կենայ , ու դուն անոնց լու-  
ծումը տուր . ետքը թող որ գոր-  
ծադրութիւնն ընէ . երբոր կը  
տեսնես որ անիկայ տղուն հետ



վարուելու ատեն աս գրքին կա-  
 նոնները կը մոռնայ, անուշու-  
 թեամբ ու ծածուկ ազդարա-  
 րութիւն ըրէ իրեն: Առջի բե-  
 րան աս գործողութիւնը տա-  
 ժանելի բան մը կ'ըլլայ, բայց  
 թէ որ դու տղուն հայրը կամ  
 մայրն ես, ասիկայ քու առաջին  
 պարտքդ է. մէյմըն ալ աս դը-  
 ժուարութիւնը երկար ատեն  
 պիտի չքաշես. վասն զի թէ որ  
 աս դաստիարակը բաւական  
 խելք ու ջանք ունի, մէկ ամ-  
 սուան մէջ աւելի բան կը սորվի  
 փորձով ու ձեր ազդարարու-  
 թեամբը, քան թէ երկայն եր-  
 կայն վարդապետութիւններով.  
 ու շուտ մը ինքիրմէն կը սկսի շի-  
 տակ ճամբէն առաջ երթալու:  
 Աս օգուտն ալ ունիս որ, աս  
 գրքուկիս մէջ պատրաստ կը գրա-  
 նէ անիկայ հարկաւոր սկզբունք-  
 ներուն վրայ տղոց տրուելու խը



րատները • այնպէս որ իրեն ու  
 ըիշ աշխատանք չի մնար՝ բայց է  
 թէ անոնց հետեւիլ : Ասանկ ալ  
 աչքին առջևը պիտի ունենայ  
 դժուար նիւթերու վրայ զրու  
 ցատրու թիւններ , և տղոց հետ  
 խօսելու ատենը ան բաները  
 հասկը ցընէ անոնց : Ասիկայ գործ  
 նական դաստիարակութիւն մըն  
 է որ դաստիարակին ձեռքէն  
 բռնածի պէս կ'առաջնորդէ ա  
 նոր : Արնաս մեծ օգուտ քաղել  
 նաև պատմական քրիստոնէա  
 կանէն որուն վրայ արդէն խօսե  
 ցանք • ան գիրքը շատ անգամ  
 դաստիարակին կարդացուր • մա  
 նաւանդ ջանա որ աղէկ հաս  
 կընայ անոր յառաջաբանը , որ  
 պէս զի լաւ սորվի նոյն սորվեցը  
 նելու ոճը : Իրաւ է որ այսպիսի  
 չափաւոր խելքի տէր անձինք  
 քիչ կը գտնուին , սակայն դաս  
 տիարակութեան համար մաս



նաւոր գործի մը հարկաւոր է .  
 վասն զի կը տեսնենք որ ամե-  
 նապարզ բաներն ալ իրենք ի-  
 րենցմէ չեն ըլլար , ու նոյն բա-  
 ները անկարգ մեծցած մարդ-  
 կանց ձեռքովը՝ միշտ անկարգ  
 կերպով կ'ըլլան : Արեմն նայէ  
 որ կամ տնէդ , կամ երկիրնե-  
 րէդ , կամ բարեկամներուդ քո-  
 վէն , կամ միաբանութենէ մը  
 այնպիսի աղջիկ մը գտնես որ  
 լաւ կըթուելու յարմար երե-  
 նայ . շուտ մը վարժեցուր զին-  
 քը աս պաշտօնին , ու այսպիսի  
 պատուական բան մը ձեռքը  
 յանձնելէն առաջ , փորձի հա-  
 մար քիչ մը ատեն քովդ պահէ  
 զինքը : Այս կերպով ընտրուած  
 հինգ կամ վեց դաստիարակ կա-  
 նայք՝ կրնան քիչ ատենի մէջ  
 ուրիշ շատ դաստիարակներ ալ  
 իրենք կըթուելու : Արեւս անոնց  
 մէջ մէկ քանին բանի չգան .



բայց այնչափ բազմութեան մէջ  
կրնան գտնուիլ բանի մը հոգի  
որ խիստ աղէկ բանի գան, ու  
աս սաստիկ կարօտութիւնը չը-  
քաշուի՝ ինչպէս որ հիմա կը  
տեսնենք: Առսակրօն և աշ-  
խարհական կանանց միաբանու-  
թիւններն ալ որ իրենց կանոն-  
ներուն ուժովը աղջիկ տղաք  
կրթելու հետ կ'ըլլան, կրնան  
աս բանիս ծառայել, այսինքն  
իրենց աշակերտացը համար վար-  
ժապետուհիներ կրթել:

Սէպէտ և աղէկ դաստիա-  
րակ կին մը գտնելը շատ դժուար  
բան է, սակայն անկէց ալ աւել-  
ի դժուար է այնպիսի ծնողք  
գտնելը որ կարգ կանոն պահելը  
գիտնան: Ասան զի ամէն բան  
անօգուտ կ'ըլլայ թէ որ իրենք  
ալ աս աշխատութեան գործա-  
կից չըլլան: Ամէն բանի հիմն  
աս է որ իրենք իրենց զաւկրնե-



րուն ուղիղ սկզբունք և բարի  
 օրինակ տան . որ ասիկայ խիստ  
 քիչ տներու մէջ կը գտնուի .  
 բոլոր մէկաշնոնց մէջ եղածը ու  
 ըիշ բան չէ , բայց եթէ շիո  
 թութիւն , անդադար փոփոխու  
 թիւն ու ծառաներու խառ  
 նափնդոր բազմութիւն մը , որ  
 ծռած խելքով ու տէրերուն մէջ  
 կռիւ ձգող անձինք են : Ան ինչ  
 սոսկալի դպրոց կ'ըլլայ ան տու  
 նը սողոց համար : Ատ անգամ  
 այնպիսի մայր մը որ կեանքը խա  
 դի , թէատրոնի , և անվայել  
 խօսակցութիւններու մէջ կ'ան  
 ցընէ , կը տեսնես որ ծանր կեր  
 պով մը կը նստի գանգատ կ'ընէ  
 թէ իր աղջիկները կըթելու հա  
 մար աղէկ դաստիարակուհի մը  
 չի գտներ : Աայց դաստիարակու  
 թենէն ինչ շահ աղջկանց՝ երբ  
 որ այնպիսի մայր ունին իրենց  
 օրինակ : Ատ անգամ ալ ծը



նողք կը տեսնենք որ սրբոյն ( )  
 գոստինուսի ըսածին պէս , իրենց  
 տղաքը թէատրոնի և ուրիշ  
 այնպիսի զուարճութիւններու  
 կը տանին՝ որոնցմով հարկաւ կը  
 պաղին համեստ ու զբաղած  
 կեանք անցընելու փափաքէն ,  
 թէպէտ և ծնողք ուզեն անոնց  
 այնպիսի կեանք անցընել տալ .  
 ասանկով ծնողք իրենց ձեռքովը  
 զաւկրներնուն առողջարար սը-  
 նունդին հետ թոյն կը խառնեն :  
 Այսօր ծնին նայիսնէ միշտ իմաս-  
 տութեան վրայ է . սակայն տը-  
 ղոց թռչական անհաստատ ե-  
 ղեակայութիւնը սրտաշարժ տե-  
 սարաններու ու երաժշտութե-  
 ձայներուն վարժեցընելով՝ այն-  
 պէս կը ցնցեն . որ անկէց վերջը  
 չեն կրնար ինչպէս որ պէտք է  
 բանի մը ետեւէ ըլլալ : Արեւք  
 են որ կիրքերը ախորժելի կը-  
 նեն անոնց ու անմեղ զուարճու-



Թիւնները կ'անհամարեն : Ան-  
կէց ետքն ալ ծնողք կ'ելլեն  
կ'ուզեն որ դաստիարակու թիւնը  
յաջողի , ու մտքերնին դրած են  
թէ դաստիարակու թիւնը խիստ  
ու անտանելի բան կ'ըլլայ՝ թէ  
որ այսպէս չարն ու բարին խառն  
չըլլայ մէջը : Այս ըսել է թէ որ  
դուոցս աղէկ դաստիարակութի  
կ'ուզեմ տալ ըսելը սուտ պար-  
ծանք մըն է միայն , որովհետե  
ամենեւին անոր համար նեղու-  
թիւն յանձն առնելու ու գէթ  
խիստ հարկաւոր կարգերուն հե-  
տեւելու միտք չունին :

Խօսքերնիս լմնցրենք Առ-  
դումն Ամաստնոյն խելացի կնկան  
մը համար ըրած նկարագրու-  
թեամբը . « Խելացի ու աշխա-  
տասէր կին մը որ գտնուի՝ ազ-  
նիւ քարերէն ալ աւելի պա-  
տուական է : Արկանը սիրտը  
անոր վրայ վստահ է , և ոչ



77 երբէք առանց աւարի տուն կը  
 77 դառնայ : Մենայն աղէկու  
 77 թեան մէջ իր երկանը միշտ  
 77 գործակից կ'ըլլայ , ու ոչ եր  
 77 բէք չարիք կը գործէ : Մուրդ  
 77 ու կտաւ կը գտնէ , իր ձեռքո  
 77 վը կը բանի գեղեցիկ բաներ  
 77 կը շինէ , ու վաճառականի նա  
 77 ւու մը պէս հեռաւոր տեղերէ  
 77 գանձեր կը ժողովէ : Մաւո  
 77 տանց կանուխ կ'ելլէ , ընտա  
 77 նեացը կերակուր՝ աղախիննե  
 77 ռուն ալ աշխատանք կը բաժ  
 77 նէ : Վեղեցիկ արտ մը որ տես  
 77 նէ՝ կը գնէ , ու իր ձեռքին ար  
 77 դիւնքովը ան երկիրը կը լեցը  
 77 նէ : Մէջքը գօտի կապած ,  
 77 թւերը սօթտած կ'աշխատի ,  
 77 վասն զի աշխատանքին անուշ  
 77 համը առեր է . իր ճրագը բո  
 77 լոր գիշերը կը վառի ու չմարիր :  
 77 Ձեռքը անդադար աշխատու  
 77 թեան հետ է , մատուրներն



77 ալ առանց ճանճրանալու իլիկ  
 77 կը դարձրնեն : Չեռքը բաց է  
 77 աղքատաց ողորմութիւն տա-  
 77 լու , և իրեն արդիւնքէն տը-  
 77 նանկին ալ բաժին կը հանէ :  
 77 Արիկը դուրս տեղ մը ուշա-  
 77 նալու ալ ըլլայ՝ տանը համար  
 77 ամենեին հոգ չընեն : Տուր  
 77 իր տնեցիքը երկերկու ձեռք  
 77 հագուստ ունին : Արկանը հա-  
 77 մար ազնիւ ու բարակ կտաւ և  
 77 ծիրանի պատրաստեր է , իրեն  
 77 համար ալ վերարկուններ : Ա-  
 77 մէնքը մատով կը ցուցրնեն ա-  
 77 նոր երիկը դռներուն մէջ , այս-  
 77 ինքն երբոր իր երկրին ծե-  
 77 րերուն և ուրիշ պատուաւոր  
 77 բնակիչներուն հետ ժողովքի  
 77 նստած ըլլայ : Ատաւներ գոր-  
 77 ծեր ու վերարկուններ շինեն՝  
 77 Քանանացւոց կը ծախէ :  
 77 Տերանը չափով ու խելացի  
 77 խօսքերով կը բանայ , խօսքի-



րուն մէջն ալ գեղեցիկ կարգ  
 մը դրած է : Այժմն ու մեծ-  
 վայելչութիւնը իրեն հագուս-  
 տի պէս եղած են , ու կենացը  
 ետքի օրերը ուրախ պիտի ըլ-  
 լայ : Ար տանը ամէն ճամբա-  
 ներն ալ գոց ու զգուշաւոր  
 են , և պարապ կենալով ոչ  
 երբէք հաց կ'ուտէ : Արած  
 ողորմութիւններովը զաւկը-  
 ները աղէկ կը մեծնան . երիկն  
 ալ կը գովէ զինքն ու կ'ըսէ .  
 Շատ աղջիկներ հարստու-  
 թիւն դիզեր ու մեծցեր են ,  
 բայց դու ամենէն ալ վեր ան-  
 ցար : Քուճ զարդարանք ու  
 սուտ գեղեցկութի չկայ վրադ .  
 վասն զի խելացի ու բարեպաշտ  
 կինը օրհնէնք կը լսէ , ինչպէս  
 որ ինքն ալ երկիւղած մարդի-  
 կը կը գովէ : Ար շրթանց պը-  
 սուղը տուէք իրեն , ու երիկն  
 ալ դռներուն մէջ գովեցէք .



„ վառն զի ամէն բանի մէջ էրի  
 „ կը կնոջը ճամբայ պիտի ցու-  
 „ ցընէ , և ինչուան ետքը յա-  
 „ ջողութիւն պիտի գտնեն ” \* :

\* « Կին ժրագլուխ եթէ գտանիցի , պա-  
 տուականագոյն է այնպիսին քան զականա  
 պատուականս : Աստահ է 'ի նա սիրտ  
 առն իւրոյ . այնպիսին աւարաց երբէք  
 ոչ կարօտացի : Գործակից է առն իւ-  
 րում ամենայն բարեաց և կենաց՝ և ոչ  
 չարեաց : Գտեալ ասը և կտաւ՝ արար ա-  
 իօթս պիտանիս ձեռօք իւրովք . և եղև  
 իբրև զնաւ շահաբեր . 'ի հեռաստանէ  
 ժողովէ իւր գանձս : Յառնէ ընդ արշա-  
 լուրչս , և տայ կերակուր ընտանեաց և  
 գործ նաժշտաց : Տեսանէ զանդ գեղեցիկ  
 և գնէ զնա , և 'ի պտղոյ ձեռաց իւրոց  
 գործէ զերկիր : Գօտի ամեալ հաստա-  
 տութեամբ ընդ մէջ իւր՝ մտեաց զբա-  
 ղուկս իւր 'ի գործ . և ճաշակեաց՝ զի  
 քաղցր է գործել , և ոչ շիջանի ճրագ 'ի  
 նմանէ զամենայն գիշեր : Զձեռս իւր  
 ձգէ յօգուտ , և զմատունս իւր անձան-  
 ճրոյթ տայ իւրոյ : Զձեռս իւր ընդար-  
 ձակեաց աղքատաց , և կարկառ պտուղ  
 տնանկին : Ոչ ինչ հոգայ 'ի տանէ կող-  
 մանէ այր նորա յորժամ ուրեք յա-  
 միցէ . զի ամենեքին որ զնովաւ են , զգե-



Թեպէտ և հիմակուան մեր  
սովորութիւններուն մեծ տար-

ցեալ են կրկին պատմութեանս: Արար  
առն իւրում բեհեզս և ծիրանիս, և ան-  
ձին իւրում արկանելիս: Եւ երևելի 'ի  
դրունս այր նորա, յորժամ նստիցի 'ի  
ժողովրդեան 'ի մէջ ծերոց և բնակչաց  
երկրի: Կտաւս արար և վաճառեաց, և  
արկանելիս Քանանացոց: Չբերան իւր  
եբաց չափով և իմաստութեամբ, և կարգ  
եղ լեզուի իւրում: Չզօրութիւն և ըզ-  
մեծվայելչութիւն զգեցաւ. և ուրախ ե-  
ղև յաւուրս յետինս: Պարկեշտ են ճա-  
նապարհք տան նորա. հաց դատարկու-  
թեան ոչ եկեր: Եւ ողորմածութիւնք  
նորա կանգնեցին զորդիս նորա և մեծա-  
ցուցին: Եւ այր նորա գովէ զնա և ասէ.  
Բազում դատերք ստացան զմեծութիւն,  
բազումք արարին զօրութիւն. բայց դու  
առաւել եղեր և անցուցեր զամենե-  
քումք: Սուտ հաճութիւն և ընդու-  
նայն գեղ կնոջ ոչ գոյ 'ի քեզ, զի կին  
իմաստուն և բարեպաշտն օրհնեացի:  
Չերկիւղածս Տեառն օրհնեացէ նա. տուք  
նմա 'ի պողոյ շրթանց նորա. և գովեացի  
'ի դրունս այր նորա: Չի ճանապարհք  
առնն առաջի երեսաց իւրոց երթիցեն,  
և աջողեացին յաւիտեանս յաւիտենից,):



բերութեանը, աս խօսքերուս  
 համառօտութիւնը ու զուրցուած  
 քին կենդանութեանը համար  
 առջի բերան մութ ու խրթին  
 կ'երևնայ աս լեզուն, բայց թէ  
 որ լաւ քննելու ըլլանք, կը տես-  
 նենք որ աս խօսքերուս մէջ կեն-  
 դանի ու պարարտ ոճ՝ մը կայ որ  
 լսողը կը զմայլի: Նայց ես կը  
 բաղձամ որ կարդացողները ա-  
 լելի աս խօսքերուս մէջ անոր  
 նային որ Սողոմոնի պէս իմաս-  
 տուն մարդ, մանաւանդ թէ հո-  
 գին սուրբ է աս խօսքերս ըստ-  
 ղը, որ հարուստ ու ազնուական  
 կնկան մը վրայ այսչափ զարմա-  
 նալի կերպով կը նկարագրէ բա-  
 ըուց պարզութիւնը, լաւ տըն-  
 տեսութիւնն ու աշխատասիրու-  
 թիւնը:



Ազնուական տիկնոջ մը իր  
աղջկան դաստիարակութեանը  
համար խրատ :

Որովհետեւ հրամանքդ ուզեցիր,  
տիկին, ահա կը գրուցեմ  
իմ կարծիքս թէ ինչ կերպով  
կրնաս աղէկ դաստիարակութի  
տալ աղջկանդ :

Թէ որ շատ աղջիկ տղաք ու  
նենայիր, շատ նեղութիւն կը  
քաշէիր, որովհետեւ գործողութիւններդ  
կը հարկադրեն զքեզ  
ուզածէդ աւելի արտաքին բաներու  
ուշ դնելու : Նշանկ ըլլալը  
նէ՛ կրնայիր ընտրել մէկ աղէկ  
վանք մը, ուր որ թոշակաւոր  
աշակերտուհեաց վրայ լաւ հոգ  
կ'ըլլայ : Բայց որովհետեւ մէկ  
հատիկ միայն աղջիկ ունիս մեծ  
ցընելու և Նստուած քեզի կարողութիւն  
տուեր է անոր հո-



գը վրադ առնելու, կարծեմ որ  
 հրամանքդ որ և իցէ վանքէ ա-  
 ւելի կրնաս լաւ դաստիարակու-  
 թիւն տալ անոր. վասն զի տա-  
 րակոյս չկայ որ մէկ իմաստուն,  
 որդեսէր ու բարեպաշտ մօր մը  
 աչքերը ուրիշներուն չտեսած-  
 ներն ալ կը տեսնեն: Արովհե-  
 տև աս կատարելութիւններն  
 ունեցող խիստ քիչ անձինք կը  
 գտնուին, մայրերուն համար ա-  
 պահով ճամբան ան է որ վան-  
 քերու յանձնեն իրենց աղջկանց  
 կրթութեանը հողը. վասն զի  
 շատ անգամ զանոնք կրթելու  
 համար պէտք եղած գիտու-  
 թիւնները իրենք չեն ունենար.  
 կամ թէ ունենան նէ ալ իրենց  
 ծանր ու քրիստոնէական վար-  
 քովը չեն հաստատեր խօսքեր-  
 նին, որ առանց ասոր խիստ զար-  
 մանալի խրատներն ալ շահ մը  
 չեն ըներ. վասն զի ինչ բան որ



մէկ մայր մը կրնայ ըսել աղջկա-  
 նը՝ ամէնն ալ անօգուտ կ'ըլլան՝  
 երբոր աղջիկը անդադար նոյն  
 բաներուն հակառակը կը տեսնէ  
 մօրը վրայ : Մայց քու բանդ ա-  
 նանկ չէ . քու խելքդ միտքդ Մ-  
 տուծոյ ծառայել է . բարեպաշ-  
 տու թիւնը առջի հոգդ է , և ինչ  
 որ աղջիկդ վրայ գործով կը  
 տեսնէ՝ հարկաւ ան կը տրվի .  
 ասոր համար ես հասարակաց  
 կանոնէն զքեզ դուրս կը հա-  
 նեմ , ու քու տուած դաստիա-  
 րակութիւնդ ամէն վանքերուն  
 տուածէն ալ վեր կը սեպեմ :  
 Արիչ մեծ օգուտ մըն ալ ունի  
 աղջկանդ քեզմէ դաստիարա-  
 կութիւնը : Ասան զի թէ որ վան-  
 քին կարգը կանոնը տեղը չէ ,  
 աղջիկդ կը տեսնէ որ հոն փա-  
 ռասիրութիւնը պատուոյ մէջ է .  
 որ աղջկան մը համար ասկէց ա-  
 լելի բարակ թոյն չկրնար ըլլալ :



Հոն կը տեսնէ որ աշխարհիս  
 վրայ զմայլելով մը զուրցուած  
 խօսքեր կ'ըլլան . և քան մը չկայ  
 այնչափ մնասակար տպաւորու-  
 թիւն ընող՝ ինչպէս աս աշխար-  
 հիս վրայ զարմանալով խօսիլը ,  
 ու անոր զուարճութիւնները մեծ-  
 ցընելը՝ առանց ցուցընելու անոնց  
 պակասութիւններն ու դառնու-  
 թիւնները : Աշխարհս մարդուս  
 աչքերուն ան՝ատենը միայն մեծ  
 քան կ'երևնայ՝ երբոր հեռուանց  
 նայի , մօտէն տեսած , ու անոր  
 խաբէութիւնները առաջուց հաս-  
 կըցած չըլլայ : Անոր համար ա-  
 լելի կը վախնամ այսպիսի աշ-  
 խարհային վանքէ մը՝ քան թէ  
 քուն աշխարհէս : Անդ հակա-  
 ոակն , թէ որ վանք մը եռան-  
 դուն ու կանոնապահ է , ազնուա-  
 կան աղջիկ տղան հոն կը մեծ-  
 նայ առանց ամենեւին աշխարհիս  
 քաները գիտնալու . տգիտութի



մը՝ որ իրաւցընէ երջանկու թիւն  
 է՝ թէ որ ինչուան ետքը այնպէս  
 մնայ . բայց թէ որ ան աղջիկը  
 վանքէն ելլէ ու տարիքը քիչ մը  
 առած իր հօրը տունը երթայ ,  
 ուր ամէն մարդ կ'ելլէ ու կը մըտ  
 նէ , շատ վտանգաւոր բան կ'ըլ  
 լայ անոր կենդանի երեւակայու  
 թեանը յանկարծ այնպէս տակ  
 հուււրայ . ԸԼԼԱԸ : Ա՛յն աղջիկ  
 տղայ մը որ աշխարհէս հեռու  
 մնացեր է՝ միայն զանիկայ ճանչ  
 նալուն համար , և սրտին մէջ  
 առաքինութիւնը դեռ խոր ար  
 մատներ չէ արձրկած , դիւրաւ  
 կրնայ կարծել թէ շատ զարմա  
 նալի բաներ կան եղեր որ իրմէ  
 ծածկեր են : Ա՛յնքէն կ'ելլէ  
 այնպէս , ինչպէս մէկ մարդ մը  
 որ մէկ խոր ու մութ այրի մը  
 մէջ մեծցուցած ըլլալով՝ մէկէն  
 'ի մէկ լուսաւոր տեղ մը հանեն  
 զինքը : Ա՛յն անակնկալ փոփո



խուժին ու ան փայլումը որուն  
 ամենեին չէր վարժած՝ աչուրնե-  
 ըր սաստիկ կը խտտողացրնէ :  
 Շատ աւելի լաւ է որ աղջիկ  
 տղան կամաց կամաց իր բարե-  
 պաշտ ու խոհեմ մօրը քով վար-  
 ժի աշխարհիս բաներուն, ան ալ  
 իրեն տեսնելու պատշաճ բանե-  
 ըր միայն ցուցրնէ, և իմացրնէ  
 թէ երբ անոնք անկարգ կրնան  
 ըլլալ. և օրինակովը հասկըցրնէ  
 անոր թէ հարկաւոր եղած ա-  
 տենը միայն գործածելու է զա-  
 նոնք, ան ալ չափաւորուք : Մա-  
 ղեկարգ վանքերուն տուած դաս-  
 տիարակուժեանը վրայ ես շատ  
 մեծ համարում ունիմ. բայց ա-  
 լելի ապահով կը սեպեմ աղէկ  
 մօր մը դաստիարակութիւն՝ երբ  
 որ ատեն ունենայ աս բանիս  
 ուշ դնելու : Արեմն խօսքս հոս  
 կը բերեմ թէ աւելի լաւ է որ  
 աղջիկդ քովդ պահես քան թէ



աղէկ վանք մը դնես : Մայց քիչ  
մայր կայ որուն աս խրատս կա-  
րենայ տրուիլ :

Իրաւ է որ աս դաստիարակու-  
թիւր մեծամեծ վտանգներ կըր-  
նայ ունենալ թէ որ մեծ զգու-  
շութեամբ չնայիս թէ ինչ տե-  
սակ կնիկ մարդիկ աղջկանդ քով  
պիտի մօտենան : Տնական ըզ-  
բաղմունքներդ ու վայելչութե-  
համար մէկուն մէկալին այցե-  
լութե երթալներդ չեն թողուր  
քեզի որ զաւակդ միշտ աչքիդ  
առջևն ունենաս : Աղէկ կ'ըլլար  
որ ըստ կարի քովէդ ճեռանար .  
բայց հարկաւ ամէն տեղ չես  
կրնար զինքը հետդ տանիլ : Թէ  
որ թողուս զինքը թեթեամիտ ,  
անկարդ ու անխոհեմ կանանց  
մէջ , ու թը օրուան միջոցը այն-  
չափ վնասներ կ'ընեն իրեն որ  
դուն տարիներով այնչափ օգուտ  
չես կրնար ընել : Ան անձինքը



իրենք սովորաբար անկիրթ ըւ-  
 լալով քու զաւակդ ալ իրենց  
 պէս անկիրթ կ'ընեն : Մէջեր-  
 նին բերաններնուն եկածը հա-  
 մարձակ դուրս կուտան տղուն  
 առջևը , ան ալ ամէն բան կը  
 դիտէ և կը կարծէ թէ ինքն ալ  
 պէտք է ընէ . շատ մըն ալ ծուռ  
 ու մնասակար սկզբունքներ կը  
 սորվեցընեն իրեն : Տղուն առ-  
 ջևը բամբասանք կ'ընեն , սուտ  
 կը խօսին , թեթևամտութեամբ  
 կասկածներ կ'ընեն , փուճուճուճ  
 կռիւներ կ'ընեն , մէկմէկու դէմ  
 նախանձ կը ցուցընեն , թշնամու-  
 թիւններ կ'ընեն , այլանդակ ու  
 ծիծաղական բնաւորութիւններ  
 կ'երևցընեն , երբեմն ալ կեղ-  
 ծաւորեալ կամ ծուռ ջերմեռան-  
 դութիւններ կ'ընեն , առանց  
 ամենեւին աս մեծամեծ պակա-  
 սութիւնները շտկելու : Մէկ  
 կողմանէ ալ այսպիսի ցած ան-



ճինք տղուն սիրելի ըլլալու հա-  
 մար՝ փնասակար զուարճախօ-  
 սութիւններ ու շողոքորթու-  
 թիւններ ընելէն ետ չեն կե-  
 նար : Արաւցընէ մէկ չափաւոր  
 վանքի մը դաստիարակութիւնը  
 շատ աւելի աղէկ է քան թէ  
 այսպիսի տնական դաստիարա-  
 կութիւնը : Վայց ես կը համա-  
 ըիմ թէ դուն զաւակդ քովէդ  
 չես հեռացընէր՝ բայց եթէ  
 խիստ հարկաւոր ատեններ . ան-  
 ալ՝ այնպիսի անձի մը յանձնե-  
 լով զինքը որ քեզի պէս հոգ ու-  
 նենայ վրան : Ան անձը պէտք է  
 որ բաւական խելք ու առաքի-  
 նութիւն ունենայ , որպէս զի  
 կարենայ քաղցր իշխանութիւն  
 մը բանեցընել , ու անով մէկալ  
 կանայք իրենց պարտքէն դուրս  
 չելլեն . հարկաւոր եղած ատենը  
 խրատէ տղան՝ առանց անոր ա-  
 տելի ըլլալու , որ ուրիշ ատենի



Համար պէտք ըլլալու բաները  
 քեզի խնայել: Վիտեմ որ այս  
 պիտի կին մը գտնելը դիւրին  
 բան չէ. բայց գլխաւոր ջանքդ  
 պիտի ըլլայ այնպիսի կին մը փնտ  
 տուել, ու գտնելէն վերջն ալ  
 պէտք եղած ծախքին չխնայել,  
 որ կարենայ գոհ սրտով քովդ  
 կենալ: Արնայ ըլլալ որ վրան  
 պակասութիւններ ալ գտնուին.  
 բայց գոհ ըլլալու է անոր էա  
 կան կատարելութիւններովն ու  
 անոնց հետ խառնուած պակա  
 սութեանցը համբերելու է: Ա  
 ռանց այսպիսի անձի մը օգնու  
 թեան՝ չես կրնար վախճանիդ  
 հասնիլ:

Վու աղջկանդ ցուցըցած բա  
 րակամտութիւնը, յաջողակու  
 թիւնն ու խելքի բացութիւնը  
 կը վախցընէ զիս որ ջրայ թէ  
 վերջը թեթեւամիտ ու չափա  
 զանց հետաքրքիր ըլլայ: Նրա



մանոց թողտուութեամբը քանի  
մը բան ըսեմ, տիկին, որ քեզի  
չեն դպչիր՝ որովհետև քեզի չեն  
ալ յարմարիր: Սովորաբար կա-  
նայք աւելի մտաց զարդարանք-  
ներուն ետևէ կ'ըլլան քան թէ  
մարմնոյ զարդերու: Անոնք որ  
կարողութիւն ունին ուսում սոր-  
վելու, և յոյս ունին անով անուն  
հանելու, աւելի հոգ ունին գրը-  
քերուն քան թէ զարդարանք-  
ներուն վրայ: Վիչ մը կը ծած-  
կեն իրենց գիտութիւնը. բայց  
բոլորովին չեն ծածկեր՝ որպէս  
զի համեստութեան հետ իրենց  
կարողութիւնն ալ երևնայ: Աւ-  
րիշ խոշոր ունայնամտութիւն-  
ները դիւրաւ կը շտկուին. վասն  
զի մարդ կ'իմանայ զանոնք ու  
կ'ուղղէ իբրև թեթև բնաւո-  
րութիւն նշան: Բայց հետաքրք-  
քիր կին մը որ կը պարծի թէ  
շատ բան գիտէ՝ միտքը կը դնէ



Թէ կանանց մէջ իրեն պէս խե-  
 լացի չկայ, ուրիշ կանանց զուար-  
 ճութիւններն ու փառասիրու-  
 թիւնները արհարամարհելը իրեն  
 սովորական բանն է. ինքզինքը  
 ամէն բանի մէջ հաստատուն կը  
 կարծէ, և միտքը դրածէն ոչ  
 երբէք ետ կը կենայ: Այնպիսին  
 սովորաբար ամէն բան կէս կը  
 գիտնայ, սորված բանովը լուսա-  
 ւորուելու տեղ՝ ունեցած խելքն  
 ալ կը կորսընցընէ. ինքզինքը կը  
 խաբէ թէ ամէն բան գիտէ, ամ-  
 մէն բանի վրայ վճիռ կուտայ,  
 իր չգիտցած նիւթին վրայ եր-  
 կու հոգի վէճ կ'ընեն, շուտ մը  
 մէկուն դէմ մէկալին կողմը կը  
 բռնէ, ինչուան նաև հաւատոյ  
 խնդիրներուն մէջ. անոր համար  
 է որ ամէն նոր եղած աղանդներ  
 կանանց ձեռքովն ու օգնութիւնը  
 շատ տարածուեր են. Անայք  
 խօսակցութեան մէջ շատ ճար-



տասան էն , ուրիշներու դէմ ալ  
 ծածուկ խօսիլ շատ կը սիրեն :  
 Սէտք չէ այնչափ վախնալ պար-  
 ծենկոտ կանանց ըրած խոշոր  
 պարծանքներէն՝ որչափ ծանրու-  
 թիւն ծախող ու խորամանկ կա-  
 նանցմէ , որ խելացի երևնալու  
 ու մեծ մարդու տեղ դրուելու  
 մտքով՝ իմաստակուծեան կը  
 զարնեն : Արեմն գլխաւոր ջանքդ  
 աս պիտի ըլլայ որ աղջիկդ ան-  
 դադար այսպիսի բաներէ հեռու  
 խոհական պարզութեան մը մէջ  
 պահես : Հաւատոյ բաները այն-  
 չափ միայն գիտնայ որ կարենայ  
 անոնց հաւատալ ու գործով կա-  
 տարել՝ առանց ամէն բանի պատ-  
 ճառները փնտռելու : Սէտք է  
 որ Ալեղեցւոյ ըսածէն դուրս  
 չելլէ , ու ամենեին չնայի այն-  
 պիսի քարոզիչներու խօսքին՝ ո-  
 ղոնց վրայ նորաձեւութեան կաս-  
 կած մը կայ : Ար խոստովանա-



Հայրը այնպիսի անձ մը պէտք է  
 ըլլայ որ ամենեւին աս կամ ան  
 կողմի մարդկանց կուսակցութի  
 չընէ : Այնպէս է փախչի այնպիսի  
 կանանց կենցաղավարութենէն ,  
 որ յանդգնութեամբ քրիստո-  
 նէական վարդապետութե քա-  
 ներուն կը խառնուին ու ա-  
 նոնց վրայ կը սկսին վճիռներ  
 տալ , և հասկընայ թէ անոնց ը-  
 րածը ինչ անվայել ու վնասա-  
 կար համարձակութիւն է : Ար-  
 գիլած գրքերը կարդալէն սաս-  
 տիկ պիտի վախնայ՝ առանց քրն-  
 նելու թէ արդեօք ինչ բանի  
 համար արգիլեր են : Վորվի իր  
 վրան ամենեւին չվստահանալ , ու  
 վախնայ հետաքրքրութեան ու  
 յանդգնութեան որոգայթնե-  
 ին . ամենայն խոնարհութեամբ  
 ընէ աղօթքը առ Աստուած , աղ-  
 քատ ըլլայ հոգևով . ստէպ ինք-  
 զինքը ժողովուրտէ , անյապաղ



Հնազանդի, թողու որ իմաս-  
 տուն ու մտերիմ անձինք զինքը  
 խրատեն նաև ամենաստոյգ կար-  
 ծած բաներուն մէջ. և աւելի  
 ուրիշներուն խօսածին մտիկ ընէ  
 քան թէ ինքը խօսի: Աւելի  
 կ'ընտրեմ որ մատակարարիդ հա-  
 շիւները սորվի՝ քան թէ աս-  
 տուածաբաններու շնորհաց վրայ  
 հանած խնդիրները: Այնպիսի  
 բաներ բանելու վարժեցուր զին-  
 քը, որ թէ տանդ մէջ բանի գայ  
 և թէ ինքը խելքը անոր տալով՝  
 աշխարհիս բաներուն ետեւէն  
 չիյնայ. բայց ամենեւին մի թո-  
 ղուր որ աստուածաբանու թեան  
 վրայ մտածէ, որով իր հաւատքը  
 կրնայ փնասուիլ: Ամէն բան ան-  
 օգուտ է թէ որ ինքը յամա-  
 ուութեամբ չուզէ իմաստակու-  
 թիւնը ձեռքէ թողուլ, ու տնա-  
 կան բաներէ պաղի: Երագլուխ  
 կինը մանած կը մանէ, իր տա-



նը բաներուն հետ կ'ըլլայ, լուս-  
թիւն կը պահէ, կը հաւատայ  
ու կը հնազանդի. ոչ երբէք Ա-  
կեղեցւոյ դէմ կը խօսի:

Վնենեին չեմ տարակուսիր,  
տիկին, որ տեղը եկած ատենը  
չես մոռնար աղջկանդ ըսելու թէ  
որչափ անվայել ու անկարգ բան  
է իմաստակ կանանց ըրածը, որ  
պէս զի աղջիկդ ան վտանգէն  
ազատ մնայ: Տայց որովհետեւ  
մօր մը իշխանու թիւնը կրնայ կա-  
մաց կամաց ուժը կորսնցընել,  
ու իրեն իմաստուն խրատներն  
ալ միշտ չեն կրնար աղջիկ տը-  
ղու մը միտքը համոզել ու իր ու-  
զածէն զինքը ետ կեցընել, կը  
փափագէի որ քեզի բարեկամ  
տիկիններ՝ որոնց աղէկու թեանը  
աշխարհք վկայ է, աղջկանդ դի-  
մացը առանց իմացընելու թէ ի-  
րեն համար է ըսածնին՝ խօսին  
քեզի հետ պարսաւելով կանանց



մէջէն ումանց ան թեթեւ ու ծաղ-  
 րական բնաւորութիւնը որ ի-  
 մաստուն երեւալ կ'ուզեն, և  
 հաւատոյ նիւթերու մէջ կող-  
 մաստիրութիւն մը կը ծախեն  
 նոր նոր աղանդներու: Վս հե-  
 աւոր խրատները կարծեմ թէ  
 աւելի օգուտ կ'ընեն իրեն՝ քան  
 թէ ան ամէն խօսքերն որ առան-  
 ձին և ուղղակի կ'ըսես:

Հագուստի կողմանէ կ'ուզեմ  
 որ ջանաս աղջկանդ սրտին մէջ  
 ճշմարիտ համեատութեան կամ  
 չափաւորութե՛ն ախորժակը հաս-  
 տատել: Վս յնպիսի այլանդակ  
 խելքով կանայք կան որ չափա-  
 ւոր կամ միջակ զարդարանքն  
 ալ անտանելի քան մը կ'երևնայ  
 իրենց. ասոնք աւելի կը սիրեն  
 սաստիկ պարզութիւն մը ունե-  
 նալ, որով պերճաստիրութենէ  
 մէկալ ծայրը կ'անցնին՝ քան թէ  
 միջին ճամբայ մը բռնել. և աս



միջին ճամբան կ'արհամարհեն  
 իբրև անհամ վիճակ մը՝ և բան  
 չճանչցողներու պակասութիւն :  
 Սակայն իրաւցրնէ դժուար բան  
 է գտնել այնպիսի իմաստուն ու  
 իր չափը գիտցող անձ մը որ աս  
 երկու ծայրէն ալ զգուշանայ ,  
 ինչ բան որ վայելուչ է՝ ան ընէ ,  
 և աս չափէն դուրս չելլէ : **ՆՐՆ**  
 մարիտ իմաստուն անիկայ է որ  
 կը նայի որ կարասեաց , ծառա-  
 ներուն ու հագուստներուն վրայ  
 ուրիշներուն աչքին զարնող բան  
 չգտնուի՝ ոչ աղէկ և ոչ գէշ :  
 Իսէ աղջկանդ , այնչափ աղէկ  
 հագուէ որ ուրիշները գթեզ չը-  
 մեղադրեն թէ անկիրթ ախոր-  
 ժակով աղտոտ ու անփոյթ անձ  
 մըն էս . բայց նայէ որ դրսուանց  
 վրադ ամենևին շինծու աւելորդ  
 զարդարանք կամ պերճութիւնը  
 չան չերևնայ . անով կը ցուցրնես  
 թէ կահ կարասիներէն , կառ-



քերէն ու հագուստներէն վեր  
 խելք ու առաքինութիւն կայ  
 քովդ . զանոնք կը գործածես ու  
 ոչ երբէք անոնց գերի կ'ըլլաս :  
 Հասկըցուր իրեն թէ մարդկանց  
 վիճակներն իրարու հետ խառ-  
 նող մէկ ընողը զեղխութիւնն է ,  
 որով ցածազգի մարդիկ շուտ կը  
 հարըստնան անպատշաճ ճամ-  
 բաներով , ու ազնուատոհմ ան-  
 ճանցմէ վեր կ'անցնին կը բար-  
 ճրանան . աս անկարգութիւնն  
 է որ կ'ապականէ ազգի մը բնա-  
 ւորութիւնը , ագահութիւնը կը  
 գրգռէ , խարդախութեան ու  
 ցածութեան կը վարժեցընէ և  
 կամաց կամաց արդարութեան  
 հիմունքը կը քանդէ : Ատոք է  
 աս ալ հասկընայ թէ մէկ կին մը  
 որչափ ալ մեծ հարստութեամբ  
 տունը լեցընէ , քիչ ատենի մէջ  
 կը կործանէ զանիկայ՝ թէ որ  
 զեղխութիւն մտցընէ հոն , վասն



զի զեղխութեան ու շռայլութե  
 հարստութի չդիմանար : Միան  
 գամայն վարժեցուր զինքը որ  
 աղքատաց քաշած սոսկալի խեղ  
 ճութիւններուն կարեկցի , և ի  
 մանայ թէ որչափ ցածութիւն  
 է ոմանց ըրածն որ ամէն բան ու  
 նենալէն վերջը աւելորդ ծախ  
 քերու ալ չափ մը չեն դներ , ու  
 մէկ դիէն անգթութեամբ հար  
 կաւորն ալ չեն ուզեր տալ աղ  
 քատաց : Թէ որ աղջիկդ իրեն  
 հասակակից ու վիճակակից աղ  
 ջիկներէն վար վիճակի մը մէջ  
 բռնես՝ վտանգ է որ զինքը քեզ  
 մէ պաղեցրնես . ինքը կրնայ իր  
 չունեցած բանին վրայ սէր ձգել ,  
 և ուրիշի նախանձիլ . միտքը կը  
 դնէ թէ դուն խիստ ու կծծի  
 ըլլալովդ չես ուզեր որ ինքն ալ  
 ան բաները ունենայ . անով կըր  
 նայ ըլլալ որ անհամբերութե  
 սպասէ որ մը առաջ ինքնագլուխ



ըլլալու որ ինքզինքը ամէն տե-  
 սակ զեղխութեան տայ : Շատ  
 աւելի լաւ կը բռնես զինքը մի-  
 ջակ ճամբու մէջ, որ ամենէն  
 աղէկը ճանչցուած են ամէն ա-  
 տեն խելացի մարդիկներէն . ա-  
 նով կը հասկընայ թէ դուն կ'ու-  
 զես որ ինքը ամէն վայելուչ բան  
 ունենայ, և թէ խնայութիւն  
 ըսելով կծծութեան մէջ չես  
 իյնար, մանաւանդ թէ ամէն  
 տեսակ անմեղ զուարճութիւն-  
 ները կ'ուզես որ ունենայ . միայն  
 կ'ուզես զինքը ազատ պահել ան  
 մարդկանց անկարգութիւննե-  
 ըն՝ որոնց ունայնասիրութեանը  
 չափ չկայ : Մըջի հոգդ աս պիտի  
 ըլլայ որ ամենւից աչք չգոցես  
 անհամեստ բաներուն որ քրիս-  
 տոնէութեան հակառակ են : Մը  
 բանիս մէջ կրնաս հաւատոյ խը-  
 րատները հաստատելու համար  
 ցուցընել թէ այսպիսի համար-



ճակու թիւնները վայելչու թեան  
 ու մարդուս օգտին ալ դէմ են :  
 Աղջիկ տղայ մը իր ամէն հան-  
 գասու թիւնը վտանգի մէջ կը  
 դնէ թէ որ թեթեամիտ ու ան-  
 կարգ մարդու մը հետ կարգուի :  
 Աստի պէտք է ջանայ իմաս-  
 տուն , բարեկարգ , հաստատուն  
 ու ամէն պաշտօնի յարմար փե-  
 սայի մը հանդիպելու : Այսպի-  
 սի մարդ մը գտնելու համար  
 պէտք է համեստ ըլլալ , ու ամե-  
 նեին թեթեու թեան ու ծան-  
 ծաղամտու թեան նշան մը վրան  
 չերեցընել : Ար խելացի ու խո-  
 հեմ մարդը կ'ուզէ ունայնասէր  
 ընկեր մը ունենալ՝ որուն դրսի  
 վարմունքին նայելով տարակու-  
 սի առաքինի ըլլալուն վրայ :

Եայց քեզի մեծ օգուտ կ'ըլ-  
 լայ աս բաներուս մէջ թէ որ  
 կարենաս աղջկանդ սրտին մէջ  
 քրիստոնէական առաքինութի



սէրը հաստատել: Մի խրտեցը  
 ներ զինքը աստուածպաշտութե  
 նէ՝ անօգուտ խստութեամբ .  
 թող համեստ ազատութիւն մը  
 և անմեղ ուրախութիւն մը ու  
 նենայ . վարժեցուր զինքը ան  
 մեղ բաներով զուարճանալ, և  
 ֆնասակար զբօսանքներէ հե  
 ոու կենալ: Մ. յնպիսի ընկերու  
 թիւններ գտիր իրեն որ զինքը  
 գլխէ հանեն, օրուան մէջ ալ  
 այնպիսի խաղեր, զբօսանքներ  
 տուր իրեն, որ մնացած ատենին  
 մէջ ընելու գործքերէն անոնց  
 մով չպաղի: Ս. անա՛ որ Մ. ստու  
 ծոյ սիրոյն համը առնէ, ու մի  
 թողուր որ միտքը դնէ թէ Մ.  
 ստուած զօրաւոր ու անաչառ դա  
 տաւոր մըն է միայն՝ որ անդադար  
 զմեղ կը քննէ ու ամէն բանի  
 մէջ մեր վրայ խստութիւն կ'ը  
 նէ . հասկըցուր իրեն թէ որչափ  
 քաղցր է Մ. ստուած, ինչպէս կը



Հողայ մեր պիտոյքը ու մեր սը  
 կարութեանը վրայ կը խղճայ .  
 ընտանեցուր զինքը Մստուծոյ ի  
 բըն գթած ու կարեկից հօր մը  
 հետ : Մի թողուր որ միտքը  
 դնէ թէ աղօթքը ճանճրալի դա  
 տարկութիւն մըն է , և թէ ա  
 ղօթք ընելու ան ատեն կընստին  
 մարդիկ՝ երբոր մայքերնին ցը  
 րուած ասդիս անդին կը պտըտի :  
 Հասկըցուր իրեն թէ աղօթքը  
 անոր համար կ'ըլլայ , որպէս զի  
 մարդ ինքզինքը ժողովէ իր սրտին  
 մէջ զՄստուած գտնելու համար ,  
 վասն զի Մստուծոյ թագաւորու  
 թիւնը մեր սրտին մէջ է : Մ  
 ղօթքը ո՞ր և իցէ ժամանակ Մս  
 տուծոյ հետ խօսիլ է , որով մեր  
 յանցանքներն իրեն կը խոստո  
 վանինք , մեր պիտոյքը իրմէ կը  
 ինդրենք ու մեր պակասութիւն  
 ները շտկելու հարկաւոր եղած  
 շնորհքները իրմէ կ'առնենք :



Մղօթք է նաև մտիկ ընելը թէ  
 Մստուած ներքին լուծթէ մէջ  
 ինչ կ'ըսէ մեզի . « Սուայց զինչ  
 խօսի տէր Մստուած իմ » : Մ  
 ղօթք է երբոր մարդ աս բարի  
 սովորութիւնը կը ստանայ որ իր  
 ամէն գործքերը թէ մեծ ըլլան  
 և թէ պզտիկ՝ ուրախութեամբ  
 Մստուծոյ սիրոյն համար կ'ընէ :  
 Մղօթք է ամէն անգամ երբոր  
 մուցած ըլլանք՝ մտքերնիս բե-  
 ղել թէ Մստուծոյ առջևն ենք :  
 Մղօթք է երբոր մտքերնիս ցը-  
 րուող խորհուրդները իմանալ  
 նուս պէս մէկդի կը դնենք՝ ա-  
 ռանց անոնց հետ կուրտելով ա-  
 լելի լաւ մտքերնիս ցրուելու , և  
 առանց տագնաապելու անոնց նո-  
 ղէն նորէն մեր միտքը գալուն  
 վրայ : Վարդս ինքը իրեն պիտի  
 համբերէ , ու որչափ ալ միտքը  
 ցնդում ունենայ՝ ջնեղասրտի .  
 վասն զի ակամայ անմտադրու-



Թիւնները զմեզ Մատուծմէ չեն  
 հեռացրներ . ամէն բանէ ա-  
 ւելի Մատուծոյ հաճոյ եղածը  
 ան է որ մարդս խոնարհ համ-  
 բերուածեամբ միշտ պատրաստ  
 ըլլայ դէպ 'ի իրեն դառնալու :  
 Եւ մտարակուսիր որ ազնիւ աղ-  
 ջիկդ շուտով աղօթքի վրայ սեր-  
 կը ձգէ , թէ որ աղօթքի ճշմարիտ  
 ճամբան ցուցրնես իրեն : Մղէկ  
 աղօթք ընելու համար ոչ միտք  
 յոգնեցրնել պէտք է , ոչ սաս-  
 տիկ երեւակայու թիւններ և ոչ  
 զմայլական զգացմունքներ . այս-  
 պիսի բաները Մատուած երբոր  
 կ'ուզէ կուտայ մեզի ու կ'առնէ :  
 Թէ որ մէկը միտքը դնէ թէ ա-  
 ղօթքը այսպիսի զգայական ու  
 մեր սիրտը հանգչեցրնող բանե-  
 լու վրայ կեցած է , շուտ կը վը-  
 հատի , վասն զի այնպիսի զգայ-  
 մունքները շուտով կը դադրին ,  
 ու ինքը կարծէ թէ ամէն բան



կորսանցուց : Տայց դուն ըսէ ի-  
 րեն թէ աղօթքը կը նմանի  
 պարզ , ընտանի ու անուշ ընկե-  
 րութեան մը , մանաւանդ թէ  
 բուն ինքը աղօթքը աս ընկերու-  
 թիւնն է : Արժեցուր զինքը որ  
 իր սիրտը Նստուծոյ առջևը տա-  
 րածէ . իրմէ չբաժնուելու հա-  
 մար ամէն ջանք ընէ , և իրեն  
 հետ այնպէս վստահութեամբ  
 խօսի՝ ինչպէս որ մարդ առանց  
 քաշուելու կը խօսի իր սիրած  
 անձին հետ , որուն վրայ վստահ  
 ըլլայ թէ անիկայ ալ զինքը բո-  
 լոր սրտանց կը սիրէ : Շատ  
 մարդիկ որ բռնադատուած կեր-  
 պով մը կ'ընեն իրենց աղօթքը ,  
 այնպէս են Նստուծոյ հետ , ինչ  
 պէս որ կը վարուի մէկը այնպիսի  
 անձանց հետ՝ որոնցմէ կը պատ-  
 կառի , քիչ անգամ կը տեսնուի  
 հետերնին , ան ալ կարգը տեղը  
 երթայ ըսելով միայն՝ առանց



զանոնք սիրելու կամ անոնցմէ  
 սիրուելու . այնպիսւոյն ամէն ը-  
 րաճներն ալ պարզ արարողու-  
 թիւններ ու քաղաքավարութի-  
 ներ կը դառնան . կրնեղուի , կը  
 ճանճրանայ ու ժամ մը առաջ  
 ելլելու երթալու կրնայի : Մեղ-  
 հակառակն ճշմարիտ ջերմե-  
 ռանդները այնպէս կը վարուին  
 Մատուծոյ հետ՝ ինչպէս որ կը  
 վարուին իրենց մտերիմ բարե-  
 կամներուն հետ . ամենևին խօս-  
 քերնին չեն կշռեր , վասն զի գի-  
 տեն թէ որով կը զուրցեն . ամէն  
 ըսաճնին իրենց սրտին յորդու-  
 թենէն ու պարզութենէն առաջ  
 եկած է . հասարակ բաներու  
 վրայ կը խօսին Մատուծոյ հետ ,  
 որ են իր փառքը ու մեր փրկու-  
 թիւնը . մենք կ'ըսենք իրեն շրտ  
 կել ուզած պակասութիւննիս ,  
 կատարելու պարտքերնիս , յաղ-  
 թելու փորձութիւննիս , ու այն



անձնասիրութե փափկութիւն  
 ներն ու հնարքներն որ սանձել  
 կ'ուզենք : Ամէն բան կ'ըսենք  
 Աստուծոյ ու ամէն բանին պա-  
 տասխանը իրմէ կը սպասենք .  
 մտքերնուս մէջ կը նորոգենք իր  
 պատուիրանները , ու ինչուան  
 իր խորհուրդներն ալ կը մտա-  
 ծենք : Աւստի աղօթքը պարզ  
 արարողութեան համար եղած  
 խօսակցութիւն մը չէ . ճշմարիտ  
 բարեկամութեամբ եղած հա-  
 մարձակ խօսակցութիւն մըն է .  
 ան ատենը Աստուած մեր սրտին  
 բարեկամը կ'ըլլայ , հայր կ'ըլ-  
 լայ՝ որուն գրկին մէջ որդին մը  
 խիթարութիւն կը գտնէ , փե-  
 սայ՝ որուն հետ մարդս շնորհ-  
 քով մէկ սիրտ մէկ հոգի կ'ըլ-  
 լայ : Աղօթքով կը խոնարհի  
 մարդ առանց վհատելու . մեծ  
 վստահութիւն կ'ունենայ Աս-  
 տուծոյ , ու նաև իր անձին վրայ .



ամենևին չմոռնար բնաւ իր  
 պակասութիւններն ուղղելը, ու  
 անճնասիրութե՛ն խաբէբայ խոր-  
 հուրդներուն ամենևին ականջ  
 չկախեր: Թէ որ ազնիւ աղջ-  
 կանոջ սրտին մէջ աս պարզ ու  
 հիմնական աստուածպաշտուիք  
 հաստատելու ըլլաս՝ ամէն բանի  
 մէջ ալ շատ յառաջադիմութի  
 կ'ունենայ: Աղջ լեր:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԱԵՆԻՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ



## ՅԱՆԿ ԳԼԽ ՈՑ



ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . .	5
ԳԼ. Ա. Թէ որչափ հարկաւոր է աղջիկ տղոց դաստիարակութիւնը	9
ԳԼ. Բ. Սովորական դաստիարակութեանց մնասնէրը . . . . .	18
ԳԼ. Գ. Դաստիարակութեան առաջին հիմունքը որո՞նք են . . . . .	27
ԳԼ. Դ. Զգուշանալու է որ տղաք իրենց ամէն տեսածին չհետևին	45
ԳԼ. Ե. Ուրիշի ձեռքով եղած կըրթութիւններու վրայ, և թէ շատ պէտք չէ նեղը ձգել տղաքը . . . . .	49
ԳԼ. Զ. Թէ ի՞նչ պատմութիւններ պատմելու է տղոց, և ի՞նչ կերպով . . . . .	111
ԳԼ. Է. Թէ ի՞նչպէս պէտք է տղոց միտքը սպաւորել կրօնքի սկզբունքները . . . . .	132



[54.]

54

ԳԼ. Ը. Կրթութիւն Աստուծոյ  
տաար պատուիրանայր, Եկեղե-  
ցւոյ խորհրդոց ու աղօթքի վրայ

ԳԼ. Թ. Աղջիկ տղոց այլ և այլ  
պակասութիւններուն վրայ գի-  
տողութիւններ . . . . .


ԳԼ. Ժ. Գեղեցկութեան ու զար-  
դարանքի ընդունայնութիւնը .

ԳԼ. ԺԱ. Կրթութիւն կանանց  
իրենց ունեցած պարտքերուն  
վրայ . . . . .

ԳԼ. ԺԲ. Գարձեալ կանանց  
պարտքերուն վրայ . . . . .

ԳԼ. ԺԳ. Գաստիարակ կանանց  
վրայ . . . . .

Ազնուական տիկնոջ մը կը աղջկան  
գաստիարակութեանը համար  
խրատ . . . . .





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0032099

*Handwritten text, possibly "Հիմնարար Գիտ. Գրադ."*